

## ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՆԱՏԱՇԱ ՊՈՂՈՍՅԱՆ

# ՈՒՍՈՒՑՉԻ ԻՄ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ

Ստեփանակերտ  
«Դիզակ պյուս» հրատարակչություն  
2013

ՀՏԴ-371  
ԳՄԴ-74.2  
Պ 797

**Գիրքը պատրավում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարության  
երաշխավորությանը**

## **Նվիրում եմ բոռնիկիս՝ Նարեկին**

Պողոսյան Ն.  
Պ 797 Ուսուցչի իմ թղթապանակը/ Ն. Պողոսյան.-  
Ստեփանակերտ: Կիզակ Պլյուս, 2013.- 144 էջ:

Նավաշա Պողոսյանի «Ուսուցչի իմ թղթապանակը» գիրքը ուսուցողական այութերի յուրադիպահ ամփոփագիր է: Գրքում զեկնեղված են ուսուցչի մանկավարժական փորձի այնպիսի ուշագրավ արդյունքներ ու արժանագրություններ, որոնք ուսանելի են և ընդօրինակման արժանի: Բոլոր նյութերն արդիական են և համարայլ կրթության արդի բարեփոխումների ընթացքին: Գրքում զեկնեղված նյութերի առանցքում նորարարական մանկավարժության նոր դեմքնողականներն են, առաջադիմ մարքերը, որոնք շաղախված են սրբեղագործող ուսուցչի համարժակ մարքերով ու յուրադիպահ առաջարկներով: Գիրքը ուսանելի և օգրակար կլինի ոչ միայն հայոց լեզվի և գրականության ուսուցիչների, այլև հանրակրթության քննակալառի

ՀՏԴ-371  
ԳՄԴ-74.2

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք հեղինակի մասին.....	5
Սարդու խոսքը նրա մտքի և ներաշխարհի անսխալ նկարսգիրն է.....	7
Ուսանելի փորձ.....	8
Ուսուցիչն արարող ու ստեղծարար	
կամ նախարանի փոխարեն.....	9
Դասավանդման արվեստը միայն առարկային	
լավ տիրապետելը չէ (մեթոդամանկավարժական).....	14
Ուսուցիչը ժամանակի խաչմերուկում	
(մասնագիրական-դիսական).....	19
Դասագործնաբացում ուսուցման մեթոդի	
ճիշտ ընտրությունը՝ որակի և արդյունավետության	
երաշխիք (մեթոդական).....	24
Երկու բանաստեղծություն,	
ուսուցման մեկ մերոդ (մեթոդական).....	29
Գրողի բանաստեղծական արվեստի ուսումնախրությունը՝	
որպես աշակերտների ստեղծագործական մտածողության	
գարգացման միջոց (գրականագիրական).....	34
Բանաստեղծական տեքստի ուսումնախրությունը՝	
որպես աշակերտների խոսքի գարգացման	
անփոխարինելի միջոց (մեթոդական).....	39
Գեղարվեստական ոճը աշակերտների ստեղծագործական	
շարադրություններում (ուսուցողական).....	46
Երբ գրողի անհատականության ուսումնախրումը	
դառնում է աշակերտի անձի ծևավորման ու	
դաստիարակության միջոց (գեղագիրական).....	52
«Սպանված աղավնի» կամ գրական կերպարի	
արտացոլումը մերօրյա աշակերտության	
ընկալումներում (մասնագիրական - դիսական).....	57
Երբ ուսուցման մեթոդը կիրառվում է	
ստեղծագործական մոտեցմամբ (մեթոդական).....	63
Երբ դպրոցականի հարցը դառնում է	
ուսուցչի մտահոգությունը (մեթոդական-ուսուցողական).....	69

<i>Հիշողություններ, որ հայոց լեզվի հետաքրքրաշարժ</i>	
գաղտնաբաններն են տանում ( <i>ուսուցողական</i> ).....	76
<i>Լեզվական սխալները՝ չինացության</i>	
հետևանք ( <i>ուսուցողական</i> ).....	82
Երբ ինքնակատարելագործումը	
դառնում է ներքին պահանջ.....	89
<i>Ուսուցիչ-ծնող կապը՝ դպրոցական</i>	
կարգապահության առանցք.....	93
<b><i>Թեմայի ուսուցման սեղմագրի Անուշներ</i></b>	
<i>Բաֆֆու կյանքը</i> .....	98
<i>Ակնել Բակունիցի «Ալպիական մանուշակ» պատրմվածքը</i> .....	104
<i>Շաղկապը՝ որպես խորքի մաս</i> .....	108
Ամենամյա միջոցառում, որ նպաստում է	
աշակերտների ստեղծագործական	
երևակայությանը ( <i>ուսումնադասարխարակչական</i> ).....	111
<i>Ուսուցչի իմ քոքապանակը</i>	
կամ որպես վերջաբան.....	116
<i>Դիմանկարի փորձ (<i>Սելանյա Սիլոնյան</i>)</i> .....	118
Երբ դասը դառնում է գրական բնմադրություն, իսկ պոեզիան՝	
ձշմարդությանը վերադառնալու ճանապարհ	
( <i>Արմինե Սուրադյան</i> ).....	123
<i>Նարաշա Պողոսյանը՝ «Հայուիի»</i>	
ուսդիրիակորդաշարի հյուր	
(հարցազրույց)- <i>Սելանյա Սիլոնյան</i> .....	129
<i>Կոչմանը հավալրարին</i>	
(հարցազրույց)- <i>Զարինե Սառաջյան</i> .....	140

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Մանկավարժի ինքնորոշման և ինքնազմահատման, ինչպես նաև մասնագիտական զարգացման միջոցներից մեկը անհատական թղթապանակն է: Գրքի խորագիրն արդեն վկայում է հայոց լեզվի և գրականության այդ շնորհաշատ ուսուցչունի մասնագիտական պատրաստվածության ու արհեստավարժության փաստը: Հաղորդակից լինելով ժամանակակից մանկավարժության տեխնոլոգիաներին՝ խորհրդային մանկավարժություն ուսանած մանկավարժը ձկուն է իր հայացքների, համոզնությունների ու դիրքորոշումների մեջ: Ուշագրավ է թերևս այն, որ մասնագիտական թեմատիկայից զատ, որ հետաքրքիր ձևով ներկայացվում է զբանական ուսուցչունի ներկայանում է ճշմարիտ մտավորականի, ճշմարիտ հայի կերպարով ու կեցվածքով: Թղթապանակի տարրողությունն ընդգծում է նրա մասնագիտական ու անձնային հասունության մակարդակը, ինքնակըրթության համալիր ուղղությունները:

Ակնհայտ է նրա հոգեբանամանկավարժական, մասնագիտական ու մեթոդական պատրաստվածությունը (մանկավարժական տեխնոլոգիաներ, ուսուցման ձևեր ու հնարներ, դեկավարելու որակներ), որը ենթադրում է նրա՝ մանկավարժի ազդեցության արվեստը, և այդ արվեստը հրապուրիչ է դարձնում նրա խորը մարդասիրությունն ու աշխարհը գեղագիտորեն ընկալելու, արտացոլելու և սերունդներին մատուցելու հակումը: Ահա այսպիսի ուսուցիչներով, որոնք, ըստ Էության, ուսուցչական առաջնային են, պետք է հետզհետեւ համալովի Արցախի բարձրակարգ ուսուցչության բանակը:

Հասարակական կյանքում կատարվող փոփոխությունները, զիտական նվաճումների արագ աճը, մրցակցությունը փոխել են հանրակրթությանը ներկայացվող պահանջները: Այսպիսի պայմաններում մասնագիտական ու մանկավարժահոգեբանական անհրաժեշտ գիտելիքներով զինված ու հասարակական առողջ կենսադիրք ունեցող ուսուցիչներն օդի ու ջրի պես են անհրաժեշտ:

Թերթելով Նատաշա Պողոսյանի զբքի էջերը՝ համոզվում ենք, որ զործ ունենք իր տեսակի մեջ եզակի «առաջնորդ» ու «զինվոր» մտավորականի հետ: Ժամանակն իր պատվերով է ծնել ուսուցչի

այս հրաշալի կերպարին՝ կերպար, որում զուգակցվել են դասական ուսուցիչն ու հայ մանկավարժը, ավանդույթներ չշրջանցող ու միաժամանակ ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներին ու մեթոդներին տիրապետող մասնագետը, ի վերջո՝ մարդ, որ մտահոգ է սերնդի ու նաև հասարակության արժեքային համակարգի ձևավորման խնդիրներով:

Նիկոլ Աղբալյանը մի առիթով ասել է. «Պետք է մոլեռանդ հայություն ստեղծել»: Եվ մոլեռանդ հայություն ստեղծելու նախապայմաններից մեկը դիտվել է ազգային բարձր գիտակցությունը: Մոլեռանդ հայ մտավորականի կերպար է այս ուսուցչի կերպարը, որ փակում է անկումների ճանապարհը:

Հաջողություն և ստեղծագործական եռամդրություն մաղթենք Նատաշա Պողոսյանին և ասենք, որ այսպիսի ամբողջական ու ճիշտ կերպարներն ընդօրինակման նյութ են դառնում ոչ միայն աշակերտության, այլև ուսուցչության համար: Այսպիսի կերպարների իշխանությունը ցանկալի է ու պահանջված:

**Լուսինե ՎԱՐԱԽԱՆՅԱՆ**  
**հոգեբանական գիտությունների բեկամածու,**  
**ՀՂՀ ԿԳ նախարարության մասնագիտական**  
**կորուրյան և գիտության բաժնի վարիչ**

## **ՄԱՐԴՈՒ ԽՈՍՔԸ ՆՐԱ ՄՏՔԻ ԵՎ ՆԵՐԱՃԽԱՐՀԻ ՎՆՍԽԱԼ ՆԿԱՐԱԳԻՐՆ Է**

Նատաշա Պողոսյանի՝ «Ուսուցչի իմ թղթապանակը» գրքում ես բացահայտեցի երևելի մի հայուհու, ով համալրում է Արցախի նվիրյալ մտավորականության շարքերը: Ազգի ու երկրի արժանապատիվ ապագայով մտահոգ ուսուցչուհին պատվով ու սրբությամբ է կատարում կրթելու և դաստիարակելու իր առաքելությունը: Անտրտունջ է նա ու մեծահոգի, մշտապես գիտակցում է այսօր ցանած սերմի ու վաղվա բերքի բարձր արժեքը, արած-թռղածի կարևորությունը՝ երկրի լուսավոր ապագայի կերտման գործում: Եվ դրանում է նա տեսնում իր ջանքերի փոխհատուցումը:

Անգնահատելի է Նատաշա Պողոսյանի դերը գրքի ու գրականության նկատմամբ մատադ սերնդի մեջ սեր ու հետաքրքրասիրություն ձևավորելու գործում: Սրտացավ ուսուցչուհին անընդհատ ահազանգում է «ոգու սով»-ի մասին, որպեսզի այսօրվա սխալներն ուղղելու հոգսը վաղվա ուսերին չծանրանա: Ավելին, Ն.Պողոսյանը գիրքը տանում է դեպի հասարակություն, դեպի կենսական ոլորտ, մի հանգամանք, որով և երաշխավորվում է ազգային ամուր արժեհամակարգը:

Նատաշա Պողոսյանին հաջողվում է գրականության կարգավորիչ ներուժը, ինչպես ասում են, մշտապես գործողության մեջ պահել երիտասարդության հոգում: Այս առումով «Ուսուցչի իմ թղթապանակը» գիրքը սուկ մանկավարժամեթոդական ուսանելի հրապարակումների ժողովածու չէ: Այն կենդանի խոսքի բացառիկության գաղափարի յուրատիպ արտահայտություն է, սերունդներին հայեցի կրթելու և դաստիարակելու կոչ:

Ստեղծագործական եռանդ ու ավյուն իր գործի անխոնջ նվիրյալին:

**Վարդան ՀԱԿՈԲՅԱՆ**  
**LՂՀ գրողների միության նախագահ,**  
**ՀՀ մշակույթի վասպակավոր գործիչ**  
**բանասիրական գիլուրյունների**  
**ղոկուր, պրոֆեսոր**

## ՈՒՍԱՆԵԼԻ ՓՈՐՉ

Ն. Պողոսյանի՝ «Ուսուցի իմ քրթապանակը» ձեռնարկը իր կառուցվածքով ու բովանդակությամբ ինքնատիպ է: Այն հեղինակի մանկավարժական աշխատանքի վերլուծությունն է, աշխատանքային ուսանելի փորձը: Ուսուցիչը, առավել ևս սկսնակ ուսուցիչը, գրքի էջերում իրեն հետաքրքրող շատ հարցերի պատասխաններ կարող է գտնել՝ ինչպես ուսուցանել այս կամ այն լեզվական կամ գրական նյութը՝ համատեղելով ավանդական ու արդի մեթոդները, ինչպես զարգացնել աշակերտների ստեղծագործական կարողությունները, նրանց ինքնուրույն խոսքը, ինչպես գրողի կենապրության ուսուցումը ծառայեցնել սովորող անձի ձևավորմանը կամ գրական երկը ծառայեցնել հիմնական նպատակին՝ սեփական մտքերը պատկերավոր լեզվով արտահայտելու կարողությունների զարգացմանը: Եվ այս ամենը շարադրված է գրագետ ու մատչելի լեզվով, ուստի ընթերցվում է հետաքրքրությամբ:

Թերթում ենք գրքի էջերը, և մեր առաջ հառնում է մերօրյա ուսուցիչը՝ իր մասնագիտությանը տիրապետող, մայրենի լեզվի խեղաքյուրումները չհանդուրժող, ձեռք բերածով չզրիացող, իր սաների հաջողություններով հպարտացող, արդարության զատագով այն ուսուցիչը, որը չի տեսնում իր աշակերտներին միայն իր սեղանի հետևից, այլ կարողանում է կարդալ ու հասկանալ երեխայի հոգին և նույնիսկ ամենաանուղղելի երեխայի մեջ տեսնում ու զարգացնում է լավն ու դրականը:

Գիրքը գրված է սիրով ու նվիրումով և երաշխավորվում է տպագրության՝ որպես մայրենիի ուսուցիչների մեթոդական ձեռնարկ:

**Գայանե ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
**ԼՂՀ կրության և զիգուրյան նախարարության**  
**կրության պետական գենչության հայոց լեզվի և**  
**գրականության պետուչ**

**Ուսուցիչը հավերժություն է: Ոչ ոք չի կարող ասել, թե երբ է  
ավարտվում նրա ազդեցությունը:  
Նենո՞ի Աղամս**

## **ՈՒՍՈՒՑԻՉՆ ԱՐԱՐՈՂ ՈՒ ՍՏԵՂԾԱՐԱՐ ԿԱՄ ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՎԵՆ**

Այս աշխատանքը, չգիտեմ, ստեղծարար մանկավարժական գործունեության փոքրիկ հիշատակարան անվանե՞մ, թե՞ հետպատերազմյան տարիների իմ մանկավարժական աշխատանքի հուշամատյան՝ ամփոփված մերողական, ուսուցողական, մասնագիտական, գրականագիտական և այլ նյութերով, տարբեր միջոցառումների, բաց դասերի վերլուծություններով, գնահատանքի խոսքերով...

Աշխատում եմ Մարտակերտի Վլադիմիր Քալայանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցուիչի, և իմ կուտակած աշխատանքային փորձով ցանկանում եմ համեստ նպաստու քողնել մանկավարժության ասպարեզում՝ դրանով իսկ փորձելով յուրատիպ ձևով ներկայացնել ուսուցչի բարդ ու պատասխանառու աշխատանքի նրբությունները. Գուցե դրանով օգնած կլինեմ նաև հայոց լեզու և գրականություն դասավանդող ուսուցիչներին, ընդհանրապես՝ մայրենինի նվիրյալներին:

Որպես աճող սերնդի կրթության և դաստիարակության վեհ գործի առաքյալ՝ ուսուցիչը միշտ էլ մնում է նորարար, նրա յուրաքանչյուր դասը դառնում է գեղեցիկ ստեղծագործություն, երբեմն նաև՝ յուրատիպ քեմադրություն, որ հրամցվում է որպես հաճելի անակնկալ, որպես նվիրական արարողություն:

Դասավանդման արվեստը միայն առարկային լավ տիրապետելը չէ: Այս հոգեհման մի գործողություն է, որ զուգակցվում է ուսուցչի անձնային որակների, մանկավարժական ոռմանտիկայի ու ոգեշնչվածության, պարտքի ու պատասխանատվության զգացման հետ: Իսկ ուսուցչի առաքելությունը բոլոր ժամանակներում էլ մնում է նույնը. նա խորազգա մի անհատականություն է, որ հավատարիմ պիտի լինի իր պատվարել կոչմանը, լինի ուսուցանող և խորհրդատու, ստեղծագործող և նորարար, նրբանկատ ու բարի:

Ուսուցիչն իր կերպարով, կյանքով ու ծավալած գործունեությամբ, իր ապրելակերպով մասնակիցն է դառնում գրողի կյանքի կամ գրական երկի վերլուծությանը՝ որպես առաջալ, լույսի զահակիր՝ մաքառումներին դիմակայելու անհողողող կամքով, հաստատակամությամբ:

Նրա կերպարն առանձնակի կարևորություն է ստանում հատկապես գրականության դասերին: Նա ընդօրինակման կերպար է դրայոցականի տարիքային գրեթե բոլոր փուլերում: Եվ միայն ուսուցիչը չէ, որ ապրումակցում է, աշակերտները ևս ունեն խորը ապրումակցման զգացում: Եվ հենց այստեղ է, որ ընդգծվում է ուսուցչի կերպարն ամբողջացնող անձնային ու մասնագիտական որակների անհրաժեշտությունը:

Ահա մեր օրերի ուսուցիչը՝ գրողների հետ հանդիպումներում՝ գեղարվեստական խոսքի ճշմարիտ արժեքների գիտակցումով, բանաստեղծական արվեստի գրականագիտական վերլուծությամբ, որ փորձում է իրական գրականության միջոցով նպաստել աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացմանը և գրողի բանաստեղծական արվեստի ուսումնասիրությունն աշակերտների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց է դարձնում: (*Վ. Հակոբյանի բանասպեհծական արվեստը*):

Խորհրդային տարիներին, երբ ուսուցչակենտրոն ուսուցում էր, աշակերտն էր ձգուում գիտելիք ստանալ և, որքան հնարավոր է, շատ տեղեկություններ վերցնել ուսուցչից: Այսօր մենք, դպրոցը, աշակերտությունն այլ իրականություն ենք ապրում. առկա է սովորողների մեջ ուսուցման նկատմամբ հետաքրքրությունների ու դրական դրդապատճանների առաջացման, ասել է թե՝ ուսուցման նոր մշակույթի ձևափորման խնդիր: Կրթական շափորչիշները ամրագրում են ինչ սովորեցնելու շափանիշները, բայց թե ինչպես դա կարվի, բողնվում է դասավանդող ուսուցչի հայեցողությանը: Այս առումով շատ են ուսուցչի անելիքները. կենսունակ պահել անաղարտ հայերենի իմացությունն ու հայերենով մտածելու կարողությունը, հաղորդակից դարձնել նրանց գեղարվեստական խոսքի ուժին ու հմայքին՝ փորձելով դրանք ծառայեցնել գեղեցիկը ճանաչելուն, գեղեցիկի դիտակետով աշխարհը արտացոլելու ունակության ձևափորմանը: Շարադրանքի և գեղարվեստական խոսքի գրագիտություն սովորեցնող ու-

սուցիչը հենց այսպես է նպաստում աշակերտների ինքնուրույն խոսքի ձևավորմանն ու զարգացմանը:

Ուսուցիչն է, որ իր դասավանդման մանկավարժական փորձով, որի մեջ ամփոփված են մասնագիտական արհեստավարժությունն ու բառաֆոննը, մատուցվող նյութի նաև համակողմանի տեղեկացվածությունը, զարգացնում է աշակերտների պատկերավոր մտածողությունն ու խոսքը, նպաստում նրանց ազատ և անկաշկան արտաքին և գրավոր խոսքի զարգացմանը, սեփական մտքերը դիպուկ ու պատկերավոր լեզվով արտահայտելու կարողության ձևավորմանը, բանաստեղծական և, առհասարակ, գրական տեքստի ուսումնասիրությունը դարձնում խոսքի զարգացման անփոխարինելի միջոց: (*Վ. Տերյանի «Տիրություն» բանասրեղծության ուսուցումը նոր մերուդարձություն*):

Դասավանդման ավանդական ձևերին զուգահեռ՝ ուսուցիչը կիրառում է նոր մեթոդներ: Դասագործընթացում ուսուցման մեթոդի ճիշտ ընտրությունը որակ է ապահովում, եթե տեղին է օգտագործվում: Յուրաքանչյուր մեթոդ ունի իր առավելությունը, որը դասագործներացը տանում է դեպի աշակերտակենտրոն ուսուցում: Սա խևապես ուսումնադաստիարակչական գործընթացի յուրատիպ ուսագնավարություն է, որի ճիշտ կատարողը ուսուցիչն է: (*Ավ. Իսահակյանի «Մի մրահոն աղջիկ լրեա» բանասրեղծության ուսումնասիրությունը ԳՈՒՄ մերուդություն*):

Յուրաքանչյուր ուսուցիչ գիտի, որ ուսուցման մեթոդների հիմքում ընկած է աշակերտների ինքնուրույն ուսուցման գործունեությունը, և կան մեթոդներ, որ կարծես այս կամ այն ստեղծագործության վերլուծության համար են նախատեսված, և հնարավոր է ուսուցման մեկ մեթոդով հիմնայի միանությամբ համեմատության մեջ բանաստեղծությունների լավագույն վերլուծություն կատարել, որը շատ դյուրին է և ընկալելի: Այլևս դասագործընթացն ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների պարզ փոխանցում չէ, այլ՝ աշակերտների ստեղծագործական ու կրեատիվ մտածողության խթանում:

Որպես ուսուցչի մտահղացում՝ կարելի է ուսումնասիրել երկու բանաստեղծություն՝ ուսուցման մեկ մեթոդով: (*Վ. Դուրյանի «Միրել» և «Դրժել» բանասրեղծությունների ուսուցումը «Վենի դիագրամ» մերուդություն*):

Ուսուցման լավ ու վատ մեթոդներ չկան, ուղղակի պետք է դրանք նպատակային ու ճիշտ օգտագործել, նյութին համապատասխան: Երբեմն հարմար է օգտագործել մեթոդը որոշ լրացումներով, այսինքն՝ ուսուցման մեթոդը ենթարկում ենք, այսպես ասած, ստեղծագործական լրամշակման: Սա էլ ուսուցչի ստեղծագործական մտահղացումն է, քանի որ ցանկացած դասանյութ կարելի է տարրեր մեթոդներով ուսումնասիրել, սակայն ընտրությունը կախված է ուսուցչից, այն չպետք է կամայական լինի և աննպատակահարմար: (*Մեծարենցի գիշերերգերի վերլուծություն «Մանրապակում» մեթոդով*):

Ուսուցիչը գտնվում է նոր բացահայտումների առաջ և յուրօրինակ ձևով բացահայտումների է մղում աշակերտներին: Գրական կերպարի նորովի ընկալումը ևս տանում է դեպի աշակերտակենտրոն ուսուցում: Մեր օրերին համահունչ լուսաբանվում է գրական կերպար՝ նորովի մեկնաբանությամբ, իսկ ուսուցիչը պետք է ուղղողի աշակերտներին, որպեսզի շեղմեն կերպարի ճիշտ ընկալումից: Գրական կերպարի նորովի վերլուծությունն աշակերտների մոտ դաստիարակում է մարդասիրության, արժանապատվության բարձր հատկանիշներ: (*Նար-Դուի «Ապանկած աղավնի» վիպակ: Սառայի կերպարի վերլուծություն*):

Գրողի անհատականությունն ընդգծող կենսագրականի մատուցումը ևս լավագույն որակներ է ապահովում մատադ սերնդի դաստիարակության գործում, իսկ գրականությունն այն առարկան է, որը հզոր ուժ ունի և կարելի է նրանով ներազդել աշակերտի ներաշխարհի վրա, ուստի գրականության ուսուցչից շատ բան է կախված: Այստեղ է, որ գրողի անձնական կյանքը դառնում է դաստիարակության միջոց, նրա ապրումները գեղեցիկի գագողություն են առաջացնում կյանքի, աշխարհի ու նրա գեղեցկությունների նկատմամբ: (*Մոլոցանյան օրերի շրջանակներում գրողի նամականու շարքի ուսումնասիրություն*): Այս գործընթացն իրավես նպաստում է աշակերտների արժեքային համակարգի ձևավորմանը:

Արտադասարանական միջոցառումներն ուսուցչի աշխատանքի հայելային անդրադարձն են, նրա ծավալած գործունեության յուրատեսակ նշանողը: Արտադասարանական յուրաքանչյուր միջոցառում նպաստում է աշակերտների ստեղծագործական մտածողու-

թյան և երևակայության զարգացմանը: (*Գրական ցերեկույթ, ինկուլկավուալ իսադ լավագույն պատի քերքերի և շարադրությունների մրցույթ և այլն*):

Ուսուցիչը պետք է տիրապետի հրապարակային խոսքի արվեստին, ունենա հարուստ արտաքին խոսք: Թերևս երեխաների վրա ազդեցության ու, այսպես ասած, մանկավարժական ներգործության միջոց է ուսուցչի արտաքին խոսքը: Նա նաև այսօրվա մամուլը հեղեղած լեզվական աղավաղումների դեմ պայքարի գլխավոր ջատագովն է: Լեզվական ամեն մի շեղուն առանձին նարդկանց կողմից է սկսվում և հետո միայն դառնում ընդհանրական, հետևաբար մայրենիի ուսուցիչը պետք է ուսուցանի անխաթար ձևերին վերադառնալու ուղին դպրոցում, տաճը, հասարակական վայրերում, տպագիր ու բանավոր խոսքում: Նա պետք է նաև հասարակական ակտիվ կենսադիրք ունենա ու ապրի հասարակության՝ որպես դաստիարակող միջավայրի հոգսերով ու խոհերով: Նրա խոսքը պետք է պահանջված լինի ոչ միայն արտադասարանական, այլև հասարակության տարբեր ոլորտներում կազմակերպվող միջոցառումներին:

Ուսուցանող, սերմնացան, արարող և ստեղծարար, ճշմարիտ մտավորական՝ հպարտ կեցվածքով, խոհերով ծանրաբեռ, մտքի պլացքով՝ համոզված, որ մանկավարժությունն արվեստ է, ստեղծագործական բերկրանք:

Իսկ ուսուցչի թղթապանակը ամփոփում է նրա քրտնաջան ներկան, միաժամանակ ուրվագծում է և ապագայի համայնապատկերը՝ կերտելով կենսագրություն, ուսուցչի մանկավարժական գործունեության տարեգրություն: Ստեղծենք ուսուցչի մեր թղթապանակը՝ ծառայեցնելով այն մատադ սերնդին կրթելու վեհ ու անբասիր գործին:

**Նարաշաւ ՊՈՂՈՍՅԱՆ**  
**Մարդակերպի Վե Բալայանի անվան**  
**միջնակարգ դպրոցի հայոց լեզվի**  
**և գրականության ուսուցչուիի**

**ԴԱՍՎԱՆԴՄԱՆ ԱՐՎԵՏԱԾ ՄԻԱՅՆ ԱՌԱՐԿԱՅԻՆ ԼԱՎ  
ՏԻՐԱՊԵՏԵԼՔ ՉԵ  
(մեթոդամնկավարժական)**

Իմ մանկավարժական-ստեղծագործական որոնումների ճանապարհին հարաբերվել եմ շատ ուսուցիչների և աշակերտների հետ, ականատեսը դարձել տարրեր երևոյթների, որոնք ինձ անշափ զարմացրել են, քայլ որոշ դեպքերում էլ ուսանելի էին:

Բոլորին հայտնի է, թե երեխսայի վրա ինչ ազդեցություն ունի ուսուցիչը, ուստի նպատակ չունեմ ստեղծելու իդեալական ուսուցչի և իդեալական աշակերտի կերպարներ: Տարբեր են ուսումնական առարկաների ուսուցիչները, որոնք սովորողների ստեղծագործական երևակայության և մտածողության զարգացման համար պետք է հնարավորություններ ստեղծեն:

Դասավանդման արվեստի գաղտնիքը ստեղծագործական դիրքորոշում ունենալը կարևորելի է: Դասին կենսունակություն է հաղորդում ստեղծագործական մոտեցումը, որն այն դարձնում է իմացականորեն և հուզականորեն հագեցած:

10-րդ հունանիտար դասարանում Պետրոս Դուրյան էի անցնում: Նախապատրաստվում էի բաց դասի՝ նվիրված բանաստեղծի մահվան 140-րդ տարեկանին: Իմ հարցին, թե Դուրյանի երևակայական գեղեցկուին լինելու դեպքում աղջիկներն ի՞նչ կանեին, որ երիտասարդ բանաստեղծը չմերժվեր և փրկվեր վաղաժամ մահվան դառը շնչից, նրանք վարանեցին մի պահ, նույնիսկ հրաժարվեցին, թե չեն կարող նման իրավիճակ պատկերացնել:

Սեղանին դրեցի մի փոքրիկ քանդակապարդ արկդ և առաջարկեցի իրենց մտքերը գրել և գետեղել այդտեղ: Բաց դասի ժամին ուսուցիչների և աշակերտների հետաքրքրասեր հայացքների ներքո արկդից հանեցի նրանց գրառումները: Իրենց ցանկությամբ էլ բարձրաձայն ընթերցեցին: Հիացած էին աշակերտների ինքնուրույն աշխատանքով: Դասարանի աշակերտուիկ Մարինե Հարությունյանի խորքերը սրտաբուխ էին. «**Պատիվ կլիներ ինձ համար լինել Սեծն Դուրյանի բանասպեղծությունների երևակայական գեղեցկուիին, լսել բանասպեղծի գեղեցիկ և խորհրդավոր երգերը**

**Բույլ մը նայվածք, փունջ մը ժայիկ,  
Քուրա մը խոսր, դյուրեց իմ սիրու... »:**

Հետաքրքիր էին Անուշ Մինասյանի մտքերը: Այդ ինքնանփոփ և համեստ աղջիկը հուզումնառատ տողեր էր գրել. «*Օ՛, սիրելին, այդ խորերն ինձ են հասցեագրված, դրանք այնքան ու ոռմանգիլ են և լցված սիրո բույրով ու քննչանքով: Կուզենայի աշնան ուկեզօծ գորգի վրայով, իրար չեռք բռնած, քամու նվազակցությամբ պարեինք մեր սիրո և հիշողության վայր...»:*

Աշակերտուիհներից Աննա Օհանյանը պատկեր էր ստեղծել. «Երախբագիպուրյամբ ես, երկնագույն երկնի ճերմակ ամսվին նազած, հասա խավար սիրո գումար: Մեծ բանագեղձը զամված էր մահճակալին, լուս հառաչանքներ էր հղում բոլորին, նրա դեմքին մրություն էր, բայց երբ գեսալ իր երեսական սիրո գիրուհուն, կյանքի լոյս բացվեց նրա դեմքին...»:

Որքա՞ն նրբություն և հուզմունք կար Լիլիթ Հարությունյանի տողերում: Զայնի մեղմ ելեւշները մեզ տարան «Սկյուտարի սոխակի» համեստ բնակարանը: «Երևակայությամբ ես Գուրյամի մոտ էի, նույն սենյակում: Նա արդեն անկողնային վիճակում էր: Ես նազեցի նրա կողքին, նա բռնեց իմ չեռքը և շշնչաց. «Գեղեցիկ կյանք մ ալ կա, սերն է այդ...»: Նա հիանում էր իմ վարսերով, իմ խորով և, ինչպես ինքն է ասում, դյուքսական հայացքով: Նա համբուրում է ճակակս և ասում. «Ես չեմ ուզիլ մեռնիլ և կ'փրկվիմ միայն քեզնվ»:

*Այս խորերն ապշեցնում են ինձ, բանում մի ուրիշ աշխարհ: Փորձում եմ փրկել նրան, բայց հոգուս և մարմնիս անհաշպ հակառակություննից սասպիր ալեկոծվում է իմ անքանաշխարհը»:*

Սերը բնության կողմից մարդուն պարզեցած ամենաթանկ արժեքներից է: Պատանեկան շրջանում այն ամենաքաղցրն ու ակնկալվածն է լինում: Իրար հանդեպ ունեցած համակրանքը պատանի աշակերտները փորձում են սկզբից գաղտնի պահել, բայց միշտ չեն, որ հաջողվում է: Ես՝ որպես ուսուցիչ և դաստեկ, չափազանց զգույշ և նրբանկատ եմ այդ հարցում:

Մեզ առանձնապես անակնկալի բերեց դասարանի տղաներից Վարդանը, որն, ընդհանրապես խուսափում էր ստեղծագործելուց, առանձնակի հետաքրքրություն չուներ դասերի հանդեպ: Ըստ Էության, միջավայրը ստեղծագործական էր նաև Վարդանի համար: Կարդացի նաև նրա գրած տողերը: Անպատասխան սիրո խոստ-

վանություն էր դա. «**Ես Էլ Դուրյանի նման մերժված և անփոխադդարձ սիրո զգացումն ունեմ: Մեր դպրոցի գեղեցկուհին վաղուց էր գրավել իմ ուշադրությունը, և այսօր առիր է, որ կարողանամ անկեղծանալ. «Դու դարձար իմ կյանքի իմաստը, երջանկությունը, ես խոսքանում եմ անդավաճան նվիրվել քեզ: Հանուն քեզ պարասար եմ ամեն ինչի: Քո մեջ գենանում եմ բարություն, ազնվորյուն, հապարփուրյուն, համեսպուրյուն»»:**

Սեփական ուժերի նկատմամբ միշտ անվստահ էր նա: Բայց այդ աշակերտի ոգլուղությունն այդ օրն այնքան վարակող էր, որ ինձ հանձնեց նաև ինչ-որ թերթեր: Սկզբում չհասկացա, պարզվեց՝ ուժերատ էր գորել. Դուրյանի կյանքն ու գրական գործունեությունն էր ներկայացրել: Ինձ համար գյուտ էր նոր Վարդանը, և շափականց ուրախ էի:

Ինքնարերաբար հիշեցի մի դեպք:

Տարիներ առաջ 5-րդ դասարանում սովորող Արտաշեսի ծնողը փորձում էր ինձ համոզել, որ երեխան քոյլ է, անկարող և անընդունակ, պետք չէ նրանից ավելին պահանջել: Բայց անկարելի էր համաձայնել նրա կարծիքին. իմ այն հարցին, թե կախարդական փայտիկ ունենալու դեպքում ինչ կանեխն, այդ աշակերտը պատասխանել էր. «Կփորձեի դրանով վերակենդանացնել մեր բոլոր զոհված ազատամարտիկներին»:

Տարիներ են անցել: Ամեն անգամ, երբ հանդիպում եմ բուհ ավարտած այդ երիտասարդին, ինքնարերաբար հիշում եմ այդ դասը, հիշում այդ բարեհամբույր աշակերտին, որ անակնկալի թերեց ինձ իր պատասխանով:

Սովորողների ստեղծագործական ունակությունների հայտնարերումը դպրոցի ուսուցչի պարտքն է: Սովորողի նկատմամբ հոգատար վերաբերմունքի դեպքում ամրակայլում են, զարգանում այն բոլոր դրական որակները, որոնցով ցանկալի արդյունքի կարելի է հասնել:

Բայց ի՞նչ ասել այն մանկավարժին, որի ստեղծագործական շարադրանքը աշակերտը պետք է սերտի, որպեսզի իրեն ներկայացնող դպրոցը «պատվով» ներկայանա շարադրությունների մրցույթում: Հետաքրքիր է՝ այդ դեպքում հաղթողը ուսուցի՞չն է, թե՝ աշակերտը:

Բազմարիվ նրբություններ կան, որոնք պետք է հաշվի առնի յուրաքանչյուր մանկավարժ:

Լինելով դպրոցի հայոց լեզվի և գրականության մեթոդմիավորման նախագահը՝ տարիներ առաջ փնջային մեթոդմիավորման աշխատանքն էի վարում: Գյուղական դպրոցներից մեկում համարյա մի ամբողջ կիսամյակ գրավոր աշխատանք չէր տրվել գրականությունից, այն էլ՝ դպրոցի ավագ օղակում: Տարակուսելի էր փաստը. իսկ որտե՞ղ պետք է զարգանան աշակերտի ստեղծագործական ունակությունները: Դասավանդող ուսուցչուին «արդարացավ», թե աշակերտները չեն սիրում շարադրություն գրել: Տարիների իմ հիշողության մեջ ամրակայվել է այդ «չն սիրում» արտահայտությունը:

Տարրական դասարան մտա մի օր՝ դաս լելու: Ուսուցչուին սուր և ուժեղ ձայնն ինձ զարմացրեց: Նա թերև ժայռուկ արձագանքեց իմ դիտողությամբ: Նրա ձայնային տոնը, անշուշտ, բացասարար կազդի երեխային: Լսողությունը բամբ ձայնին վարժեցրած, մտավոր հոգնածություն ձեռք թերած աշակերտը որբանո՞վ ունակ կլինի ուրիշներին լելու:

Իսկ ինչքանո՞վ ենք մենք կարևորում աշակերտների վայելչագույնունը:

Դպրոցում Մայրենիի օրվան նվիրված լավագույն ձեռագրերի մրցույթ էր հայտարարվել: Մտա 4-րդ դասարան: Աշակերտների ձեռագրերը չեն ընթերցվում՝ մանր էին, ծուռումուռ տառերով: Ուսուցչուին էլ ինձ զարմացրեց իր պատասխանով.«Ես երբսէ ձեռագրին ուշադրություն չեմ դարձրել»: Անմեկնելի էր...

Հաջորդ տարիներին սկսեցի դասավանդել այդ աշակերտներին: Ամեն մեկը հուզական, հետաքրքիր աշխարհ ուներ: Փոքրիկ Սեղան, որ գրական մաքուր հայերենով բանավոր հիանալի շարադրում էր իր ընթերցած նյութը, մյուսների նման նեղվում էր գրավոր աշխատանքի ժամանակ. «Տիկին Պողոսյան, այս անգա՞մ էլ պիտի ուշադրություն դարձնեք մեր ձեռագրերին»:

Սուարկային լավ տիրապետելը դասավանդման գործընթացի հաջողության միակ գրավականը չէ: Դասավանդող ուսուցիչը ոչ միայն պետք է տիրապետի իր առարկային, այլև կարողանա կարևորել այդօրինակ նրբությունները:

Բոլորս էլ գիտենք, որ անհիշելի ժամանակներից ուսուցիչը միշտ էլ եղել է հասարակության սիրո ու ակնածանքի կրողը: Որքան էլ փոխվեն ժամանակները, սերունդները փոխվեն, ուսուցիչն իր կոչ-

ման ու առաքելության հավատարիմ բարձունքին պիտի մնա: Ուսուցիչը, որ միշտ էլ շռայլ ու բարի է եղել, խնկարկվել է որպես իմաստության, ճշնարսության առաջյալ: Այդպես է եղել բոլոր ժամանակներում, այդպես է նաև հիմա. ճակատագրի հանձնարարականով մեզ՝ ուսուցիչներիս, վառվել-բոցավառվել է տրված՝ հանուն մտքի լույսի ու պայծառության, հանուն արդար խոսքի ու ազնվության:

**«Լուսարար» 2012, թիվ 21-22**

*Ուսուցիչը պետք է ունենա ծայրագոյն հեղինակություն  
և նվազագոյն իշխանություն:  
S. Ծաշ*

## **ՈՒՍՈՒՑԻՉԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԽԱՂՄԵՐՈՒԿՈՒՄ (մասնագիտական-տեսական)**

Ուսուցման գործընթացում բազում արդիական խնդիրներ են կարևորվում:

Մեր համոզմունքով՝ պատմական ու գեղարվեստական ժամանակի շարժը պիտի զգա ու ապրի ուսուցիչը և պիտի կարողանա նույնը վերապրել տալ:

Մենք գիտենք, որ մատադ սերնդի համար կյանքի լավագոյն դպրոց են հայոց մեծերի կյանքն ու գործունեությունը՝ սկսած սրբազնագոյն Մաշտոցից: Նրանց կենափորձն ու իմաստությունը, բազում խորհրդածությունները կրթության, գիտության, գրականության, արվեստի տարրեր բնագավառների մասին այսօր էլ ուսանելի են և արդիական հնչողություն ունեն:

Կարևոր է այն, թե ինչպես է ուսուցիչն իր կյանքով ու գործունեությամբ, իր ապրելակերպով հարաբերվում գրողի կյանքի կամ գրական երկի վերլուծությանը:

Միշտ փորձել եմ վեր հանել այն կապը, որ գոյություն ունի տվյալ ժամանակաշրջանի, գրական ստեղծագործության մեջ տեղի ունեցած այս կամ այն դեպքի, գրողի կամ գրական հերոսի ապրած կյանքի միջև, համոզված, որ դասագործընթացում դրանք դառնում են մարդկային լավագոյն հատկությունների դաստիարակության գեղեցիկ օրինակներ:

Երբ աշակերտներին խորհուրդ եմ տախս, որ գեղեցիկ գրեն, հիշում եմ Ամենայն հայոց բանաստեղծի իմաստուն միտքը, որ ձեռագիրն էլ բնավորություն է ձևավորում: Երբ նա Վաճից ստացել էր տղայի՝ Արտիկի նամակը, առանց կարդալու ետ էր ուղարկել՝ նամակի վրա գրելով. «Գրի՛ ինչ ես գրել»:

Հետպատերազմյան շրջանի իմ մանկավարժական աշխատանքային գործունեության առաջին ուսումնական տարրում վերջին նըստարանին նատած 4-րդ դասարանի աշակերտուիկ փոքրիկ Արմինեի պատկերն առայսօր գամվել է իմ հիշողության մեջ. նա ծանր հի-

վանդությունից հետո մահացավ: Այդ օրերին որքա՞ն ծանր ու սուր էր չարենցյան այն զգացումը, որ ապրվում է սանի կորստից հետո: Երբ 1919-20 թվականներին, որպես ուսուցիչ Զարենցն աշխատում էր Կարսի գյուղական դպրոցներից մեկում, իր աչքի առաջ անընդհատ սովոր մահանում էին դպրոցի երեխանները: Նրանց դպրուկ դեմքերն ամբողջ կյանքում չհետացան բանաստեղծի մտապատկերից: Յավագնորեն հասկանալի էր, թե ամեն օր դասամատյանում աշակերտների անունները պակասելուց Զարենցն ինչպիսի սարսափելի հուզում էր ապրել: Ու ամեն անգամ, մտնելով նոյն դասարանը, ճնշող ապրումներ էին ունենում, երբ դասամատյանում անվան դիմաց դատարկ վանդակներն էին տեսնում:

Երբ Գուրգեն Մահարու ստեղծագործությունն ենք վերլուծում, ցավի զգացողությունը պատում է իմ հոգին, ու զուգահեռականում հայտնվում է մեր իրականությունը. ավելի ճանաչելի ու ընկալելի են դառնում հորս ապրումները, երբ, վաղ հասակից, ծնողներին կորցնելով, նրան քրոջ հետ տարան որբանց: Գաղթի ճանապարհին Մահարին էլ իր քրոջն էր կորցրել: Հայրս էլ էր քույր կորցրել, ում այդպես էլ չգտավ, քանի որ նրանց տարբեր որբանցներում էին տեղափորել (տղաների և աղջիկների): Որբանցային դառը կյանքի մասին մանրամասնություններ այդպես էլ չպատմեց հայրս, բայց մի քան զիտեմ միայն, որ նա Հայաստանի տարբեր քաղաքների որբանցներում էր եղել: Իրենից մեկուկես տասնամյակ առաջ այդ որբանցներում ապրած Գուրգեն Մահարին հետագայում իր «Ինքնակենսագրականի» մեջ գրել է. «1915 թ. ես Էջմիածին ընկա, հետո՝ Դիլիջան, հետո՝ Երևան, քաղաքից քաղաք, փողոցից փողոց, մայթից մայթ, որբանցից որբանց, մահճակալից մահճակալ...»:

Երբ ուսումնասիրում ենք Հովհաննես Շիրազի կյանքը, ով մատնվելով որբության՝ իր նման հարյուրավոր անապատանների հետ սկզբից ևեք ճանաչեց կյանքի հատակը, մտաքերում եմ հորս պատմածը, որ աղբբեջանական հայաշատ Կիրովարադ (Գանձակ) քաղաքում, արդեն աշխատունակ, անապատան նախկին որբանցային սանը իր փաստարդերում աշխատանքի դիմաց փոխված պիտի տեսներ հայկական «յան» վերջածանցը: Բայց «ովը» չկարողացավ հանդուրժել, այն պիտի դառնար նորից «յան», որ պապենական տոհմը չեղծվեր, այլ դառնար մի մեծ տոհմածառ:

Եվ ինձ համար նոր հնչողություն պիտի ստանային մեծ բանաստեղծի տողերը.

*Ղարաբաղը մորս կանչն է,  
Ինձ է կամչում հույսով պրկում,  
Ղարաբաղը իմ կակաչն է,  
Կարմիր, բայց սև ունի սրբում... (Հ. Շիրազ)*

Բանաստեղծ Զարենցի «դանքեական դժոխքի» հարցումներն են հնչեցնում. «Ո՞վ հնարեց պատերազմը, ո՞վ դարձրեց կյանքը «քարախակալ երազ», ո՞վ հնարեց այս որբերին, ո՞վ, ո՞վ...»: Այդ ժամերին ինքնարերաբար հիշում ենք նաև 92-ի ծանր օրերը, երբ առաջին անգամ զգացինք պատերազմի հոտը: Հարազատ գյուղում էինք (Սովորաբաղ), երբ ոմբակոծությունից հետո մեր մշուշված աչքերի առջև գետնին փոփած տեսանք տատիս հաշմանդամ հարևանութու դիակը...

Երբ 1915 թվականի Մեծ եղեռնից փրկված գաղթականների մասին ենք խոսում, նորից վերիշում ենք նույն 92-ի բռնագաղթի օրերը, երբ ոտարորիկ, ընտանիքով, անտառամշջյան արահետով փորձում էինք մայրաքաղաք տանող փրկության ճանապարհը գրտնել... Իմ ականջներում դեռ հնչում է քրոջ սրտառուչ ձայնը: Եվ հառնում է իմ առջև մոտակա գյուղերից եկող «գաղթականների» ստվարացող խումբը, դրանց մեջ քայլելուց հոգնած 84-ամյա տատիս գունատ դեմքն եմ հիշում, որ փորձում էինք փրկել պատերազմ կրչված «դահիճից»: «Ավելորդ» մարդ չկար մեզ համար այդ օրերին, «ավելորդը» Դեմիրճյանի հերոսուհին էր՝ Սրբունը, որի մասին խոսելիս հիշում եմ նաև ինձ շատ ծանոթ մարդկանց, ովքեր չկարողացան «լրել» իրենց օջախը և հենց այդտեղ էլ կու գնացին դաժան պատերազմին:

Գեղարվեստական երկի և մեր օրերի կենդանի օրինակների միջև զուգահեռներ անցկացնելու էապես ազդում է մատուցվող նյութի լիարժեք ըմբռնմանը:

Երբ հանճարեղ Սևակի պատգամն եմ հղում իմ աշակերտներին. «Դու այսուհետև ժողովես պիտի Նախ՝ ինքդ քո մեջ, Եվ ապա՝ քո շուրջ...», փորձում եմ նոր լույսի տակ արծարծել հայրենիքի և ժողովրդի միավորման նրա տեսակետը:

*Մեր հայրենիքը մեզնից դարպարկվեց:  
Բայց ... ոչ մի վայրկյան, ոչ մի ակնքարք*

*Սենը չենք դաւարկվել մեր հայրենիքից:  
Սենը սպանվեցինք մեր հայրենիքում,  
Բայց հայրենիքը մեր մեջ չսպանվեց: (Պ. Անալ)*

Սփյուռքահայ գրող Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպն ուսումնասիրելիս լավ եմ հասկանում, թե որքան ցավոտ ու արդիական է գրողի ահազանգը սփյուռքահայերի ձուլման վտանգի դեմ: Այն այսօր էլ հնչում է որպես հայության ուղղված զգոնության կոչ: Այդ ստեղծագործությունը գրելիս Շահնուրին մտահոգում էր ոչ միայն հայության ներկան, այլև՝ ապագան:

Այսօրվա նահանջողներն են սպանում վաղվա հայ սերունդը: Ուժացման, ձուլման ճանապարհով քայլող վաղվա սերունդն այլս հայ չի լինելու: Սա է մեծագույն ողբերգությունը, և այդ պատճառով Շահնուրը մարտահրավեր նետեց նահանջողներին:

Քոնազարից հետո օտար ափերում ապաստանած տարագիր հայուհու ճակատագրի դաշնությունն ենք ճաշակել, և Շահնուրի մտահոգությունն ու ցավը մեզ համար շոշափելի էին:

Խարսյաշ և բարձրասրունք գեղեցկուիների հմայքը շատ մեծ էր, և ավանդապաշտ հայ ընտանիքների որոշ զավակներ իրենց մեջ ուժ չեն գտնում դիմադրելու այդ հմայքին: Նույն մտահոգությունն այսօր էլ առկախ է:

Օտարվելու տագնապն զգացինք նաև մենք. օտար ափերում՝ հայրենիքից հեռու, ոռուական դպրոցի երկրորդ դասարան հաճախող դստերս (միայնակ եմ մեծացրել) փորձում էի հայ ու հայալեզու դաստիարակել՝ հեռու պահելով օտարալեզվության վտանգից:

Որքան հոգեհարազատ են օտարության մեջ հայրենիքի կարոտով տառապած Վարպետի ապրումները, երբ նրա պանդխտության երգերն են հնչում, օտար երկնքի տակ բախս որոնող «Փախստականի» մեր կյանքն ենք հիշում: Եվ մեր հիշողության մեջ կրկին ուրվագծվում է բռնագաղթի ճանապարհը, ու հայրենիքից հեռու, «օտար ամայի ճամփերի վրա» ապաստան գտած ընտանեկան «խմբանկարից» պակասող մեր հարազատների կորուստն ենք հիշում (հայր, մայր, տատ):

Եվ Շիրազի հայրենակարոտ տողերը նորովի են ընկալվում.

*Ամենայն անզամ,  
Երբ հայրենիքի մասին են խոսում,*

Իմ միկըն է զալիս առում մեր դուսն,  
Որ մանկության հեքիաքն էր ասում,  
Եղ մեր խրճիքը բարդու տակ մենակ,  
Ուր անուշ ծխով օջախն էր վառվում,  
Եղ օրորոց՝ այն սուրբ ծխի տակ,  
Որ այնապէս քաղցր մայրս էր օրորում...

Չափազանց ցավոտ և սրտառուչ է պանդխտության թեման: Միջնադարի և նոր շրջանի շատ բանաստեղծներ են երգել օտար ավերում բախս որոնող պանդոխտների զգացումները: Ժողովուրդն ունի բազմաթիվ երգեր՝ հյուսված սիրուց ու կարուից («Կոռունկը»): Այդ երգերը միշտ էլ հնչեցրել են հայրենաբաղձուրյուն, նրանց հերոսը՝ պանդոխտ հայը, օտարության մեջ հոգեալես մնում է հայրենի հողի հետ, երազում իր երկիրը, հույս փայփայում, որ մի օր «Եղեգան փողը» կհնչեցնի հաղթական փառքն իր հայրենիքի:

Ազատամարտում հաղթանակած արցախյան մի բուր ժողովրդի համար ոքքա՞ն արդիական են հնչում այսօր Վարուժանի տողերը՝ «արյունից պիտի ծնվեն կակաչներ», հայրենիքի նահատակները «պիտի կանգնին զերեզմանին մեջ իրենց», կինի վարդահեղեղ գալուստ, հայ մայրերը կծնեն «հսկա և հերոս» քաջարի զավակներ, կապրի հայ աշխատավորը, կծփա հայոց արտը, և հայ երդիկներից հավերժորեն կը պարձրանա ծուխը:

Իսկ համամարդկային հնչողություն ստացած և միաժամանակ մարդասիրական խոր բռվանդակություն ունեցող «Նարեկը» ուսուցանող դպրոցի ուսուցիչը պիտի խոսի համայն մարդկության մաքրվելու և կատարելագործվելու մասին, չէ՞ որ միջնադարի մեծ մարդասերը ձգտում էր մարդուն տեսնել աստվածացած, այսինքն՝ կատարյալ, անարատ, անթերի ու ազատ:

Եվ Աբովյան հայրենասերի ու մանկավարժի՝ **հեղեղնակի կերպարի** կողքին պիտի կանգնի հայ ուսուցիչը՝ իր անկեղծ, գրավիչ, համոզիչ ու շիտակ խոսքով, իր ապրած կյանքով, իր նոր կերպարով՝ որպես առաքյալ, մաքրության աղբյուր, լույսի ջահակիր, ու հնչեցնի խոսքը մեծ լուսավորչի. «**Ճե՛ք եմ ասում, ճե՛ք, հայոց նորահան երիդասարդը, չեր անումին մեռնիմ, չեր արևին դուրքան, դասը լեզու սովորեցնե՛ք, չեր լեզուն, չեր հավաքը դային բռնեցնե՛ք»:**

«Լուսար» 2012, թիվ 27

Աշխարհը բարեկավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդները: Այն պահից, երբ բացահայտվել առավել արդյունավել մեթոդները, կրթությունը կդառնա զրեթե միակ համապատասխան քննազավառը, որը կարող է բարեկավել կյանքը:

Բ. Ֆ. Մքհանիք

**ԴԱՍՎԳՈՐԾԸՆԹՎՑՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ  
ՃԻՇՏ ԲՆԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐԱԿԻ  
ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԾԽԻՔ  
(մեթոդական)**

Ուսուցման տարրեր մեթոդների կիրառումը դառնում է նպատակահարմար և արդյունավետ, եթե դրանք տեղին են օգտագործվում: Յանկացած մեթոդի բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և՝ սովորողի, և՝ սովորողի դերերում:

Մեթոդը, ընդհանրապես, նպաստում է սովորողների ստեղծագործական նոտածողության զարգացմանը և ակտիվացմանը, նրանց հնարավորություն է տալիս դրսւորելու անկաշշանդվածություն, բացահայտում է նրանց ունակությունները, առաջացնում է հավատ սեփական ուժերի նկատմամբ, նպաստում ինքնարժևորմանն ու ինքնազնահատականի բարձրացմանը... Յուրաքանչյուր մեթոդ ունի իր առավելությունը, որը դասագրործներացը տանում է դեպի աշակերտակենտրոն ուսուցում, հետևապես՝ համագործակցային միջավայրի ստեղծում:

**Միթերզու Ավելիք Իսահակյանի «Մի մրահոն աղջիկ տեսա»** բանաստեղծության վերլուծությամբ թերևս հասկանալի կլինի օգտագործած մեթոդի արդյունավետ կիրառության առավելությունը: Նրա սիրային բանաստեղծություններն ուսումնասիրելիս աշակերտները զիտակցում են, որ դրանք աշքի են ընկնում զգացմունքի անմիջականությամբ և ուժգնությամբ, մերժված սիրո տառապանքով, բնությունն իր վշտին մասնակից դարձնելու յուրահատկությամբ: Մի կողմից՝ նրա սիրերգության մեջ անարատ, նաքուր սիրո փառաբանումն է, մյուս կողմից՝ սիրո նկատմամբ հավատի կորուստը:

Սայաթ-Նովայի նման նա մերժված սիրո երգիչ է, բայց, միևնույն

է, իր սիրած էակին բարձրացնում է իդեալի պատվանդանին և գալիք սերունդներին է ավանդում Շուշանիկի անունը՝ համաշխարհային գրականության մեծերի նման, ինչպես Դանթեն՝ Բեատրիչեին կամ Պետրարկան՝ Լառուային:

Չնվաճված սերը, մերժումի տառապանքը, սիրո կորուստը հարստացնում են բանաստեղծի սիրերգության բովանդակությունը:

Եվ ահա տարիներ հետո Ուխալոյի կամքջին, արդեն բանաստեղծի հասուն տարիքում, նորից հայտնվում է առեղծվածային կինը: Մի մրահոն սերներող գեղեցկուի ժաման է նրան՝ արքնացնելով պատանության տարիների ցնորդներն ու մորմոքները:

*Աչքս դիսավ աչքի բոցին,  
Ու գլուխս կախեցի,  
Ժպարաց ժպառվ առեղծվածի,  
Հավերժական կանացի:*

Սակայն այլևս նախկին միամիտ հավատը չկա, կյանքի դառը փորձով իմաստնացած մարդն այլ կերպ է նայում գեղեցկությանն ու խարուսիկ երջանկությանը:

*Միամիտ չեմ՝ հավակամ քեզ,  
Տառապանքս փորձ ունի.-  
Մի մրահոն կույս էր քեզ պես,  
Կորրեց սիրուս պապանի...*

Այս բանաստեղծությունը արտաքուստ պարզունակ է թվում, բռնդակության տեսակետից՝ հեշտ յուրացվող:

**Խմբային աշխատանքի** միջոցով բառային (հոմանիշներ, հականիշներ...) և պատկերային (մակդիր, համեմատություն, փոխաբերություն...) համակարգերի պարզաբանման արդյունքում թվում է՝ այս հիանալի ստեղծագործությունը (ընդամենը շորս տուն) ամբողջությանք ընկալվել է, այլևս անելիք չկա:

Բայց բանաստեղծությունը կարդալուց հետո աշակերտների մոտ հարցեր են ծագում, և շատ հարմար է այդ դեպքում օգտագործել **ԳՈՒՄ (գիրեմ – ուզում եմ իմանալ – սովորել եմ համագործակցային մերողը):**

Բանաստեղծական տեքստի ուսումնասիրության ընթացքում աշակերտների համար այդ մերողը դառնում է ուղեցույց, որոշակի համակարգ է ապահովում, որի շրջանակներում նրանք կարողանում

են կարդացվելիք նյութի մասին հարցեր բարձրացնել և ենթադրություններ անել:

Այլուստակը՝ երեք մասից կազմված, կարելի է գծել մեծ թղթի վրա կամ գրատախտակին:

Ընտրված թեմայի անվանումը		
Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորել եմ

Ստեղծագործության վերնագիրը գրվում է ԳՈՒ այլուստակի վերևում: Աշակերտներին պետք է հարցնել, թե ինչ գիտեն դասի թեմայի մասին, և նրանց ասածները համառոտ գրի են առնվում այլուստակի առաջին («Գ-ի՞նչ գիտենք») սյունակում:

Աշակերտները գիտեն, որ բանաստեղծը պատահաբար հանդիպել է մի անձանոր մրահոն աղջկա, որի առեղծվածային ժայտն անգամ նա թերահավատորեն է ընդունում, քանի որ նրա պատանեկան սիրող կոտրել էր սիրած էակը՝ Շուշանը:

Աշակերտներին պետք է հարցնել, թե թեմային կապված ինչ հարցեր ունեն և առաջարկել, որ գրանցեն դրանք այլուստակի երկրորդ («Ու- ի՞նչ ենք ուզում իմանալ») սյունակում:

Ուսուցիչը կարող է աշակերտներին օգնել՝ դասակարգելու իրենց հարցերը, միաժամանակ պետք է ուղղություն տա, թե տեղեկատվության ինչ տեսակներից կարող են օգտվել: (Օրինակ՝ հանրագիտարանից, Ավ. Խսահակյանի «Հիշատակարանից»...)

Այլուստակի երկրորդ սյունակում գրվում են հարցերը.

*Ո՞ր քաղաքում է գրևալում Ռիալգոյի կամուրջը և ինչպիսի՞ն է այն:  
Ինչո՞վ է կապված այդ քաղաքը բանասրեղծի հետ:*

*Ինչպի՞ն է տեղի ունեցել այդ հանդիպումը:*

*Մի՞քանի Խսահակյանը նորից էր սիրահարվել:*

Աշակերտների ուսումնասիրությունների արդյունքում (թեկուզ հաջորդ դասաժամին) ուսուցչի օգնությամբ հնարավոր է դատնում պարզել այդ հարցերի պատասխանները, որոնք համառոտ լրացվում են այլուստակի երրորդ սյունակում («Ս-ի՞նչ ենք սովորել»):

Աշակերտները կիմանան, որ ճարտարապետական առումով շատ ուշագրավ է Ռիալտոյի կամուրջը, որը գտնվում է Վենետիկում: Կամքջի երկարությունը 28 մ է, առավելագույն բարձրությունը կենտրոնական մասում՝ 7,5 մետր: Ըստ զարդարանդակներով է այն: Սի կողմից մարդ երբ գալիս է, հակառակ ծայրից եկողին կարող է չտեսնել: Եթե որոշ բարձրության է հասնում, այն ժամանակ միայն տեսանելի է դառնում եկողը: Այդպես բարձրանում էր բանաստեղծը կամքջով, երբ հեռվից երևում է կապույտ հագնված մի աղջիկ.

**«Երդ մազերը-գեղ զիշերս և հակիմքներ սկանչին»** Այդ աղջիկը շատ էր սիրուն, նոյնիսկ մի քանի տղաներ հետևից էին գնում, ոմանք էլ կողքից էին նայում նրան: Այնքան գերող էր, որ Խասհակյանն էլ չկարողացավ անտարբեր անցնել:

Անշուշտ, դա սեր չէր, եթե հիշենք բանաստեղծի խոսքերը. «Շուշիկի սերը համարում եմ մերժված սեր: Բայց եթե այդ մերժումը չլիներ, ես այդքան բոցավովել չէի կարող... Շուշիկն է քև տվել իմ սիրո քնարին ...»:

Կենսագրական տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում աշակերտները կիմանան, որ բանաստեղծը երկար տարիներ ապրել է հայրենիքից հեռու՝ արտասահմանում: 1925թ.-ին նա Վենետիկում էր, հենց այդտեղ էլ գրել է այդ բանաստեղծությունը: Նույն բվականի օգոստոսի 25-ին Խոտալիայի Վիշենցիա քաղաքում Խասհակյանի հուշերին ավելանում են այս տողերը. **«Օպարության մեջ: Մուզիկ լսում եմ բափառելով մենակ: ... Տիրություն է ծալվալվում հոգուդ մեջ և աշխարհում... Սերդ զարքնում է սրբիդ մեջ, վերդ բացվում է նորից հին վերք:»**

**Ինչքա՞ն բախսրավոր կարող էիր լինել, և չեղար... Ով Շուշիկ, ի՞նչ արիր ինձ, որ գուսանյակ գարիներ հելոր դեռ մխում է վերքս...»**

Աշակերտների համար հասկանալի է դառնում, որ Վարպետի մեծ սերը կեսդարյա պատմություն է ունեցել: Այդ սիրոց են ծնվել նրա հրաշալի բանաստեղծությունները՝ «Դարդ լացեք», «Էս ճամփեն ոլոր-մոլոր», «Գիշերն եկավ, զով հովն ընկավ», «Սիրեցի, յարս տարան», «Օտար, ամայի ճամփերի վրա»... որոնք նույնքան սըրտաշարժ և հիանալի մեղեղայնությամբ են ուղեկցվել:

Այնուհետև աշակերտներին պետք է ուղղորդել, թե ինչպես դասա-

կարգեն արդեն ունեցած և նոր տեղեկատվությունը երրորդ սյունակում:

Երբ ԳՈՒՍ առյուսակը լրացվում է, ամփոփվում է ամբողջ դասարանի կամ առանձին աշակերտների կողմից դասակարգված ողջ տեղեկատվությունը:

Այդ մեթոդը ուսուցիչներին բույլ է տալիս պատկերացում կազմել աշակերտների՝ տվյալ թեմայի վերաբերյալ ունեցած նախնական գիտելիքների մասին: Զարգանում են աշակերտների ինքնահարցման, ինքնավերլուծության հմտությունները, նրանք սովորում են ավելի ակտիվորեն կարդալ, որպեսզի թեմային առնչվող իրենց հարցերի պատասխանները գտնեն: ԳՈՒՍ-ը ուսուցման լավագույն մեթոդ է, որը կիրառելու դեպքում աշակերտները տարբեր աղբյուրներ ուսումնասիրելու հնարավորություն են ունենում: Այն կարելի է կիրառել թե՛ բանաստեղծական տեքստի և թե՛ արձակ գրական երկի ուսումնասիրության ժամանակ:

Կարևորն այդտեղ մեթոդի ճիշտ ընտրությունն է, որը դասագործարարություն լավագույն որակ է ապահովում: Ավելին, մեթոդը դասում է ուազմավարական պլան, որի ճիշտ կիրառման ժամանակ ի կատար են ածվում ինչպես դասի, այնպես էլ ուսուցչին ներկայացվող դիդակտիկական, պերցեպտիվ, դաստիարակչական պահանջները:


## ԵՐԿՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ, ՈՒՍՈՒՅՄԱՆ ՄԵԿ ՄԵԹՈԴ (մեթոդական)

Նյուրի ամփոփման ու առավել ամրակայման համար հիանալի եղանակ է «Վեճի դիագրամ» մեթոդի կիրառումը, որն ընդգծում է ինչպես գրական սրեղծագործության զարաֆարական հարցադրումները, այնպես էլ վեր հանված խնդիրները, գործող գրական կերպարների առանձնահավելությունները և այլն: Ուսուցման այս մեթոդի կիրառումը գրականության դասերին ենթադրում է գրական հերոսների համեմափական վերլուծությունները, որոնք ինքնապիս բնութագրումներով են արդահայտվում սովորողների միաժողովության ու երևակայության արդյունքում: Տարանջապահում են այս կամ այն գրական կերպարին բնորոշ՝ ինչպես ընդհանրություններն ու գարբերությունները, այնպես էլ՝ առանձնահավելությունները: Ըստ որում, նյուրի ամրակայումն առավել լիարժեք է ընթանում, եթե համեմափություններն ու զուգորդումները կարարվում են ոչ միայն վիլյալ, այլ նաև այլ հեղինակների նույն թեման արծարծող սրեղծագործություններից: «Վեճի դիագրամ» մեթոդն իսկապես նպաստում է ոչ միայն աշակերտների համեմափական-վերլուծական մտքի զարգացմանը, այլև ինքնուրույն եղանակումներ կարպելու կարողության չեավորմանը:

Յուրաքանչյուր ուսուցիչ գիտի, որ ուսուցման մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա ակտիվ ու անմիջական նաև ակտիվ նկատմամբ գործունեությունը: Ցանկացած թեմայի ուսումնասիրություն կարելի է կազմակերպել ամենատարբեր մեթոդներով, ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն ընտրությունը չի կարող ինքնանպատակ ու կամայական լինել: Ինչպես գիտենք, շատ կարևոր է մեթոդի ճիշտ և նպատակահարմար ընտրությունը: Ճիշտնք, որ պետք է հաշվի առնել նաև սովորողների գիտելիքների մակարդակը, տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները: Բայց կան մեթոդներ, որ թվում է՝ դրանք զուտ այս կամ այն ստեղծագործության վերլուծության համար են նախատեսված: Դրա հիմնալի օրինակ է **Պ. Գուրյանի «Միրել» և «Գրծել» բանափեղծությունների վերլուծությունը «Վեճի դիագրամ» մեթոդով:**

Սրանք ներքին միասնություն ունեն և կարող են հասկացվել համեմատության մեջ: Որպես մտահղացում՝ բանաստեղծի կողմից դա բանաստեղծական արվեստի իսկական գյուտ է քե՛ բովանդակության և քե՛ կառուցվածքի տեսակետից:

Բանաստեղծությունների ուսումնասիրության համար չափազանց դյուրիխն և հարմար է այս մերոդի օգտագործումը, որը հիմնականում կատարվում է նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ՝ զաղափարները, երևույթները, անձերին միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Այն կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում, որտեղ նշվում են ընդհանրությունները, իսկ չհատվող մասերում առանձնացվում և շեշտվում են նրանց առանձնահատկությունները: (Անպայման համառոտ պետք է գրել և՛ ընդհանրությունները և՛ առանձնահատկությունները):



Մինչ այս ստեղծագործությունների համեմատական վերլուծությունը, աշակերտները կարդում, բառային աշխատանք են կատարում, ուսումնասիրում են բանաստեղծությունների պատկերային համակարգը, իհարկե, ուսուցչի ընտրած համապատասխան մեթոդը:

Այնուհետև դասարանը կարելի է բաժանել տարրեր խմբերի, որոնք կներկայացնեն ընդհանրությունները և «Սիրել» ու «Դրժել» բանաստեղծությունների առանձնահատկությունները:

Կառուցվածքի տեսակետից աշակերտների համար նկատելի է, որ բանաստեղծություններից յուրաքանչյուրը կազմված է վեցտղանի հնագական տներից՝ երկտող կրկներգով: Գրված են նույն հան-

գով, նոյն համաշափությամբ, տողերի նոյն քանակով: Երկու դեպքում էլ երկտող կրկներգին է հաջորդում վեցտողանի մեկնությունը:

Բայց այս բանաստեղծությունները բովանդակության առումով ունեն առանձնահատկություններ:

«Սիրել» բանաստեղծության մեջ սիրո հերիաքն ավարտվում է երջանկության դյուրանքով, այն արտահայտում է իդեալը:

«Սիրել» բանաստեղծի երազանքն է փոխսադարձ սիրո մասին, այն երջանկության մասին, որ այնքան վառ է նրա երևակայության մեջ, որը ապրում է բանաստեղծ՝ զգալով այն իրեւ իրականություն:

*Քույլ մը նայվածք, փունջ մը ժպիկ,*

*Քուրս մը խոսք դյուրիհ իմ սիրու:*

Այս բանաստեղծության մեջ սիրո խոստումներով իրապուրող էակը «Դրժել»-ի մեջ հալածում է նրան իր դժգոհությամբ ու մերժումի խոսքերով: Այստեղ խօփում է իդեալի և իրականության ներդաշնակությունը:

*Փունջ մը կնճիռ, քույլ մը կայծակ,*

*Դժոխք մ'անեծք խոցեց հոգյակւ:*

«Սիրել» և «Դրժել» բանաստեղծությունները ներկայացնող աշակերտական խմբերը կամ զույգերն առանձնացնում են գործածված առանցքային բառերն ու բառակապակցությունները:

ա) «Սիրել» - նայվածք, ժպիտ, դյուրանք, սիրել, փրիքք, կապույտ երկինք, եղեմ, ջինջ վտակ, երազներ, քույր, պաշտել, գրկել, քնար, սրտակցիլ, ըգմայիլ, սեր, ծաղիկներ...

բ) «Դրժել» - կնճիռ, կայծակ, դժոխք, անեծք, ամայ, սուզ, անդունդ, տրտունջ, ամպրոպ, ցնցել, խոցել, մխալ, զունատ, որոտ, մոխիր, խորշ, ծաղր, գերեզմանի փոս...

Արտաքուստ նկատելի է, որ իրար են հակադրվում բանաստեղծական աշխարհը («Սիրել») և իրական աշխարհը («Դրժել»): Հատ Դուրյանի՝ իրական աշխարհը բանաստեղծական աշխարհի հակապատկերն է: Այն ձանձրալի է և չարությամբ լի ու անհծված: Այդ հակաշխարհում Դուրյանը ստեղծում է իր երևակայական տիրուհու կերպարը, որի սերը չվայելած՝ հեռանում է աշխարհից:

«Մեռնի՛ թարմ և երազկոտ... մեռնի՛ լ առանց մարմարյա ճակտի վրա խորշոմ մը բորբոքելու, առանց հոգին ժպիտով մը հրդեհելու, մեռնի՛ լ... տխուր է շատ»:

Եվ ահա աշակերտները կատարում են համեմատական վերլուծություն, մեկընդմեջ խմբերն արտահայտում են իրենց մտքերը, թվում է՝ ինչ–որ բան պիտի փոխվի, բայց...

«Սիրել» բանաստեղծության մեջ բանաստեղծն ուզում է «լուռ մենանալ», սիրել փրքող ծաղիկները, անտառների թափուտ խորշերը, երկնքի կապույտ կայծերը, առավոտվա ցողը, երեկոյան մշուշը և «սուր» զմայլելով այս ամենով՝ կարդալ իր ճակատագրի «սև զիջը»:

«Դրժել»-ի մեջ սիրերգու բանաստեղծը ցանկանում է պաշտել աղջկա ժպիտը, սիրել «աստղերն սև աշերուն», ուզում է մոտ լինել նրան, շշափել նրա «ծալ–ծալ» վարսերի ալիքը, բայց մրագնում է նրա «պայծառ ճակատը», իր հոգին արձակում է միայն տխուր հառաջ և ահա լսում է վանող տրտունջը. «Չիս կընեղե՞ս»:

Իրական աշխարհին ահա նորից հակադրվում է բանաստեղծական աշխարհը: Բանաստեղծի սրտակիցը մի անգամ «զինջ վտակն» է դառնում «Սիրել» բանաստեղծության մեջ, որը, մշտահոս լինելով, իր վագող ալիքների մեջ անբացատրելի գաղտնիքներ է տանում: Վտակը հմայիչ է և զուլալ սիրտ ունի:

Այնուհետև բանաստեղծի զրուցակիցը դառնում է զեխյուռ, որը բեկրեկվելով իշնում է երկնքից, փաղաքում, զրավում բոլորին իր արբեցնող բույրով, որ բերել էր իր հետ:

Եվ ահա բանաստեղծն ուզում է քնար լինել («Դրժել») և հևալ աղջկա մատների նվազում, բայց լսում է ամպրոպի պես սաստող ձայնը. «Սիրել չես կըրնար զիս»: Բայց դարձյալ բանաստեղծը նրան է հղում զունատ ճակատի ու մարող աչքերի թախանձանքը, սակայն արձագանքը լինում է քամահրանք. «Բավ սիրեցի քեզ, մնաս բարյա՞վ»:

Հուսարված բանաստեղծն արդեն «Սիրել» բանաստեղծության մեջ ցանկանում է հեռանալ կյանքի ժխորից, նա ուզում է ապրել երջանիկ ոգևորությամբ, «պաշտել, գրկել միայն քնար»՝ իրուն էակի», տրվել ազատ ներշնչանքին՝ քնարի հետ սրտակցելով «սիրողաբար»:

Բանաստեղծի հոգում անընդհատ առկայօնում է սիրելու և սիրվելու կարոտը, նա շարունակ հիշում է, որ բնությունից բացի կա նաև այլ աշխարհ, որտեղ մենակության թախիծը փարատվում է փոխսա-

դարձ սիրո երջանկությամբ:

Բայց ահա ամպերն են որոտում («Դրժել»), կայծակնահար անում նրա երիտասարդ հոգին, մոխիր են դառնում երազները, միայն մի խորշ կար, որ չէր ծաղրում նրան, դա «փոսն» էր գերեզմանի:

*Խորշ մը կար, որ զիս չը ծաղրել,*  
*Այն լուս փո՞ն ան էր գերհզմանիս...*

«Սիրել» և «Դրժել» բանաստեղծությունները, իրար հակադրելով, իրոք, լավ կարող են հասկացվել միայն այդպիսի համեմատական վերլուծության մեջ: Բայց բոլոր աշակերտների համար էլ ցավոտ պիտի հնչեն **Պ.** Սևակի հիմնալի տողերը. «Ապրելով ընդամենը երկու տասնամյակ, ստեղծագործելով ընդամենը մեկ-երկու տարի, գիտակցական ողջ կյանքում մահամերձ Դուրյանը իր «փունջ մը ժախտ»-ով ու «անդունդ մը հառաշ»-ով դարձավ մեկն այն երջանիկներից, որոնցով համայն մարդկություննը ոչ թե հիշում, այլ ամեն անգամ վերապրում է իր երիտասարդությունը»:

Այս բանաստեղծությունների համեմատական վերլուծությունն անավարտ կլիներ, եթե չասվեր, որ կյանքի ու մահվան առեղծվածը շատ է գրադեցրել **Պ.** Դուրյանին, որն արտահայտել է նույնիսկ սիրային քնարերգության մեջ: Այդ գաղափարը սիրո երգերի մեջ զեղարվեստական կատարելության է հասցրել հենց «Սիրել» և «Դրժել» բանաստեղծություններում:

Իր մահը երգող մահերգակ Դուրյանը գիտեր, որ կյանքի ու մահվան սահմանագծից է սկիզբ առնում անմահության գաղտնիքը, որն առնչվում է յուրաքանչյուր էակի գոյության իմաստի հետ:

*Երեւ լրժգոյն մահու հրեշտակ*  
*Անհուն ժպիլով մ' իշնէ իմ դիմ...*  
*Ծոգիանան ցավքս ու հոգիս,*  
*Գիլցեք, որ դեռ կենդանի եմ:*  
*Իսկ աննշան եքի մնաւ*  
*Երկրի մեկ խորշն հուշակույրն իմ,*  
*Եղ հիշալրակս ալ քառամին*  
*Ա՞հ, այն արեն ես կը մեռնիմ... («Իմ մահը»)*

**ԳՐՈՂԻ ԲԱՆԱՍՏԵՂ ԾԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ  
ՈՒՍՈՒՄՆԱԽՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՎԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՅՑ  
(գրականագիտական)**

Արցախի գրական օջախի ներկայացուցիչների հելք համդիախման շրջանակներում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչութիւն, բազմից կազմակերպել եմ փառքեր միջոցառումներ:

Գետն 2006 թվականին *Մարդակերպի* գրականասեր հասարակության հետ գրեղի ունեցած մի այդպիսի համդիախման ժամանակ ներկայացած Վարդան Հակոբյանի բանասրեղծությունների՝ լեզվի և ոճի մասին գրականագիրական համառոր վերլուծությամբ, որը հետագայում արձագանք գրավ «Մարդակերպ» թերություն: (2006, թիվ 11)

Այդ ուսումնասիրության արդյունքում (Երկերի Ա հավոր) իմ շենքի գալ կային 70-ի չափ համեմակության օրինակներ, մոտ 100 փոխարերական մոքեր, 250-ի մոտ մակղրավոր կապակցություններ: Հետագայում առանձնացրել եմ նաև համեմակությունների մի այլ խումք՝ փոխարերական համեմակություն, ուշադրություն եմ դարձրել, բայց խորիմասային պատկանելության, մակղրավոր կապակցությունների գրաքեր խմբերի, այդ թվում նաև՝ դարձվածքներ, չափազանցության օրինակներ, ժողովրդական միաձողությանը հապուկ խոսակցական բառաձեներ..., որոնք՝ որպես գեղարվեստական պատկերավոր և արդահայտիչ խորի օրինակելի նմուշներ, սկզբանակործելու շնորհ ու չիրք են հաղորդել իմ աշակերպներին:

Ընդհանուրապես, գրողների հելք համդիախմունքները նպաստում են աշակերգուների սրեղծագործական կարողությունների զարգացմանը, և ես նպաստակ ունեն վեր հանելու դպրոցում սրեղծագործող աշակերդների մի փորքիկ «ասպրաբույլ»՝ համոզված, որ իրական գրականության միջոցով կյանքը ճանաչած այսօրվա աշակերդները վաղը անպայման հայրենասեր քաղաքացիներ կդառնան: Եվ այդ համոզմունքով իմ վերլուծությամբ համառոր ներկայացնում եմ Արցախի գրողների միության վարչության նախագահ Վ. Հակոբյանի բանասրեղծական արվեստի համառոր

**Ակարագիրը, որն ինձ անշափ օգնում է աշակերտների մով զարգացնելու և բացահայտելու նրանց սպեղծագործական ունակությունների անսպառ պաշարը:**

Խոսքի տառապանք: Ասում են՝ ամենից շատ դա բաժին է ընկնում բանաստեղծներին, չէ՞ որ «բանաստեղծ»՝ հենց «խոսք ստեղծող» է նշանակում:

Բանաստեղծներն են, որ գեղարվեստական խոսքի ճշմարիտ արմեքներ են ստեղծում:

**Հիշենք Հովի. Թումանյանի տողերը. «Ամեն մի բառ, ամեն մի չնկամ ոճ մեծ սպեղծագործություն է ու մի ամբողջ աշխարհ»:**

Ահա այդպիսի բառ, խոսքի ձև կամ ոճ ընտրելու և գտնելու համար է, որ տքնում են բանաստեղծները:

Իսկ բանաստեղծ Վ. Հակոբյանի խոսքերով.

Բառերը միշտ էլ կանաչ են լինում,  
Նրանք բռնում են միայն այն պահին,  
Երբ հանկարծ իրենց պեղը չեն դրվում,  
Դրա համար էլ  
Գրիչ առնելիս,  
Չեռքիս պեղ ասես սիրաւ է դողում:

Ուղղակի հիմնում ես Վ. Հակոբյանի ստեղծած բառերի արվեստով: Կատարյալ է պատկերավորման և արտահայտչական միջոցների օգտագործման վարպետությունը: Բանաստեղծի մտածողությանը բնորոշ է պատկերավորությունը, ուստի ինքնատիպ ու նուրբ են նրա ստեղծած պատկերները:

Սգավոր հովը  
Գլորեց իրեն անդունդներն ի վար,  
Ուռեմնին հողի կրծքին հեկեկաց,  
Ծնկները ծեծեց,  
Եվ բարակ առուն նվազեց լացով: (Երկիր Ա, էջ 51)

Ինձնով է լեռը քևանցուկ անում  
անցնող դարերին,  
Ինձնով է սրբում բացված վարդերը  
մեկնում աշխարհին...  
...Ես լեռան ձեռքն եմ: (Էրկիր Ա, էջ 258)

Հակոբյան բանաստեղծի գրչի տակից առատորեն դուրս եկած մակդիրները, անակնկալ համեմատություններն ու ընդգրկուն փոխարերությունները նրբերանգմերով լրացնում են իրար՝ ստեղծելով ներքին բազմազանություն:

*Երբ ժաղիկները  
Սովոր ջուրն ի վար ձգվում են ճերմակ  
Ժապավենի պես,  
Խիղճ ցալում է: (Էջ 179)*

*Խելազա՞ր ամպեր...  
Քիչ ջուր են խմել մուսակա ձորից  
Եվ իրենց դրած հարրածների տեղ,  
Իրար հրելով,  
Ու օրորվելով երկինք են ելնում,  
Զարնվում իրար, մոնջուն հանում: (Էջ 38)*

Բանաստեղծի մոտ «ծառը ժպղում է», «ամպերը հալվում են», «երկինքը երազում է», «լույսը՝ մայրանում», «քավալվում է ժպղով», «երազները փարիլվում են», «հասունանում է օրը», «ծառը շոգում է», «լեռները քոչում են», «վարդերը՝ դիմում», «ասպղերը ծլում են», «գարունը կարովում է», «քառը ժաղկում», «քառը ժաղկում է լեռը», «օրը սահում է», «աշխարհը՝ կանաչում»:

Անձնավորվում են ծառ ու ծաղիկ, լեռներ ու ձորեր, արև ու լուսին, երկինք ու երկիր, ժայռեր ու երազներ, քարեր ու ժայռեր:

Բնության ամեն մի երևույթ, ամեն մի առարկա շարժման մեջ է՝ «ցանվում է լույսը», «ոռնում է մուրը», «կամարվում է քրենին», «քարը ճշում է», «արգասավում է արեր» և այդպես շարունակ:

Բանաստեղծական պատկերներն ուժեղացնելու համար նա սպորական մակդիրների, համեմատությունների և փոխարերությունների հետ հաճախ օգտագործել է բառերի առանձին հարադիր կապակցություններ, որոնք զայխ են լրացնելու մակդիրների շարքը՝ անձրևների գոար համբույր, արևի աշքեր, ամպի թելեր, մոմի արցունք, ասպղի թելեր, ցալի փոշիներ, ծառի ժաղանք, քախօնի շիրեր, ճանապարհի ցալ, համբույրների հով, սրբի փշրանքներ, լույսի մեջք, խավարի կուրծք, արեգակի ծոց, չյումի ծիծառ...

Բնականաբար, այդպիսի հոգեվիճակներ և պատկերներ ստեղծող բանաստեղծը վարպետորեն գործածել է նաև մակդիրներ, որոնք բանաստեղծությունը դարձնում են վերին աստիճանի ներդաշնակ և երաժշտական:

Առանձնապես ուշադրության են արժանի ճաշակավոր բառարդումների շնորհիվ ստեղծված մակդրավոր կապակցությունները՝ *համրացած ծառ, լուսնաբարախի ճամփա, շուշանարով զարուն, հոգնախոռվ քար, անթեյակամ սեր, կարկաչաշուրք առուներ, մաքրածուփ սեր, զունաբափ խաչամ, արևակունք աղջիկներ, մարմարաշուրք առուներ, քրքրված արև, երազակուր արցախուիի, արցախարույր պար, բռնրակրակ համբույր, զունաբափված հույս և այլն:*

Նուրբ են նաև փոխաբերական համեմատությունները, որոնցով անձնավորվում են բնության տարրեր երևույթներ:

*Ես Հայակալու սիրում եմ այնպես,  
որ երբ ուզում եմ  
բացվել խոսքերով,  
բառեր չեմ գլունում  
Եվ լուռ եմ մնում ծաղկած ծիրանու  
հնազանդությամբ: (Էջ 319)*

*Խաչքարը հայոց երկրի պարկերն է՝  
սուրբ, բիբլիական,  
Սասիսը՝ նրա կենարունում կանգուն,  
մեր սիրո մոնք՝ Աստծո առաջ: (Էջ 418)*

Բանաստեղծի մոտ հավատը «Ճյուղ է ու բացված քենք», *սիրով* «վիրավոր քենք է կոռունկի», չեռքերը «քնին պրված ճյուղեր են» և «երկինք նեպված հավերեց», միզրը «ճնորված ցողուն է ծաղկի», աչքերը «քոչող աղավնիներ են», «կոռունկի աչք է կարիլն արցունքի», հոգին «գմբեր է կախված զանգակից»:

Առանձին ուշադրության են արժանի բանաստեղծի գործածածքազմաքիվ բառեր: Առարկա կամ հատկանիշ ցույց տվող սովորական մի բառ նրա մոտ դրվում է շարժման մեջ: Բառը փոխում է իր խոսքիմասային պատկանելությունը, նորացվում ու գտնում է իր սե-

դը բանաստեղծության մեջ: Ահա այդպիսի բառերի օրինակներ՝ **բարձրածայնել, բալիսմանել, մարգարիտվել, բառավորվել, ասեղ-առվվել, կանաչովվել, մարմահունցվել, ամարասվել, ասդողով-վել, ծիլվորվել, արշալույսվել, գաճարվել, օրորոցվել..**

Վարդան Հակոբյանի բանաստեղծական լեզվի մեջ կարևոր տեղ են գրավում դարձվածքները, քանի որ հարազատ են ժողովրդական մտածողությանը:

*Փակ աչքերով է մարդ աշխարհ գալիս,  
Բացված աչքերով հեռանում-գնում: (Էջ 138)*

Խոսակցական բառաձևերի ճաշակավոր կիրառությունը ևս մեծացնում է բանաստեղծությունների ժողովրդական ոգին և կենդանի է դարձնում նրա խոսքը:

*Ամենավերջին խոհերս բացեմ  
իմ այսմամու  
զործած զոյմազոյմ  
կարպելի նման: (Էջ 362)*

Սի քանի տողի մեջ ամփոփված բանաստեղծ Վ. Հակոբյանի խոհը դառնում է խոսուն, դառնում ընդհանրական միտք, մի մեծ ընդհանրացում, որը գալիս է լրացնելու նրա բանաստեղծական արվեստը:

*Մարդը այնքան է  
Ապրում աշխարհում,  
Որքան ապրում է  
Հավալը նրա: (Էջ 116)*

*Կյանքը լծակ է արդար կշեռքի,  
Թերեւն ու ծանրը,  
Սիսալն ու ճիշդը նա պիտի ջոկի,  
Կարող ես միայն  
Դու ուղիղ պահիր թելը լծակի: (Էջ 134)*

Աշակերտներին (հատկապես ավագ դպրոցի) շատ են դուր գալիս բանաստեղծի համեմատության օրինակները, մակդրավոր կապակցություններն ու խոսակցական բառաձևերը, որոնք նրանք համարում են բանաստեղծի մտքի փայլատակման արդյունք:

Սիզակ ուսուցիչը շարադրում է, լավ ուսուցիչը բացակրում է,  
առաջավոր ուսուցիչը ցուցադրում է, մեծ ուսուցիչը ոգևորում է:  
Ուղարկություն

**ԲԱՆԱԱՏԵՂԾԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ՝  
ՈՐՊԵՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԱՆՓՈԽԱՐՔԻՆԵԼԻ ՄԻՋՈՑ  
(մեթոդական)**

Մենք գիտենք, որ մեր խոսքը պետք է հայոց լեզվի օրենքներով հյուսվի: Լավ խոսքն այն է, որ անկեղծ ու տպավորիչ արտահայտում է մարդու մտքերն ու զգացմունքները: Խսկ խոսքը, գիտենք, որ բառերից է ստեղծվում: Բառերն ել, մարդկանց պես, իրենց ճակատագիրն ունեն՝ զարմանալի և անկուսակի:

**Ճշմարտացի է գրել ոռու գրող Մայակովսկին. «Մի հապիկ բառի համար հազարավոր լուսնա բառահանք ես շուռումուո լալի... մի փուր աղ ես ուսում ու հարյուրավոր զանակների ծուխ կուլ լալիս՝ մարդկային լեզվի արդեզյան խորքերից մի բանկազին խոր դուրս բերելու համար»:**

Լավ խոսելու շնորհըն սկսվում է մշակվել մանուկ հասակից: Երկուսից հինգ տարեկան հասակը, ասում են, լեզու սովորելու ամենաբուռն շրջանն է (թոռնիկիս օրինակով համոզվել եմ դրանում), բայց դեռևս չզիտակցված այդ շրջանին հաջորդում է լեզու սովորելու զիտակցական շրջանը՝ դպրոցական հասակը: Հենց այստեղ է, որ գրական երկերի տեքստերի համակողմանի ուսումնասիրության միջոցով կարողանում ենք զարգացնել աշակերտների պատկերավոր մտածողությունը, երևակայությունը և խոսքը:

Իգուր չի ասվում, որ գրականությունը բարի գանձարան է, որա իմաստային նրբերանգների դրսնորման և գործածության անսպառ աղբյուրը:

Գրական-գեղարվեստական բնագրի հանգամանական ուսումնասիրությունը դառնում է խոսքի զարգացման միջոց, որը կփորձեն բացատրել **Վ. Տեղյանի «Տիրություն» բանասպեղծության՝ իմ դասավանդման մանկավարժական վորչից (8-րդ դասարան):**

Դասը պլանավորվում է Խիկ համակարգով:

**Խթանման փուլում** «Բառ-բանալի» մեթոդական հնարն է օգտագործվում, որը կարելի է կիրառել փոքր ծավալ ունեցող ստեղծագործությունների ուսուցման ընթացքում: Բանալի բառը դառնում է «տխրությունը», որը դիտվում է որպես հոգեկան վիճակ և տրամադրություն:

Գրատախտակի կենտրոնում գրված բանաստեղծության վերնագրի շուրջ **մտազրողի** միջոցով արտահայտվում են տարբեր մրտքեր, գաղափարներ: Ամեն միտք, թեկուզ անվտան և վախվորված, խրախուսվում է: Այդ մեթոդի սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ բացառվում է առաջադրված լուծումների մասին անել որևէ քննադատություն կամ տալ գնահատական: Յուրաքանչյուր աշակերտ ազատ և անկաշկանդ արտահայտում է իր իմացածը, չի անհանգստանում մխալվելուց, հակասական մտքեր արտահայտելու մտավախություն չի ունենում: Այդպիսի անկաշկանդ մըքնուրութի ստեղծումը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը: Եվ յուրաքանչյուր աշակերտ արտահայտում է այդ պահին նաև իր տրամադրությունը, որը, ի վերջո, հանգեցնում է «Տերյանական տրամադրության» բացատրությանը:

**Բանալի բառի** շուրջ ծավալվող մտքերի խմբավորման արդյունքում աշակերտները հասկանում են, որ «տխրություն» բառը, ըստ խոսքիմասային պատկանելության, վերացական գոյական է, ըստ կազմության՝ ածանցավոր բառ՝ «ուրյուն» վերջածանցով, կազմված է «տխուր» արմատից, որը ածական խոսքի մաս է (տխուր հայցք), բայի հետ գործածվելիս հանդես է զայս մակրայարար (տխուր երգել): «Տխրություն» բառի հոմանշային շարքը կլինի՝ տրտմություն, անուրախություն, մելամաղճություն, վիշտ, թախիծ..., նաև՝ ձանձրույթ, տաղտուկ..., հականիշները՝ ուրախություն, զվարճություն, անսրտմություն...»

Հաշվի առնելով, որ բնագրի լավագույն մեկնաբանությունը բառային և պատկերային համակարգի ուսումնասիրության և բացահայտման համակողմանի գործընթացն է, **խմաստավորման փուլում** խմբային աշխատանք է կատարվում:

**Գասարանը բաժանվում է խմբերի**, և տրվում են նախօրոք պատրաստված առաջադրանքները: Յուրաքանչյուր խումբ ինքը կարող է ընտրել բերթիկը, որտեղ գրանցված է առաջադրանքը:

- ա) Բանաստեղծության մեջ գործածված հետևյալ բառերի հոմանշային և հականշային շարքերը կազմել՝ իրիկնաժամ, անորջ, շշուկ:
- բ) Կազմությամբ ածանցավոր բառերը գտնել, ընդգծել արմատներն ու ածանցները (սահուն, աննշմար, մեղմիվ...):
- զ) Գտնել բանաստեղծության մեջ գործածված միակ բարդ բառը և նրա արմատներով նոր բառեր կազմել (իրիկնաժամ-իրիկնադեմ, ժամադրություն...):
- դ) «Ծաղկիկ» ընդհանրական անվանումը մասնավորեցնող շատ ծաղկների անուններ գրել (Վարդ, մանուշակ...):
- ե) Գտնել մակդրավոր կապակցությունները (սահուն քայլեր, քնքուշ խոսք...):
- զ) Բանաստեղծության մեջ գտնել համեմատությունները (որպես քընքուշ մուրի թև, թփերն օրորող հովի պես...):
- Տրվում է ժամանակ, խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները, նպատակահարմար է՝ ամեն խմբից մեկ աշակերտ ներկայացնի քննարկման արդյունքները: Կարելի է նաև մնացած աշակերտներին ընդգրկել. առաջարկվում է հնարավորինս ավելի շատ բառեր ավելացնել կազմած բառացանկին:

«Իրիկնաժամ» բառի բացատրության ժամանակ կարելի է կանգ առնել «մքնշաղ» հոմանիշի վրա: Դա իրիկնաժամի թերև աղջամուղջն է, ավարտվող լույսի և սկսվող մուրի պահը, երբ երազներով տարված՝ հաճելի է դառնում զբոսնելը:

Այդ պահը իր հետ թերում է նաև համապատասխան ապրումներով տարված հերոսի, որը երազում է, երևակայության մեջ է ընկնում, երանելի, փափագելի զգացողությունների շուրջ սկսում է մտութել, և այդ տեսիլքը դառնում է անուրջ: Հենց դրանից էլ ծնվել է Վ. Տերյանի «Մքնշաղի անուղղներ» բանաստեղծությունների առաջին ժողովածուն (1908թ.): Շարքը բացվում է «Տիրություն» բանաստեղծությամբ, որն ամբողջությամբ մի հիանալի գեղարվեստական պատկեր է՝ ընդգրկված ուր տողի մեջ:

*Սահուն քայլերով աննշմար, որպես քնքուշ մուրի թև,  
Մի լսարկեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիկ շոյելով,  
Իրիկնաժամին թփերն օրորող հովի պես թիթել  
Մի ուրու անցավ, մի զունապ աղջիկ ձերմակ շորերով:*

Հենց առաջին տնից էլ նկատելի է, որ այն ունի խաչաձև հանգա-  
վորում:

Բանաստեղծությունը կարդալիս աշակերտները զիտակցում են,  
որ մի բաքուն բախճուտ մեղեղի շարունակ ուղեկցում է ընթերցողին,  
և որ բանաստեղծությունը գրված է արտասովոր նրբությամբ և ունի  
գերող երաժշտականություն: Պատահական չէ, որ *Տերյանի խոսքե-  
ռով շապ երգեր են գրվել, որոնք չափազանց հոգեհարազարդ են  
մեզ: (Երանի թե դասարանում երգող լիներ...):*

Խորն ապրած տիսրությունը՝ որպես հոգեկան երևոյթ, այստեղ  
արտահայտվում է խորհրդանշական պատկերով, որը նյութին հա-  
մապատասխան հնչում է անսովոր քնքշությամբ: Տիսրությունը՝ որ-  
պես տրամադրություն, մարմնավորվում է գունատ աղջկա տեսիլով,  
նաև զալիս է տիսրությամբ լցնում արձակ դաշտերի ամայությունը:

**Նույնիսկ նկարելու շնորհ ունեցող որևէ աշակերդի առաջարկ-  
վում է զրագուշակական պատկերել այդ գունավ աղջկա՝ անորդ  
կույսի էսքիզը:**

Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնչաց,  
Կարծես թե սիրո քնքով խոսք ասաց նիշիող դաշտերին,-  
Ծաղիկների մեջ այդ անորդ կույսի շշունջը մնաց,  
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրով լցրին...

Աշակերտները պետք է հասկանան, որ խորհրդավոր է հնչում  
քննարական հերոսուհու շշունջը, հետևաբար այստեղ աղջիկն ինքը  
ևս քննության մաս է, որ ծովզում է ծաղիկներին և վերապրում բա-  
նաստեղծի էության մեջ: Նրա շշուկը փոխանցվում է ծաղիկներին,  
որոնք ել այդ «սուրբ շշուկով» լցնում են բանաստեղծի սիրտը:  
«Ծշուկ» բառը կրկնվում է երեք անգամ, որ ինքնին հուշում է «Սրբն-  
շաղի անորդների» և Տերյանի ամբողջ պոեզիայի էությունը: Այս-  
տեղից էլ պիտի ծնվեին «Աշնան մեղեղի», «Ծշուկ և շրջյուն» հայտ-  
նի բանաստեղծությունները, որոնց մեջ ևս նուրբ և զգայուն հոգու  
տեր բանաստեղծն արտահայտել է իր հոգեկան ապրումները:

Հարմար է այստեղ հիշել Ստեփան Զորյանի խոսքերը, որ այդ  
տարիներին ամենքը հմայված էին Տերյանով: Գրական մքնուրութը  
շնչում էր նրա բանաստեղծություններով:

Աշակերտներն այսպիսի ուսումնասիրությունից հետո հասկա-  
նում են, որ, իրոք, Տերյանի տաղանդը դրսևորվել է նաև բառնարու-

թյան և բառօգտագործման մեջ, որոնց շնորհիվ նրա բանաստեղծությունները ձեռք են բերել բացառիկ սահունություն և ներդաշնակություն: Իրոք, նույրը և հմայիչ են նրա բանաստեղծությունները, նույնանգան գեղեցիկ, որքան իր հայրենի Զավախսի բնությունը: Եվ տիսրության սկզբած անուրջները մեկը մյուսի հետևից ներկայացնում են այն մեծ բախիծը, որն իր իսկ խոսքերով «այնպես լուսավոր է» և տիսրությունն էլ՝ «այնպես բերև»:

**Կշռատաման փողում «Քառարաժան»** պարզագույն մեթոդական հնարն է օգտագործվում: Աշխատանքն սկսելու համար անհրաժեշտ է գրատախտակի կամ թղթի մակերեսը բաժանել չորս մասի՝ յուրաքանչյուր մասում մտքերը համապատասխանաբար գրանելու համար:

- Գործածված տեսողական պատկերներ (աղջկա տեսիլք, արձակ դաշտեր...):
- Լսողական ճայներ (շշունջ, տիսուր և հոգեպարար մեղեղի...):
- Ապրած զգացողություն (տիսրություն, հոգեկան ներքին խոռովը):
- Զենավորված կարծիք (յուրաքանչյուրն իր կարծիքն է գրում):

Այսպես՝ «**Քանասպեկտան ապրել է դրամադրությունների վերելք՝ մոռայլ և փիտոր ապրումներով, աշնան բախծով մեղեղիներով, նրակերպ մթնշաղի և վերջալույսի պայկերներով: Իմ կարծիքով, նա նման է արև, կարող երգած «Հանճարեղ պատանի» Մ. Սեծարենցին»:**

Այս մեթոդը նպաստում է՝ պարզելու սովորողների ստացած գիտելիքների շափո, կարողությունների և հմտությունների մակարդակը: Անհատական աշխատանքի դեպքում զոյլգերն իրենց գրառումները ներկայացնում են միմյանց, որից հետո աշխատանքը ներկայացվում է նաև ամբողջ դասարանին:

Կարող ենք առաջարկել նաև բանաստեղծության բովանդակության ազատ շարադրանք: Այս աշխատանքն ուղղված է աշակերտների ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և երևակայության զարգացմանը: **Հինգ րոպեանոց շարադրամքն** օգտագործվում է դասի վերջում, որպեսզի աշակերտները կարողանան ամփոփել ուսումնասիրվող թեմայի շուրջ իրենց մտքերը, և ուսուցիչներն էլ առավել հստակ պատկերացնում ունենան դասի մտավոր ներգործության վերաբերյալ:

Աշակերտները կարող են նաև թեմայի մասին իրենց անհասկանալի որևէ հարցով դիմել ուսուցչին:

Տերյանի հերոսուհուն աշակերտները տեսնում են բնության գըրկում, նա անցնում է «ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով», նրա անցնելը նմանեցվում է «թփերն օրորող» թերև հովին, նա սիրո խոսք է ասում «նիրիող դաշտերին», նրա շշուկը փոխանցվում է ծաղիկներին, որոնք ել այդ «սուրբ շշուկով» լցնում են տիսրություն ապրող բանաստեղծի սիրտը: Գունատ է աղջիկը ճերմակ շորերի մեջ, ստվերի պես ամնշմար ու անմարմին, մքնողրտը լցնում է ազնիվ տիսրությամբ և գերող բախիծով:

Այստեղից հետևություն՝ աղջկան բնորոշ բոլոր հատկանիշները տերյանական տևական բախսի խորիորդանշաններն են, որոնք ներկայացվում են նուրբ երանգով, տիսուր մեղեդայնությամբ: Խաղաղ իրիկնաժամի երազանքի մեջ բանաստեղծը մերժում է ցերեկվա դաժան աղոնուկը, քանի որ հոգին ծարավ է նուրբ շշուկների: Հենց այդ պահերի ծնունդ են նրա քննարական ստեղծագործությունները, որոնց մեջ նրբորեն ներդաշնակվում են բանաստեղծի երազային տրամադրությունները:

**Որպես գլաւիին հանձնարարություն՝ առաջարկվում է գրել շարադրություն «Տերյանական գլաւամարդություն» վերմագրով:** Այսինքն՝ ներկայացնել այն հոգեվիճակները, որոնք առաջացրել են այդ տիսրությունը: Դա մեկ հեռացած սերն է, մեկ՝ մահվան շունչը, որ հայտնվում է աշխան բազմապիսի պատկերներով, մեկ՝ լրված սրտի անծայր կարոտը...

Պարտադիր պայման է բոլոր ցանկացողների աշխատանքների դասարանային ուսնկնդրումը, իհարելե, հաջորդ դասաժամին: Դասարանում կարելի է «Հեղինակի աքոռին» նատել և կարդալ շարադրանքը: Այս մերողն օգնում է գրավել շրջապատի ուշադրությունը սեփական անձի նկատմամբ: Մերողի շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում է պատասխանատվության զգացում: Նրանք նատում են իրենց հատկացված աքոռին և պաշտոնական հնչեղություն տալիս խոսքին: Աշակերտների մեջ ձևավորվում է սեփական խոսքին հետևելու կարողություն, ինչպես նաև բարձրացնում է ինքնարժենում ու ինքնազնահատականը:

Այսպես՝ ցանկացած գրական երկ կարելի է ծառայեցնել հիմնա-

կան նպատակին՝ աշակերտների ազատ, անկաշկանդ խոսելու և սեփական մտքերը դիպուկ ու պատկերավոր լեզվով արտահայտելու կարողության զարգացնանք:

Ընդհանրապես, չափածո տերսութի բառային, պատկերային համակարգի ուսումնասիրությունը սովորողների պատկերավոր մտածողության և խոսքի զարգացման անփոխարինելի միջոց է, ուստի այն պետք է հնարավորինս ճիշտ ծառայեցնել առաջադրված նպատակներին հասնելու համար:

Երե երեխան շարունակ քննադարվում է, կտովորի մեղադրել: Երե երեխան շրջապատված է քշնամանքով, կտրամադրվի պայքարի: Երե երեխան ծաղրանքի է ենթարկվում, երկշող կդառնա: Երե շարունակ ամոքանքի է ենթարկվում, մեղքի զգացումը չի լրի նրան: Երե հանդուրժողականության մընդորդում է ապրում, համբերափար կլինի: Երե իրափուսավում է, վարահություն չենք կրերի: Երե զովասանքի է արժանանում, կտովորի գնահատին: Երե ազնվության մեջ է միծանում, արդարամիտ կդառնա: Երե ապահովության մեջ է միծանում, կտովորի հավաքալ: Երե հավանության է արժանանում, ինքն իրեն կգնահատի: Երե ջերմությամբ է շրջապատված, կտովորի սիրել: Դորոքի Լո Նոլը

## ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՈՃԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՇԱԲԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ուսուցողական)

Կա գեղարվեստական խոսքի, շարադրանքի գրագիտություն, որը սերտորեն կապված է մարդու մտածելակերպի հետ: Այստեղ է, որ ուսուցիչը պետք է ավելի շատ ջանք թափի՝ հասնելու սովորողների ինքնուրույն խոսքի զարգացմանը:

Գրավոր խոսքը համակողմանիորեն է ներկայացնում մարդուն, բնորոշում նրա լեզվամտածողական բարձր կուլտուրան, նաև՝ հոգեբանությունը: Աշակերտների գրավոր խոսքի մշակման և կատարելագործման ուղղությամբ մայրենին ուսուցչի աշխատանքը տարողունակ է ու դժվարին, երկարատև ջանքեր պահանջող:

Նախ և առաջ մենք պետք է մեր սաներին սովորեցնենք հայերեն մտածել, այսինքն՝ հավատարիմ լինենք մայրենի լեզվի յուրահատկություններին, տվյալ լեզվի մտածողությանը, ոճին և ոգուն: Եթե խոսում ենք շարադրությունների մասին, ապա մենք գործ ունենք գեղարվեստական ոճի հետ, որը լինում է հուզական և պատկերավոր: Գեղարվեստական երկը գործ ունի ընթերցողի ոչ միայն մտքի, այլև սրտի հետ, նպատակ ունի հուզականորեն համակենու մարդուն, ներազդելու նրա հոգու վրա:

Գեղարվեստական ոճի այդ հատկանիշը նկատի ուներ Դ.Դեմիրճյանը, երբ գրել էր. «**Ոճը խոսքի ժպիտն է, տիրությունը, զայրույթը, խոհական երազանքը»:**

Թերևս որոշ աշակերտների ստեղծագործական շարադրությունների համառոտ մեջբերումների միջոցով կփորձեմ բացատրել գեղարվեստական խոսքի ուժն ու հմայքը: Դրանք պետք է ծառայեցնել գեղեցիկը ճանաչելուն ու նրան նմանվելուն:

Ոչ բոլոր աշակերտները կարող են ստեղծագործական հակումներ ունենալ, բայց եղածներին պետք է համոզել, որ պատումը պետք է լինի պարզ ու հասկանալի, հուզիչ ու դուրալի:

**«Մայ յր... Ծաղկի բուրմունք է ու սոճու նազամիք:**

**Աշխարհի բոլոր լեզուներով այդ բառը հնչում է միասնամ, բայց, չգիտեմ ինչու, երբ հայերեն է հնչում, ես այդ բառի մեջ վեհություն եմ դեսնում և այդ վեհության դաշկ՝ բողարկված բախիծ: Անաղարգությունն է ծորում այդ բառից և բաղցրությունն մեղրի պես: Արմագներով հողին կառչած ծառերի ամրությունն եմ դեսնում այդ բառում և նվազած սիրով որդու գունդարչի ճանապարհին սպասող... »:**

Խոսքի ախորժալուր, դուրեկան լինելու պարագան լավ ոճի առաջին նշաններից է: Խոսքը չի կարող հուզական շունչ ունենալ, եթե ճիգով է արտաքրեվում կամ գրվում:

Հարադրանքը պետք է լինի կենդանի, թրթուն, հուզականորեն վարակիչ: Պետք է կարողանալ այնպես շարահյուսել բառերը, այնպես համադրել ու ներդաշնակել, որ բառերն իրենց լավ զգան, ժատան ու ճառագեն, հանդեն բերեն իրենց բույրն ու հրապույրը:

**«...Հեկոն երկիրս փառավորվել է, հազել է ծիրանին, ու փողին է հնչել ամենուր, հնչել է հայի երգը, նրա երգի ելեկջները բարածվել ու սիփովել են աշխարհով մեկ... Քարն իմ Արցախում դարձել է նուռ, խաղող, ծաղիկ, դարձել է արծիվ, Ամարաս ու Գանձասար... »:**

Երկրորդ նախադասության մեջ «դարձել» բայն իր շորջն է համախմբել մի շարք առարկա ցույց տվող բառեր, որոնք հիանալի պատկեր են ստեղծել: Բայց լինում են շարադրություններ, որտեղ նկատվում է իրենց տեղը չորրված բառերի կուտակում, մի խոսքով՝ բառակույտ: Եվ երբ այդ բառերն իրենց տեղերն են դրվում, ստանում են իմաստ և կարևորություն:

Դրանից հետևում ենք, որ անձաշակ ու գռեհիկ լինում են ոչ քե բառերը, այլ՝ դրանց կիրառությունները: Այստեղ է, որ երևում է բա-

ոի գեղագիտությունը՝ անկախ այն բանից, թե դա գրական լեզվից է առնված, թե՝ առօրյա-խոսակցականից:

Ուշադրություն դարձնենք հետևյալ տեքստին:

**«Քարաշապ է Արցախը, բայց այնքամ է զրկված եղել, որ շատ անզամ չի կարողացել քար դնել իր ամենասիրելի զավակների շիրմներին: Հրի ու սրի հետքեր կամ այդ քարերի վրա, ամենուր հրակոծված, քարակոծված, հողմածնեծված հիշապակներ են ու ակնված խաչքարեր: Հողմն էլ ակնված է Արցախի, իսկ այդ ակնսներուն դարձր են ընկած»:**

Այստեղ հակառակ հարակատար դերբայի բազմաթիվ կրկնություններին՝ պահպանվել է գեղարվեստական խոսքի պատկերավոր և հուզական կողմնը:

Դեռևս հին ժամանակներից մշակվել և մեզ են հասել խոսքի ձևավորման հատուկ եղանակներ ու միջոցներ, որոնք, ընդհանուր առմամբ, կոչում են պատկերավորման-արտահայտչական միջոցներ:

Չատ կարևոր է առարկային հատկանիշ վերագրելու կարողությունը: Մակդիրը, որ օգտագործվում է գեղարվեստական խոսրում, նմանության շատ եղբեր ունի ածականի հետ: Ընդհանուրն այն է, որ և՛ մակդիրը, և՛ ածականը բնորոշողի դեր ունեն խոսքի մեջ: Բայց եթե մակդիրը տալիս է պատկերավոր բնորոշում՝ վառ երազներ, ծով աշքեր, ապա ածականը տալիս է տրամարանական բնորոշում՝ կապույտ երկինք, բարձրաբերձ լեռներ...

**«Հայրենիքը կապույտ հորիզոնների անսահմանությունն է ու երկնակարկառ լեռների քարեղենի հավերժությունը: Հայրենիքը նախնականի հերոսապումներով հարսպացած հնօրյա մազալար է ու նահապակների արյունով սրբազնութեած նշխար...»:**

Մակդիրները բնորոշ են գեղարվեստական ոճին, և հաճախակի եմ նկատել, որ այն արտահայտվել է նաև բառակապակցությամբ:

**«Անկախությունը հավերժի ճանապարհ է, որի վրա բափվել է արդար արյուն, հաց սպեղծելով բրդիմք, գիր ու մաշյան արարելու կամք ու հանձար»:**

Լինում են շարադրություններ, որտեղ քերականական ոչ մի սխալ չի նկատվում, բայց ինքնուրույն մտքի հեռավոր ապացույց էլ չես տեսնում:

Ծատ կարևոր է նաև համեմատությունների, փոխարերությունների և այլ պատկերավորման արտահայտչամիջոցների օգտագործումը: Դրանք շատ հաճախ մենք չենք ստեղծում, այլ գործ ենք ածում վաղուց ի վեր գտնված բյուրեղացած ձևեր: Իսկ ժամանակին դրանք ստեղծել են շնորհալի նարդիկ: Եվ առհասարակ պատկերավոր, իմաստալից, բարձրացունչ մակդիրներ, համեմատություններ, փոխարերություններ ստեղծելը շնորհրի գործ է:

Սիա համեմատության մի օրինակ. «**Խմ չընադ հայրենիքն այսօր ինչ 15-ամյա աղջնակին նման անսահման սեր ու հույս ունի, խոռվը ունի և ընդզումներ: Ես էլ իմ երիկասարդ հայրենիքի նման եմ խոհուն են արդեն աչքերս, բարձր է հասակս, ճակապս՝ պարզ, իսկ հոգին մարդու»:**

Լինելով լեզվի պատկերավորման միջոցների նախնական և պարզագույն ձևը՝ համեմատությունը միաժամանակ հանդիսանում է նրանց բոլորի իմքը և լայնորեն կիրառվում է գեղարվեստական խոսքի մեջ:

«**Արախս աշխարհի ժողովուրդը ցավը մենակ գորավ, չընկալեց և չկուցավ, քանզի զիտեր Հայկի պես ընդզել, Արայի պես սիրել, Վարդան զորավարի պես մարդիրոսավել ու Մաշտոցի պես լույս արարել, Գանձասար ու Ամարաս կերպել, «Հայր մեր» մրմնազ...»:**

Աշակերտների շարադրություններում մտքի լավագույն պատահիներ են նկատել, որոնք հիացրել են ինձ:

«**Քո ժպիպը զարնանային արևի շողերի նման ինչ համար առավով է բացում»:**

Ընդամենքը մեկ նախադասություն, որտեղ «ժպիտը» նման է «արևի շողերի» (համեմատություն), բայց այդ նույն «ժպիտը» նաև «առավոտ է բացում» (փոխարերություն): Վերջինիս մեջ արդեն բացակայում է համեմատելին, այսինքն՝ հենց դրանով է տարբերվում փոխարերությունը համեմատությունից:

Սիա փոխարերության նմանատիպ մի հիանալի օրինակ:  
**«Հշողությունն այսպես պապերազմի հեղոքերն է հավաքում ու խնամքով զեփեղում հուշերի մապյանում»:**

Աշակերտների շարադրություններում շատ ժամանակ նկատվում են բայց ժամանակածների խախտում և դիմային անհամաձայնություններ, որոնց պետք է լուրջ ուշադրություն դարձնել:

Բայն է խոսքին կյանք, ուժ, կենդանություն պարզեցում, բայի շնորհիվ է, որ մենք արտահայտում ենք մեր ցանկությունները, հոգեվիճակը, վերաբերմունքը, մեր հուզումները: Բայերի ոճական հնարավորությունն այնքան շատ է հայերենում, որ պետք է միայն կարողանալ լավ օգտագործել դրանք գրավոր խոսքում:

Հնարավոր է նաև սովորական պարզ նախադասություններով ձևավորել գեղարվեստական խոսքը՝ խուսափելով բարդ և ծավալուն նախադասություններից, որը հաճախակի է նկատվում շարադրություններում:

**«Քուրումնավել գարնան շումչը մի պահ կանգ առավ, քարավ... Ակավեց օրհասականը: Սուզը նորից մեր գունը մարավ: Կրկին լաց եղան մայրեր ու քույրեր: Այրիացան դեռավի հարսներ, որրացան դեռ աշխարհ չեկած անմեղ մանուկներ: Եվ ամուսնական մահիճ չբեռած, օրոցրի կարուք հայ պատրանիներ զոհվեցին ամեն օր: Հայ քաջորդին զիրակցարար գնաց դեպի մահ: Կորսարի ցավից կուչ եկավ հայի սիրով: Զոհվածների սուրբ արյամբ ցողվեց հինավորց հողը արցախյան»:**

Աշակերտներին անհրաժեշտ է միշտ համոզել, որ ստեղծագործել, նշանակում է սովորականի մեջ անսովորը գտնել: Համոզել այն սովորական սկզբունքի մեջ, որ ամեն մի ստեղծագործական շարադրություն պատմվածք է: Աշակերտները պետք է կարողանան տարբերակել պատմական շարադրանքն ու գեղարվեստական խոսքը: Ստեղծագործելու համար աշակերտը պետք է գերծ մնա պատմական փաստերի մասին դասագրքերում տրված տեղեկություններից:

**«1988 թվական, դեկտեմբերի 7: Երկրաշարժ էր: Հայ ժողովուրդը ցնեցվեց, շվարեց... Սև ամպեր կուտակվեցին երկնակամարում: Նորից սուզ հագավ հայոց աշխարհից: Վիշտը պատեց սեզ ժայռերին, զանգահեր անդատներին, այն ալիրվեց դեպի հեռու - հեռուները...»:**

Գեղարվեստական լավ խոսքի պարտադիր հատկանիշը տրամաբանված լինելու է: Իսկ դա այն խոսքն է, որ միտքն արտահայտում է հստակ, առանց ավելորդ բառերի:

Լավ խոսքը նաև սեղմ ու ստույգ խոսքն է, իսկ այդպես խոսելու կամ գրելու համար հարկավոր է վարժվել այդպիսի մտածողության, որի համար էլ փորձում եմ աշակերտներին ուսուցանել, որ խոսքը

շախտք է ճապաղ լինի, ձգձգված, նույնիսկ ծավալով փոքր, սեղմ շարադրանքն էլ պետք է իմաստալից լինի, գեղարվեստորեն հագեցած:

Ահա մեկ նախադասություն և ամբողջանում է հայրենիքի պատկերը:

**«Դրախտային իմ սուրբ օրքանում խաչվել են սրերը, արկերն են քննացել, արշալույսները ներկվել են արյամ»:**

Գեղարվեստական խոսքի խտացված մի ուրիշ արտահայտություն.

**«Փետրակոր ամպերը, քամուց հալածված ու իրանած, լողում են կապույտ լազուրում»:**

Սովորաբար մեծ գրողներին կոչում ենք գեղարվեստական խոսքի վարպետներ: Եվ ումի՞ց մենք պետք է ուսանենք ստույգ, հստակ, տրամաբանված խոսքի արվեստը, եթե ոչ այդ վարպետներից: Դրա համար էլ գրականությունը մեզ տալիս է բոլոր հնարավորությունները, որպեսզի ուսուցանենք մեր աշակերտներին ճիշտ խոսելու և գրելու արվեստը: Իգոր չի ասված, որ արվեստը ծառայում է աշխարհի ճանաչողությանը, միայն թե ամեն մեկն՝ իր սեփական միջոցներով:

Լավ խոսքի գաղտնիքը ճշխության մեջ չէ, ոչ էլ՝ հազվագյուտ բառեր գործածելու, այլ ասելիք ունենալու, և ասելիքը լեզվական ստույգ միջոցներով, տրամաբանված ընթացքով մատուցելու մեջ է:

Ուսուցչի համար լավ խոսքը նաև իր աշակերտների անկեղծ խոսողվանությունն է. «Մենք հպարտ ենք, հպարտ ենք Զեղմանը, որ ամեն օր սրբարաց ժպիռում եք և պատմում մեզ հույսով ապելու հերիաքը հայոց աշխարհի... »:

Այստեղ է, որ մանկավարժական ոգևորությունն ու լավատեսությունը դառնում են գործի հաջողության կեսը: Իսկ մեծն Նժդեհն ասում էր. «Հեռու նրանցից, ովքեր ընդունակ չեն ոգևորության»:

Այն ուսուցիչը, որը կարողանում է իր սաներին օժդիկ  
աշխափանքի մեջ ուրախություն գրնելու  
ընկունակությամբ, արժանի է դափնեպահի:  
Է.Հարարդ

**ԵՐԲ ԳՐՈՂԻ ԱՆՀԱՏԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՈԽՍՈՒՄՆԱԽԻՌՈՒՄԸ  
ԴԱՌՆՈՒՄ Է ԱՇՎԿԵՐՏԻ ԱՆՁԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ  
ԴԱՍԻԱՐԱՎԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՅՑ  
(զեղագիտական)**

Զափազանց դժվար է դեռահասի դաստիարակության գործը: Ծատ դեպքերում նրանք ճիշտ չեն պատկերացնում կյանքը, և նրանց զգացմունքները հակասական են լինում: Երբեմն մենք՝ ուսուցիչներս, ականատես ենք լինում աղջիկների ու տղաների միջև ստեղծված ռոնանտիկ սիրո պատկերների, որոնք բացասական ազդեցություն են գործում նրանց ուսումնական գործընթացին, խանգարում նրանց միտքը, ուսումը նրանց համար դառնում է երկրորդական: Նրանք այդ դեպքում չեն սիրում, եթե իրենց դիտողություններ են անում: Ծատ ժամանակ նրանց քվում է, թե մեծերը մի նպատակ են հետապնդում միայն՝ բացահայտել իրենց բերությունները, և փորձում են գործել նրանց հակառակ: Մենք զիտենք, որ սեռական հասունությամբ պայմանավորված՝ փոխվում է նրանց վարքը, վերաբերմունքը շրջապատի նկատմամբ, նրանք դառնում են դյուրաքորոքոք ու կրքու, և նոր վիճակներ են ստեղծվում նրանց համար:

Ավագ դպրոցում մենք գործ ունենք նաև դեռահասների հետ, որոնք ևս հակասական են ու հախուռն: Մանկավարժը նաև հոգեբան է և զիտի, որ սերը երջանկության, կարճատև բերկրանքի հետ միասին պարզեւում է նաև դառնություններ, վերքեր, փշում է մարդու սիրտն ու հավատը, մատնում անմռանալի տառապանքների:

Իրականում ուսուցիչը, նայելով աշակերտի դեմքին, պետք է կարողանա հասկանալ նրա տրամադրությունը, նրա հոգում կատարված տեղաշարժերը: Ինչպես ասում են՝ նա պիտի կարողանա «խաղալ», այսինքն՝ պետք է աննկատելիորեն թափանցի աշակերտի հուզաշխարհը ու ուղղորդի նրան ճիշտ ճանապարհով: Բնավ, չըրցանցելով մանկավարժին ներկայացվող պահանջներից և ոչ մեկը,

առավելապես կարևորում եմ ուսուցչի հուզագացմունքային, արտահայտչական (էքսպրեսիվ) և պերցեպտիվ ընդունակությունները (երբ ճանաչում ենք աշակերտի հոգեբանամանկավարժական և տարիքային առանձնահատկությունները): Դպրոցականի տարիքային յուրաքանչյուր շրջանի մասին ամբողջական պատկերացում ունենալը ներդաշնակում է ուսուցիչ և աշակերտ հարաբերություններին:

Ուսումնադաստիարակչական գործընթացում մենք հանդիպում ենք այնպիսի աշակերտների, որոնք ամբողջական պատկերացում չունեն սիրո բյուրեղային զգացման մասին և կարծես չեն ել համաձայնվում այն մտքին, որ սերը սահման չունի, չի ճանաչում ժամանակ, տարիքը ու տարածություն, և ամեն ինչ անզոր է զգացմունքի ուժի առաջ: Նույնիսկ զարմանում են, որ մարդ կարող է կեսդարյա մերժված սիրո զգացումն ունենալ՝ հանձին Խահակյան գրողի: Քայց դեռ հարց է, թե նրանք որքանո՞վ են լուրջ ընդունում, երբ ընթերցում են Թումանյան և իմանում, որ Անուշի համար սերը եղել է մի ամբողջ աշխարհ, միակ հենարանը կյանքում, և որ հովիկ Սարոյի և Անուշի սերը եղել է փոխադարձ, պայծառ ու պարզ, ինչպես հայրենի բնությունը և գեղջկական մաքոր հոգին:

Գրականությունն այն առարկան է, որն ունի հզոր ուժ, որով կարելի է ներազբել աշակերտի հոգու վրա, որն անհրաժեշտ է ժամանակակից սերնդին: Ուստի գրականության ուսուցչից շատ բան է կախված: Աշակերտը պետք է իմանա, որ միջնադարի մեծ բանաստեղծներ Նահապետ Քոչակից և Սայաթ-Նովայից հետո շատերն են գրել սիրո հիանալի երգեր, որոնցով փորձել են բափանցել մարդու ներաշխարհը և որպես հոգեբան՝ նրանք ել փորձել են գտնել սիրո գաղտնիքն ու առեղծվածը: Իսկ Սայաթ-Նովան կատարելության է հասցել կնոջ արտաքին գեղեցկության գովքը, որն սկիզբ էր առել Գրիգոր Նարեկացուց:

Գրականության ուսուցման ընթացքում ուսուցչի աշխատանքը տարողունակ է, ուստի մեզանից յուրաքանչյուրն արդյունավետ պետք է անցկացնի ցանկացած դաս՝ այն զուգակցելով նաև գեղագիտական դաստիարակությանը:

**Մուրացանյան օրերի շրջանակներում, ծրագրային նյութերին զուգահեռ, փորձեցի մի նոր հետաքրքրություն փնտրել:** Եվ շուտով

աշակերտները մեծ սիրով «գործի անցան»:

Մուրացանի նամականու շարքն էր դրված սեղանին, որ բացառապես ուղղված էր իր սիրած աղջկան և ապագա կնոջը՝ Ռոկիին:

Չեզքից ձեռք էր խլվում գիրքը, յուրաքանչյուր ոք փորձում էր իր համար հաճելի տողեր ընտրել արտասանելու համար: Այդ ո՞ր մի դեռահասի համար հաճելի չէր, որ մի օր էլ իրեն ուղղվեին այսպիսի տողեր. «Ես այժմ էլ քեզ սիրում եմ նոյն կուսական և ասպավածային սիրով, երբեմն ես այդ սիրո մեջ այնքան եմ օրորվում, որ կարծես սկսում եմ հոգվել, անզոյանալ...»:

Մուրացանի անձնական խոհերում աշակերտը նկատում է, որ սերը վերածում է մի յուրօրինակ հավատամքի: Նրա նամակներում նկատվում է, որ վերհուշերի ոռմանտիկ գեղեցկությամբ նա կառուցում է մի սիրո պատմություն. «Զէ՛, սիրելին, անհրաժեշտ է, որ մի ազակ օր, առավորից մինչև երեկո, միասին նստենք մի կանաչ տեղ հովանավոր և մենաւոր ծաղի դակ և նորեն միմյանց ծանրանակ, միմյանց ուսումնասիրենք...»:

Աշակերտը պետք է գիտակցի, որ սիրո ոռմանտիկական գեղեցկությունը վաղանցիկ հրապույր չափանի լինի, այլ՝ հավիտենական միություն: Սրբազն միությունը պահպանելու համար պետք է Մուրացանի նման արվեստագետ լինել և հավերժության բանաստեղծ. «Օ՛, քեզ զիրենայիր, քեզ հենց այս բոպեում որքան ուրախությամբ լիք է իմ սիրով, երբ հիշում եմ, քեզ հեռու, շատ հեռու ինձանց, փշերի ու գալաքսիկների աշխարհում, մի սիրով բարախում է ինձ համար, մի սիրով բոլոր ջերմեռանդուրյամբ սիրում է ինձ...»:

Եվ ահա աշակերտների շորքերից հնչում են տողեր՝ սիրո և խոստվանանքի: Փորձում էի իրենց ընտրած հատվածներից հասկանալ նրանց հուզաչխարիդ. գուցե ոռմանտիկ սիրո վերհուշի կամ բաժանման թախի՞ծ կա նրանց հոգում: Ինձ ուղղված հայացքներում վերստին գտնում էի նրանց. «Մի անզույց վարմունք, մի կոպիկ վիրավորանք, չարասեր միջամբուրյուն կարող է հրդեհ բորբոքել սիրո չքնաղաշեն գաճարի մեջ և լափել նրա գեղեցկությունը... Ա՛յ, որքան շատ դժվար է սիրելը, որքան գալաքսիկով և առապար է նրա ճանապարհը...»:

Ուղղակի հիանում ես, որ եղել են մարդիկ, որ արվեստի հիասքանչ գլուխգործոցներ են ստեղծել ու իրենց մտքերով, խորհուրդնե-

բով անմնացորդ նվիրվել են իրենց գործին, ունեցածը դարձրել բոլորի սեփականությունը:

Մուրացանի սերը վերաճում է տառապանքի ու հավիտենական անհաս ձգտման: Եվ տասնյակ նամակներում գրողը փորձում է քանաձևել սերը, որոնել այն բառը, արտահայտությունը, հոգեկան վիճակը, որով կսահմանի այդ գերբնական զգացումը: Բայց սերը դարձյալ մնում է անկուսական առեղծված: «**Ի՞նչ է սերը, ո՞րն է առախորհուողը... ինչպե՞ս զգալ այն, ի ինչպե՞ս ճանաչել նրան...**»:

Հարցադրումներ, որ չափազանց հետաքրքրում են աշակերտներին, և որպես հոգեկան արժեք՝ որքա՞ն սրտամոտ են նրանց գրողի բանաձևումները սիրո մասին. «**Ապրել և զգալ, որ սիրում ես – ահա ճշմարիդ երջանկությունը**»:

Այսօրվա դեռահասն ու պատանին, որ փորձում են ճանաչել սերը, իրականության մեջ կանգնում են այն մեծ կասկածի առաջ, որ մքազնում է «հոգիների սրբազն միությունը»: Նույն թաքուն երկյուղն անհանգստացնում էր նաև արվեստագետ գրողին. «**Սիրելին, չգիտեմ ինչու համար ժամեժամ սիրու ծանրաբեռնում է դիրությամբ. մի նախազգացնունք կարծես ճնշում, սպանում է նրան, չգիտեմ ինչ է պարահել չգիտեմ ինչ է պարահելու**»:

Գրողի նամականու շարքում ամենաշատը աշակերտներին հետաքրքրում էր սիրո առեղծվածի մուրացանյան մեկնաբանությունը, բայց այդ գերբնական զգացումը մնաց առանց սահմանումների ու անկուսականի նույնիսկ գրողի համար:

Սի բան պարզ էր. մարտոր ու անաղարտ սերը մարդու մեջ գեղեցիկի զգացողությունն է առաջացնում կյանքի, աշխարհի ու նրա գեղեցկությունների նկատմամբ: Մուրացան արվեստագետի համար այն մնաց որպես շքացահայտված առեղծված. «**Ես քեզ սիրում եմ, իմ ասպասածային Ոսկի, բայց ինչպե՞ս, ահա քեզ որդեռն եմ պակասում բառերը... ես քեզ սիրում եմ իմ հոգվոր, իմ արտիք բոլոր ուժով, կարողությամբ, ես քեզ հիացած, խելազարպած, ես չեմ ասորում առանց քեզ, ես չեմ շնչում առանց իմ անգին, իմ հրաշալի Ոսկեհատին... հասկանու՞մ ես: Բայց չեմ, ես չկարողացամ ասել այն, ինչ որ կամնանում էի, և ես չեմ կարողանալու... և ինչո՞ւ եմ հայերը սիրում, երբ նրանք սերը արդահայտելու լեզու չունին»:**

Գուցե սիրելն էլ արվեստ է, մարդուն արված ամենամեծ հրաշքը,

որով վեր է հանվում աստվածային գեղեցիկն ու կատարյալը: Գեղեցիկ է դառնում սիրո զգացումը, որ իր հետ քերում է ազնվություն, նվիրվածություն, բարություն..., որոնք դառնում են լավագույն որակներ մատադ սերնդի դաստիարակության գործում:

Մուրացան զրոյն իր անհատականությամբ հանդես եկավ որպես գեղագետ և վեհացավ իր զգացմունքների հարատությամբ ու բարոյական դասերով, արվեստագետի զգացողությամբ ու հոգեկան արժեքների գիտակցությամբ և ընտանիքի, սիրո, բարոյականության ըմբռնումներով դրվատեց մարդկային լավագույն արժեքների գեղեցկությունը:

**«Սեր երջանկություն է»,-** սա վերջնակետն է գեղագետ Մուրացանի համոզմունքների, որով այսօր էլ նա սերունդներ է դաստիարակում:

Այն՝ Գրողի կենսագրականի մատուցումն ու ուսուցանումը, իսկապես, ուսուցչից պահանջում է հանգամանալիորեն պատրաստվել դասին և հեղինակի դիմագիծը մանկավարժական այնպիսի հմտությամբ ամբողջացնել, որ այն դառնա սովորողների հոգեբանական նույնացման միջոց կամ դրդի նրանց ներհայեցողության ու ինքնավերլուծությունների:

Բավական չէ, որ գրականությունը ցույց տա միայն այն,  
ինչ որ կա կյանքի մեջ պետք է ցույց տա և այն,  
ինչ որ չկա և ինչ որ ցանկալի է, որ լինի...:  
Նար-Դու

**«ՍՊԱՆՎԱԾ ԱՂԱՎՆԻ» կամ ԳՐԱՎԱՆ ԿԵՐՊԱՐԻ  
ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՄԵՐՈՐՅԱՎ ԱՇՎԿԵՐՏՈՒԹՅԱՆ  
ԸՆԿԱՎՈՒՄՆԵՐՈՒՄ  
(մասնագիտական - տեսական)**

Այսօր ուսումնադասադիարակչական գործընթացի համար զերական գործոնն է համարվում աշակերդի անձը: Բնավ, չփորձելով ասեմացնել խորհրդային մանկավարժության արժեքավոր կողմերը, ասենք, որ այսօրվա մանկավարժությունը չի փորձում աշակերդին հարմարեցնել դասանությին կամ ուսումնական պլանին: Թե՛ առարկայական չափորոշիչները, թե՛ ուսումնական պլանը նպասգում են այնպիսի ուսումնական միջավայրի սրեղծմանը, որպես նպասգրավոր են դառնում կարդացածի կամ յուրացրածի արդյունքում ծագած մպրերը: Ի վերջո, դասագործընթացում հաղորդակցման այսպիսի մշակույթն է, որ չեավորում է միասին մրածելու, համագործակցելու, փաստարկներ բերելու, համոզելու, այլոց նկարմամբ հարգանք տածելու, տարակարժության նկարմամբ հանդուրժողականություն ցուցաբերելու կարողություն: Այսպես է, որ նպասգում ենք աշակերդի արժեքային համակարգի ու անհապականության չեավորմանը: Գրականության ծրագրային նյութի շահ ու ու շափ սրեղծագործություններ արդիական ու հնչել են դառնում մերօրյա աշակերդության ընկալումներում ու դիրքորոշումներում:

«Սպանված աղավնի» վիպակի խմբային աշխագումանքի ու համագործակցային մերողների միջոցով ճիշգր ուսուցանումն իրապես աշակերդի ինքնադասադիարակման, ինքնապրահայպման արդյունավելու պայմաններ են սրեղծում:

Նար-Դոսի «Սպանված աղավնի» վիպակը, գիտենք, որ մի ծանր լյանքի պատմություն է, խարված կնոջ ողբերգություն:

Մասնագետ ուսուցչի համար կարիք չկա վերլուծելու վիպակի

սյուժեն, բայց քանի որ նյութը արդիական է և նոր լուսի տակ է քըն-նարկվում, կփորձեմ համառոտ ներկայացնել վիպակի առանցքային մասը:

Վիպակի հերոսուհու դրաման բարոյական տառապանքի պատմություն է: Անմեղ ու անարատ մի աղջիկ էր Սառան, մի նուրբ աղավնի, որ զոհ է դառնում Թուսյանի կրքերին:

Խարբած աղջիկը մնում է միայնակ, ոչ ոք նրան չի հասկանում և չի օգնում: Սարավելով միջավայրից՝ նա ստիպված իր ձեռքով սպանում է նորածին երեխային և ապրում մեկուսացած կյանքով: Թվում է, թե ընտանեկան նոր պայմաններում Գարեգինի հետ նա կարող է ստեղծել խաղաղ ընտանիք: Բայց կրկին ասպարեզ է զալիս Ուորեն Թուսյանը և ստոր առաջարկով վիրավորում Սառայի ինքնասիրությունը:

Համոզված, որ ամուսինը թույլ է ու կամագործ, հիվանդ և նյարդային կինն ինքն է ատրճանակը ձեռքին փորձում վրեժ լուծել Թուսյանից: Եվ հոգեկան ու ֆիզիկական ծանր վիճակի մեջ գտնվող Սառան, որ երեխայի էր սպասում, մահանում է՝ շղմանալով անպատվության ու շրջապատի անտարբերությանը:

Նար-Դոսը փորձել է Սառայի դժբախտության առանցքը տեսնել այդ հասարակության մեջ, որտեղ անհավասար վերաբերմունք է ցուցաբերվում կնոջ և տղամարդու նկատմամբ:

Որքան էլ գրողը փորձեր արդարացնել Սառային, այսօրվա դպրոցականը դատապարտում է նրան՝ երիտասարդ օրերին թույլ տված սխալի համար:

Բնագիրն ընթերցելուց և նկարահանված տեսաֆիլմը համատեղ դիտելուց հետո 11-րդ հունանիտար դասարանում, կերպարի վերլուծության ժամանակ, աշակերտները ինքնարերաբար բաժանվեցին Սառային «**մեղադրող**» և «**արդարացնող**» խմբերի:

Աշակերտներից մեկի հարցը ինձ շատ զարմացրեց. «**Երե Սառան ցավ էր զգացել մի անմեղ, սպիտակ աղավնու սպանության համար, այդ ինչպես և կարողացավ նա իր չեռքերով սպանել իր նորածին մանկանը: Մի՞ թե նա հանցագործ չէր»: (Հարությունյան Մարինե)**

Ես ապշած էի, բայց փորձում էի բացատրել, թե չմոռանանք, որ նախկին մեղմ, հանգիստ բնավորության տեր աղջիկը կյանքի դառ-

նություններից դարձել էր կոպիտ, չար և դաժան: Նրա այդ վարքագիծը մի պահ վաճում է ընթերցողին, բայց աստիճանաբար զայխ ենք այն համոզման, որ նրա նման խելացի և գեղեցիկ աղջիկը կարող էր լինել երջանիկ ու բարի, եթե չոտնահարվեր նրա մաքուր սիրո զգացումը:

Բայց «մեղադրող» կողմը զինաբափեց մեզ՝ «արդարացնողներիս»:

«Սառան ուներ բոլոր հնարավորություններն այդ երեխային պահելու համար, սակայն նա նախընկրեց զրկվել այդ լուսավոր հրեշտակին մեծացնելու բերկրանքից և սպանեց երեխային: Ես չեմ կարող արդարացնել մեկին, ով իր սիալների համար մեղադրել է ուրիշներին, նրանց սրիակել իր հենր հավասար գոտապել»: (Հարությունյան Անի)

Իրենց արտահայտած մտքերով կարծես անճանաչելի էին դարձել աշակերտները: Կանգնած էի նոր բացահայտումների առաջ:

«Ես համամիտ եմ հասարակության այն կարծիքին, որ հայ աղջիկը մինչև ամուսնալու չպիզի կորցնի իր մաքրությունը»: (Պետրոսյան Անի)

«Ճերմակ աղավնու մաքրությամբ և ամենությամբ փայլել է Սառան՝ հույսով ու հավագով նայելով կյանքին ու ապագային: Սակայն կյանքը այրել է նրա հոգու բոհջքը: Իմ կարծիքով, Սառան մեղադրանքի է արժանի, քանի որ Թուսյանի կողմից խարգած լինելը պատճառ չէր, որպեսզի նա սպաներ իր նորածին երեխային»: (Միրզոյան Նունե)

Սարդկության հասարակության պատմության ընթացքում միշտ էլ կարևորվել է ընտանիքը: Եթե ընտանեկան սերը մահանում է, հանդես է զայխ անտարբերությունն ամեն ինչի նկատմամբ: Հիշեցնում էի աշակերտներին, որ Սառան զրկված է եղել ծնողական սիրուց, բայց «մեղադրողներն» անդրվելի էին:

«Սառան վախենում էր խայլառակությունից, բայց չէ՞ որ ինն ամիս շարունակ նա կրել է այդ երեխային իր կրծքի գոակ: Մի՞քն դա արդեն իսկ խայլառակություն չէր: Նույն ժամանակաշրջանում են ապրել Սառան և Չոհրապի «Փոսպալ» նորավեպի հերոսիներ: Ի գործերություն Սառայի, որ բարեկեցիկ ընդունակում է ապրել, ճիշդ է, խորը ծնողների մոտ, Տիգրանուիին՝ այդ գեղեցիկ

**աղջիկը, աղքափ էր ու որբ: Նա խարվում է մեծահարուստի որդու կողմից: Կեղծավոր միջավայրը անարգում է աղջկան, անքարոյական (փոսպայ) համարում: Գտոնացած կնոքը նեցուկ է դառնում նորածին երեխան: Բայց մի նոր հարված է սփանում նա: Մեռնում է իր երեխան՝ խոր սգի մեջ բողնելով մորթ: Տիգրանուհու միակ մխիթարությունն այդ սառն ու ցուրփ աշխարհում մնում է որդու շիրիմը:**

**Արդյո՞ք Սառայի համար էլ իր մանկան շիրիմը դառնում է միխրաբություն, որին սպանել էր ինքը» (Հարությունյան Անի)**

Իմ դպրոցական և ուսանողական տարիներին որքա՞ն խորն եմ ապրել Սառայի հոգեվիճակը: Այդ կերպարն ինձ մոտ հասունացավ, նոր տեսք ստացավ նյութի՝ իմ դասավանդման տարիներին, բայց նա իմ հայեցակետում մնաց որպես դաժան հասարակության զոհ: Ես զարմացած էի աշակերտների այսպիսի մեկնաբանություններից, առավել ևս՝ վերջին համեմատությունից:

**«Մեղաղրող» կողմը դեռ շարունակում էր. «Ո՞վ էր իրականում մեղավոր: Սառա՞ն, որ սիրահարվել էր «սիսալ» մարդու, խարվել իր իսկ «մեծ» սիրո կողմից և ուրիշների ճաշման գուակ սրիմակած սպանել իր նորածին երեխային, նա, որ ցալում էր անգամ սպանած աղավնու համար:**

**Գուցե Թուսյա՞նը, որն ապրում էր իր հաճույքների համար և, ի վերջո, բռնեց կյանքի կործանման ուղին:**

**Իսկ ի՞նչ մեղք ուներ այսպեղ ինեղճ Գարեգինը, որի նմանները շապի քիչ են այսօր մեր շրջապատում, և այնքան ազնիվ ու մեծ սեր էր գուածում Սառայի նկատմամբ, որ նույնիսկ հանուն նրա պալլասափ էր մարդասապանության:**

**Դժվար է կողմնորոշվել, բոլորն էլ ունեն իրենց մեղքի բաժինը» (Սիրզոյան Անուշ)**

Ժամանակի շունչն օգացող աշակերտին այսօր չի բավարարում դասագրքի մեկնաբանությունը այս կամ այն գրական հերոսի մասին: Նա նորովի է ընկալում կերպարը, տալիս իր մեկնաբանությունն ու գնահատականը:

Բուռն քննարկումների «ալեկոծությունը» կամաց-կամաց տեղի տվեց, հանդարտվեց, մեղմացավ՝ իր տեղը զիջելով Սառային «արդարացնողներին»:

Լսվեց նաև մի նոր ճշմարտություն:

«**Իմ կարծիքով, ժամանակաշրջանն էր սպիալում ու պարզադրում կանոք՝ զնալ դաժան արարքի:** Մնար զիգենք, որ հայ կինը եղել է պարկեշտ, ավանդապաշտ ու բարեկիրք: Նա չէր կարող դիմակայել շրջապատի բամբասանքներին ու ամորանքին, ինչը չեմ կարող ասել մեր ժամանակների սառաների մասին: Ինձ բվում է՝ նրանցից ոմանք չեն դիմի վրեժինդրության, առյախակ կապրեն անհոգ ու երջանիկ: Գուցե մեր ժամանակների այդ սառաները ամորի ու պազալի զգացո՞ւմն են կորցրել, կամ ավելի ճիշտ, Եվլուպա՞ն է ներխուժել նրանց կյանքը: Տեսնելով նրանց՝ ես խղճում եմ Նար-Դոսի եկեղություն և փորձում հասկանալ նրան»: (Հարությունյան Մարինե)

Ասում են՝ շափահասը ժամանակաշրջանի հայելին է: Երեխսայի վրա ներգործում են և՝ ներհասարակական հարաբերությունները, և՝ ներքնտանեկան մթնոլորտը: Այսօրվա սերունդը փոքր-ինչ ազատ է, աշխույժ, փոխսել են նրանց հետաքրքրությունները, մտածելակերպն ու պահվածքը, հետևաբար նաև՝ խոսքը:

«**Այս հասարակության մեջ մեր օրերում յուրաքանչյուր որ կարող է մեղադրել Սառային, որի հոգում բարձրացել էր վրեժինդրության զգացումը, բայց չմոռանանք, որ նա սկզբում բարի, կյանքին պայծառ աչքերով նայող, միամիտ մի անձնավորություն էր, որը դարձավ իր ապրած անդարբեր միջավայրի զոհը»: (Սինայան Անուշ)**

«**Ինչո՞վ էր մեղավոր Սառան, երբ ուզում էր պարզապես մարդու, անարակ, պարզ սիրով սիրել և սիրված լինել: Ճիշտ է, նա միջավայրի ազդեցության գործակ փոխակեց և որդեսպան դարձավ, բայց նա էլ կյանքի խառնամբոխ մշուշում ընկած մի սպանված աղավնի էր...»: (Հարությունյան Լիլիթ)**

Սեր աչքերի առջև, անկասկած, փոխսկում է մեր երեխսաների հոգեբանությունը, փոխսկում է նրանց վերաբերմունքը շրջապատի, կյանքի այս կամ այն դիմակածի նկատմամբ: Հիշենք, որ գրական այս կամ այն երկի կերպարների ճիշտ բնութագրման ճանապարհով աշակերտների մոտ ձևավորվում են գեղեցիկն ու բարյականը, վեհն ու վսեմը: Եվ չմոռանանք, որ մեր օրերին համահունչ էր լուսաբանվում կերպարը «սպանված աղավնու»:

**«Երեւանոր մեր հասարակության մեջ լինելին Սառայի բախ-  
տին արժանացած աղջիկներ, համոզված եմ, որ նոյն ավարտը  
չէր ունենաւ նրանց կյանքը»:** (Ավանեսյան Մերի)

**«Սառան մարդկային արժանապատվության գիրակցությամբ  
բողոքում է բոլոր նրանց անունից, ովքեր իր նման դարձապարտ-  
ված են այդ հասարակության մեջ: Երեւան լինելի Նար-Դոսի փո-  
խարեն, հասպատ այդպիսի վերջարան չէր ունենաւ այս վիպակը»:**  
(Գյուրջյան Աննա)

Գրական կերպարի նորովի վերլուծությունը տանում է մեզ դեպի  
աշակերտակենտրոն ուսուցում: Աշակերտը կարողանում է տարրե-  
րակել դրականն ու բացասականը, ողբերգականն ու երգիծականը,  
որոնք առաջացնում են տարրեր ապրումներ, դաստիարակում  
նրանց մոտ մարդասիրության, արժանապատվության բարձր հատ-  
կանիշներ:

Հուսանք, որ այսօրվա և վաղվա նոր սերունդը չի շեղվի կերպա-  
րի ճիշտ ընկալումից, ուսուցիչն էլ հաստատակամ կլինի նոր բացա-  
հայտումների առաջ:

**ԵՐԲ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԸ ԿԻՐԱԾՎՈՒՄ Է  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՈՏԵՅՄԱՄԲ**  
(մերոդական)

Դասանյութի ուսուցման ժամանակ ուսուցչի և աշակերտի միջև համատեղ գործունեություն է ծավալվում՝ համագործակցություն, որը միտված է ուսումնական նպատակների իրականացմանը:

Ուսուցչի՝ դեպի աշակերտ գնացող մտքի ճանապարհն ընթանում է տարբեր մերոդներով ու հնարներով: Քանի որ ուսուցիչն ազատ է դրանց ընտրության հարցում, ապա կարելի է ասել, որ չկան լավ ու վատ մերոդներ, ուղղակի պետք է դրանք նպատակին օգտագործել, նյութին համապատասխան: Նույն դասանյութը կարելի է տարբեր մերոդներով ուսուցանել, քանի որ յուրաքանչյուր դաս տվյալ ուսուցչի ստեղծագործությունն է:

Հիշենք, որ դասը կառուցվածքով տարբեր փուլեր ունի (խթանում, իմաստավորում, կշռադասում), ուղղակի պետք է նախապես մտածել, թե տվյալ մերոդը ո՞ր փուլում կիրառել:

Չափ հետաքրքիր է «Մանրապատում» մերոդը, որի կիրառման ժամանակ ձևավորվում են ոչ միայն համապատասխան կարողություններ ու հմտություններ, այլև ինքնուրույնություն: Այշտ չէ, որ պետք է կառչենք մերոդում նախատեսված սկզբունքներից:

**Մ. Մեծարենիցի գիշերերգերի համեմապական վերլուծությանը զուգահեռ՝ (իմ սրեղծագործական մովեցումն է դա) շար հարմար է օգտագործել այդ մերոդը՝ որոշ լրացումներով:**

Գիտենք, որ Մեծարենիցի գիշերվան նվիրված բանաստեղծությունները՝ թե՛ բնության և թե՛ սիրո երգերը, հետևանք էին իր ապրած ժամանակաշրջանի, բայց նաև՝ իր անձնական կյանքի և «ապրված տիբություններու»:

Նկատելով, որ գիշերերգերն օգալի տեղ են գրավում «Ծիածանում», բանաստեղծը խոստովանել է. «...Ամբողջ հատորը գրեթե սպասման երկարաձիգ գիշեր մըն է՝ աղերսանքներով, հոգսերով, ցավերով ու երբեմն ալ կայծկալուն հույսերով լեցուն...»:

Ուսումնասիրելով նրա ստեղծագործությունները՝ զգացվում է, որ անորոշ ու լուսավոր մի թախիծ ուղեկցում է պատանի բանաստեղծին, որի հիվանդ մարմինն ու զգայուն հոգին լույս ու ջերմություն են տեսչում:

...Հիլա՞նդ եմ, բարի՞ արև, շողա՞, շողա՞...  
Հոգիս բռչնիկ մըն է,  
Օդ ու լուսի, երգ ու ծիծաղի կարուր... («Արևին»)

Բանաստեղծի ցավին գումարվում է հիվանդ հոգու տառապանքը, նա մարդկանց հաղորդակից է դարձնում իր ապրումներին, որոնք, անձնական լինելով, դադարում են անհատական լինելոց և դառնում են մարդկանց սրտերը հուզող ընդհանրական զգացումներ:

Հիշենք վաղամեռիկ բանաստեղծի մասին Վահան Թոքովենցի գրած տողերը. «Երբ մրում եմ այս աշխարհում, մե՞ծ պարագան, գրկում եմ քո երգերը, և ահա արեք, քո երգած արեք սուզվում է իմ ցուլու հոգու մեջ կարի առ կարի...»:

Մինչև «Մանրապատրում» մեթոդի կիրառում՝ աշակերտներին առաջարկվում է առանձին-առանձին ներկայացնել ուսումնասիրվելիք գիշերերգերի համառոտ բովանդակությունը:

«**Զման պարզ գիշերը**» բանաստեղծի հոգու, հուզաշխարհի նկարագիրն է, որտեղ բանաստեղծը դիմում է ձմռան պարզ գիշերվան՝ խնդրելով նրանից, որ հոգեկից լինի իրեն, այսինքն՝ բնությունը մաքրագործող շնչով ներս խուժի իր պատուհանից, չէ՞ որ սենյակի բաց պատուհանը փոխարեւաբար նաև բանաստեղծի հոգու պատուհանն է: Բանաստեղծի հոգու խոռվի պատճառը դա ցերեկվածիորն է, առօրյա կյանքի գայթակղությունները, մարդկանց շրջապատում մենակ լինելու զգացողությունը:

«**Արասիաներու շուրիմ բակ**» բանաստեղծությունն այն բվացյալ տպավորությունն է ստեղծում, թե խոսքն այստեղ բնության անկրկնելի գեղեցկության մասին է: Բայց չպետք է մոռանալ, որ սա բանաստեղծի պատկերավոր մտածողությունն է: Շրջապատի ամբողջությունից նա առանձնացնում է քննուշ ակացիան, որն իրիկվահովից իր բուրմունքն ու ծաղկաբերթերն է բաժանում:

Երեկոյան անդրբեր երազող է դարձնում մարդուն, բանաստեղծը շնչավորում, անձնավորում է բնությունը...

Բայց շնորանանք, որ նա բնությունը հասկանում էր լայն իմաստով՝ ներառելով բնության մեջ առաջին հերթին մարդուն ու նրա ապրումները, հույզերն ու զգացմունքները. «...Բանաստեղծը քննության ցուցումը պետք է բլլա, թե ոչ բանապեղծ չէ իրապես...»,

այսպես էր ըմբռնում Մեծարենցը բանաստեղծի կոչումը:

«**Սիրեզ**» բանաստեղծությունը գիշերվա պատկերով է սկսվում:

Երիտասարդ հոգին սեր է երազում, համբույրներ տենչում, բայց նրա սիրո առարկան վերացական է, երազային: Բանաստեղծի երգած սերը ամենուր է՝ շրջապատում, ամբողջ բնության մեջ: Մեծարենցի քնարական հերոսը բախվում է դառը իրականությանը, նրա երազները չեն իրականանում, և հակադրություն է առաջանում ցընծագին գիշերվա ու մթագնող հոգու միջև:

Գիշերերգերի համառուս վերլուծությունից հետո աշակերտներին առաջարկվում է իրենց կյանքից հիշել ինչ-որ դեպք՝ կապված այդ ստեղծագործությունների հետ: Դրանով աշակերտները, կարելի է ասել, ակտիվանում են, և որոշակի գուգորդական կապ է ստեղծվում կյանքի ու ստեղծագործությունների միջև:

Այնուհետև նրանց առաջարկվում է պատասխանել հետևյալ կետերին՝ ըստ հերթականության:

### **1. Մեկ նախապատրյամբ գրել, թե ինչի մասին է սպեղծագործությունը:**

ա) Բանաստեղծը պատկերել է գիշերը, որը բխում է նրա սրտից, բայց մի անհանգիստ տագնապ կա, որը լարվածություն է առաջանում սպասման մեջ գտնվող բանաստեղծի հոգում, և նա ուզում է, որ գիշերը հոգեկից լինի իրեն: (**«Զմրան պարզ գիշեր»**)

բ) Երեկոյան անդորրը երազող է դարձնում մարդուն, բնությունը մեղմություն է բերում նրա հոգուն: (**«Արասիաներու շուրիմ փակ»**)

գ) Բուրումնավետ գիշերը ցանկալի է դառնում բանաստեղծի համար, երիտասարդ հոգին սեր է երազում, բայց բախվում է իրականությանը, և փլուզվում են երազները (**«Սիրեզ»**):

### **2. Յուրաքանչյուր բանապեղծությունից ընդունել մեկ բառապող, որը բնութագրում է Կովյալ սպեղծագործությունը:**

ա) **«Զմրան պարզ գիշեր»**

Համբույրիդ, գիշեր, պալուիհանն է բաց,  
Թող որ լիառապ ծծեմ հեշտագիւն  
Կաքը մեղմահոս լույսիդ պարփանքին  
Ու զով շաղերուդ կահարդանքը բաց:

բ) **«Արասիաներու շուրիմ փակ»**

Ծաղկաներեն հուշիկ թերթեր կը բաւին

Բուրումներով օծում հովիկա իրիկվաճ,  
Հոգիներուն կ'իջնե երազ մը բուրյաճ,  
Ի՞նչ հեշտին է մռթնշաղն այս սալափե:

գ) «**Սիրերգ»**

Բայց լույսն իմ հոգվոյս քիշ-քիշ կը մաշի՝  
Ծրբունք են ծարավ միակ համբույրին...  
Յնձագին զիշերն է լույս ու լուսին,  
Բայց լույսն իմ հոգվոյս քիշ-քիշ կը մաշի...

**3. Ի՞նչ էսքիզ կարելի է նկարել յուրաքանչյուր բանասպեղծության համար, զրել դրան խորհրդանշող բանասպեղծական մեկ կամ երկու գործ:**

- ա) Բաց պատուհան, զիշերային երկինք («Համբույրիդ զիշեր պատուհանն է բաց...») - «**Զմրան պարզ զիշեր**»
- բ) Ակացիայի ճյուղ (Աքասիաներ, գինով լուսն ու տապեն, Օրորվելով մաքոր շունչ մը կը հևան») - «**Աքասիաներու շուրիմ բակ**»;
- գ) Գիշերային երկնքում լուսին («Յնձագին զիշերն է լույս ու լուսին») - «**Սիրերգ**»:

**4. Ի՞նչ գույն ունեն զվյալ սպեղծագործությունները:**

Երեք բանաստեղծություններում էլ լուսավոր զիշեր է, լուսնալույսըն ընդհանրություն ունի կարճագույնի հետ:

**5. Ի՞նչ երաժշգույնն իիշեցիք բանասպեղծությունները կարպալիս կամ ունկնդրելիս:** (Աշակերտները կհայտնեն իրենց կարծիքները):

**6. Ի՞նչ համ կամ հոդ ունեն բանասպեղծությունները:**

- ա) Մեղրի համ, քաղցր, անուշ բույր՝ ախտրժելի, հաճելի (հեշտագին):  
**«Զմրան պարզ զիշեր»**

- բ) Բուրավետ, անուշաբույր (բուրումներով օծուն, բուրյաճ):  
**«Աքասիաներու շուրիմ բակ»**

- գ) Թմրեցնող նյութի, խոտաբույսերից ստացված ըմպելիքների, անուշաբույր օծանելիքների հոտ (հաշիշով օծուն ու բալասանով):  
**«Սիրերգ»**

**7. Գրել մի բանի բառեր, բառակապակցություններ, որ երեք բանասպեղծություններում էլ գործածվել են նման ինմասպներով:**

- ա) Գիշեր, հեշտագին, լույսին, լուսածածան, հոգվոյս, դյութանք...  
**«Զմրան պարզ զիշեր»**

բ) Իրիկուն, հեշտին, լուսե, հոգիներուն, բուրումներով օծուն,  
բուրյան...

#### «Արախաներու շուրին տակ»

զ) Գիշեր, հեշտագին, լուսեղեն, հոգվուս, հաշիշով օծուն, բալասա-  
նով...

#### «Սիրեղ»

##### 8. Ամենալավն այս սպեղծագործությունների մեջ այն է, որ ...

(շարունակել միտքը):

ա) Յերեկվա նման լուսավոր է գիշերը («Պարզ, լուսածածան, հրա-  
շալի՛ գիշեր...»), և այդ լույսը ճառագում է բանաստեղծի սրտից,  
որ լուսավորում է խավարը («Հոսե սրտիս մեջ դյութանքին  
ալիք...»): «Զմրան պարզ գիշեր»

բ) Բնությունն անդորրություն է բերում մարդու հոգուն, և բանա-  
տեղծը սովորեցնում է, որ տեսնեն ու զգան բնության հրաշքը:

Չուրը ցայլրեն ծաղիկ-ծաղիկ կը կարե,

Վրձիկ, ինչպիս լուսե արցունքը մանկան:

#### «Արախաներու շուրին տակ»

զ) Բանաստեղծի երիտասարդ հոգին սեր է երազում, տիեզերքը  
բննկված է սիրով («Շրբունքս են ծարավ միակ համբույրին»):

#### «Սիրեղ»

##### 9. Մեկ բառով բնութագրել յուրաքանչյուր սպեղծագործություն:

ա) **Սպասում** - «Չնրան պարզ գիշեր»

բ) **Երազանք** - «Արախաներու շուրին տակ»

զ) **Հուսահապություն** - «Սիրեղ»

##### 10. Ինչպես են հանգանուված այդ բանասպեղծությունները:

(Օղակաձև - ԱԲԲԱ)

Որպես տրամադրություն՝ առաջարկվում է գրել շարադրու-  
թյուն հետևյալ վերնագրերով՝ «Սպասում», «Երազանք», «Հուսա-  
հապություն»:

Այսպիսի համեմատական վերլուծությունից հետո չի կարելի  
ասել, որ ամբողջությամբ ուսումնասիրված կիմեն տվյալ ստեղծա-  
գործությունները, բայց որպես գիշերերգեր՝ այս բանաստեղծու-  
թյունները նույն հարթության վրա ուսումնասիրելը բերևս լավագույն  
միջոց է, որն անպայման կատարվում է ուսուցչի օգնությամբ:

Մեծարենցի պոեզիայում բնության երգի առանձնացումը սիրո եր-

գերից ոչ լիովին է արդարացվում, քանի որ բանաստեղծը քնությունն է դարձնում մարդուն համակած բոլոր հույզերի բարգմանը: Անհատի դրաման, քնության ու սիրո երգերը միահյուսված են գիշերերգության մեջ, քանի որ ցերեկվա աղմուկից ձերբազատված՝ գիշերը խոհերի ու հոգեկան ներսուղումների հնարավորություն է տալիս: Գիշերը նաև մռայլ ժամանակի խորիրդանիշ է, քայլ Մեծարենցի մոտ, անգամ հուսահատ սպասման մեջ, ջերմություն կա, լուսավոր կենսափրություն: Հիշենք, որ բանաստեղծի ցաված սիրտը գիշերը հույսով սպասել է ցայգալույսին, կեսօրին՝ արևի ջերմությանը, և «**Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կպրած, Արև է երգել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ սպասանին**» (Ե. Չարենց):

**ԵՐԲ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀԱՐՑԸ ԴԱՌՆՈՒՄ  
Է ՈՒՍՈՒՑՉԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ  
(մեթոդական-ուսուցողական)**

Արքնացավ հրկիզող մի սեր... –  
Կարինե՛:

Կարինե՛ Քորանջյան...  
Իմ հոգում – արևն Իրանի  
Լավլիզում էր հրդեհի նման:  
Ու ծանր, որպես գրանիտ,  
Նախյան քախիծն հնամյա:  
Թե իզն՞որ կրքերիդ բազեն  
Հեկունից ինչ երկա՞ր լրարիներ...  
Տիրություն էր հմայքդ մսեն –  
Կարինե՛...  
Մշն՝ և – Կարինե՛...:

**Ահավասիկ,** սիրո քենան հայ գրականության մեջ սոսկ  
ներշնչման աղբյուր չէ այլէ՝ նեցուկ ու պահապան սիրող էակին,  
նոյնիսկ՝ հեկմահու: Սիրո քենան առանձնահավուկ չեղվ է ներ-  
կայացված եւ Զարենցի սկեղծագործություններում: Զարենցյան  
սիրո հախուռն պոռքումները հորժանք են գալիս և իրենց արկա-  
ծախնդրային դրվագներով ավելի դյուրին դարձնում գրողի լիար-  
ժեք կերպարի և կենասագրության մակուցումք: Կարինե՛ Քորանջ-  
յանի սեղը ժամանակագրությամբ երկրորդն է, բայց՝ ամենաեր-  
կարը: Զարենցյան բոլոր «սերերի» բացահայտման մեջ էլ գրողի  
անխոցելի իմքնասիրությունն է, կերպարի վեհությունը, իման էլ  
դյուրին է դարձնում դպրոցի ավագ օղակում սովորող աշակերդ-  
ների բարոյական դասպիտակություններ:

Գրողի կենասագրության համակողմանի ու լիարժեք մակուցու-  
մք կրկին սպասակած որակ է ապահովում ինկերակդիլ մերողնե-  
րի կիրառման միջոցով, որով սկեղծվում են ուսուցման նպաստա-  
վոր դրդապատճառներ:

Բոլոր էլ զիվենք, որ մերօրյա աշակերպության հետարքրու-  
թյուններն արդեն փոխվել են: Մինչ ուսուցիչներս չգրում ենք  
նրանց շահագրգուել, որ զիրք վերցնեն և ընթերցնեն գրողի կենասա-  
գրությունը կամ նրանց սկեղծագործությունները, աշակերդները  
մի ներքին իմքնամղումով փորձում են օգպվել համացանցից,

**սպառել իրենց հետարքությունը գրողի անձնական կյանքի մանրամասնությունների մասին:**

11-րդ հումանիտար դասարանում Եղ. Զարենց էինք ուսումնասիրում:

Հանկարծ աշակերտուի իներից մեկը հարցրեց. «**Ես հետազոտական-գործեկազմական բազմաթիվ Այուքեր եմ հավաքել Չարենցից, բայց ինչքան նշագիր «սերեր» է ունեցել նա, այս ու մ սպեղծագործություններն ենք ուսումնասիրում, ես չեմ կարծում, որ նա ..., մի թե լա վայել է բանասպեղծին»:**

Սի պահ լրություն տիրեց ամբողջ դասարանում: Վիրավորվածության զգացում ունեցա, մի ներքին կալիծ առաջացավ իմ հոգում, կարծես ինձ շատ հոգեհարազատ, մտերմիկ մարդու մասին էր խոսքը: Բայց շարունակեցի միտքս. «**Նա պաղամդ էր, բազում շնորհներով օժգված, արփասովոր բախորի ու մեծության բանասպեղծ էր այդ հանճարը»:**

Գևորգ Էմինի խոսքերով Զարենցին ներկայացրի. «**Նա սոսկ բանասպեղծ չէր նա մեր նոր պոեզիայի մայրուղին էր, իսկ նրա գրքերը սոսկ գրքեր չեն, այլ նրա գրքերից մեկի վերնագրով ասած՝ մեր պոեզիայի «Գիրք ճանապարհին»»:**

Նայում էի այդ աշակերտուին, փորձում հասկանալ նրա դեմքին հայտնված առեղջվածային ժամանքը: Չե՛, նա կարծես չէր հավատում, որ գրքերից էր թև առնում այդ պատանին, և որ հայրը, երբ փող էր տվել, որ Եղիշեն կոշիկ առնի, որդին առանց երկմտելու, այդ գումարով գրքեր առած, զնացել էր տուն՝ մտածելով, որ լավ է ոտքից բռիկ մնալ, քան թե խելքից: Բայց նաև աշխույժ ու կենսասեր էր այդ պատանին, անհանգիստ տարեքը ուներ, որի համար Կարսի այզին դարձել էր իր մենության և երազանքի մշտական վայրը: Այստեղ նա ընթերցել ավելի ծիչու, նվաճել էր գրքեր, ձևավորել իր հոգու պատմությունը: Նա մինչև անգամ ուներ իր անկյունը, իր սիրած ծառը, իր «մենատանը», իր տագնապների ու երազների աշխարհը:

Այսօրվա աշակերտության ընկալումներում կամքապնդվի<sup>9</sup> արդյոք, որ բազմաթիվ «սերեր» ունեցող Զարենցն «**այն գրողներից էր, որոնց համար գրքերը փոխարիմնել էին «անկյանք կյանքին», եղել են հոգեւոր ակունք, բացել լայն հորիզոն և մեծ ճանապարհ: Զարենցի համար բազմապիսի գրքերը եղան մեծ աշխարհ վանող արահետը և գեղեցկության բարում աշխարհի վրա բացվող պարունական»:** (Հր. Թամրազյան):

Ամբողջ դասարանով դիտեցինք «Մահվան տեսիլ» տեսաֆիլմը՝ բանաստեղծի կյանքի վերջին տարիների նկարագրությամբ:

Չարենցի «սերերն» էին կարծես «թառել» իմ ուղեղում, մտորումների անհանգիստ շղթան կրծում էր հոգիս՝ նոյնիսկ նրա բանաստեղծությունների ասմունքն ու երգերի վերածված տարբեր կատարումներ ունկնդրելիս:

**Թերևս ինչ օգնության հասավ ԳՈՒ ուսուցման մերողը (զիգեռ, ուզում եմ իմանալ, սովորեցի):**

Այլուսակի «ուզում եմ իմանալը» իմքնաբերաբար դառնում է «ուզում եմ իմանալ»՝ որպես տնային հանձնարարություն, և առաջարկում եմ հարցել:

- ա) Ո՞վ է Կարինե Ջոքանջյանը, ի՞նչ դեր է ունեցել նա Չարենցի կյանքում:
- բ) «Եմալե պրոֆիլը Ձեր» շարքի բանաստեղծություններն ու՞մ են նվիրված:
- գ) Ինչպիսի՞ս են պահպանվել Չարենցի ձեռագրերը:

Խմբային հետազոտական աշխատանքի արդյունքում հաջորդ դասաժամին աշակերտական առաջին խումբը ներկայացնում է **Կարինե Ջոքանջյանին**, որն առաջին անգամ Չարենցին հանդիպել է 1914 թ. հունիսին: Աղջիկը Ղարսի այգում ընկերուիկներով զբունում էր: Հանկարծ նա նկատում է բաց շագանակագույն թիկնոցով, ծխամործով և մեծ ձեռնափայտով մի պատանու: Տղան հագնված էր իր հասակին ոչ համապատասխան: Տարօրինակ էր նրա կեցվածքը: Գլխարկն աչքերին քաշած՝ նա մեկ ձեռնափայտը նետում էր վեր, մեկ՝ բռնում, մեկ՝ գետնի վրա ինչ-որ բան գրում, խզմզում: Գլխարկի տակից փայլում էին նրա աչքերը՝ խորաքափանց արտահայտությամբ: Երբ Կարինեն հետաքրքրվեց, թե ով է այդ երիտասարդը, ասացին, որ բանաստեղծ է: Սոտենում է նրան, ձեռքը մեկնում և ծանրությունում: Հենց առաջին գրույցից նա զգում է, որ երիտասարդը շատ խելոր է, կարդացած, զարգացած և բարեհամրույր: Այնուհետև նրանք միասին զբունում, նավակ էին նստում, զրուցում ժամերով, ընթերցում բանաստեղծություններ:

Այդ ժամանակ Չարենցը 17 տարեկան էր:

Վերահաս պատերազմը բաժանում է բոլորին: Նա Չարենցին հանդիպում է երկու տարի անց՝ 1916թ-ին, երբ Մոսկվայից վերադարձել էր Ղարս: Եվ ահա նա տրամադրում է Չարենցին՝ մեկնել Մոսկվա և սովորել այնտեղ: Շուտով բանաստեղծն ընդունվում է

Շանյավսկու անվան համալսարանի պատմագիտական ֆակուլտետը: Ապրում էր մի փոքրիկ սենյակում, տաճտիրուիին միշտ բռնըքում էր, որ Եղիշեն օր ու գիշեր նստած գրում է, առանց սնվելու՝ խնում է միայն քաղցր բունդ թեյ և ուրիշ ոչինչ: Ի՞նչ ինանար նա, որ այդ օրերին ծնվում էր մի հիասքանչ ստեղծագործական շարք՝ «Ծիածան» բանաստեղծությունների ժողովածուն, որի երեք գույները երիտասարդ բանաստեղծը նկատել էր Կարինեի աչքերում, երբ հագուստներին համապատասխան փոխսպում, ընդունում էին տարրեր երանգները: Գիրքը հոգեվիճակներ և ապրումներ ներկայացնող գույների համադրություն էր, որտեղ բանաստեղծը երանգավորում է իր երազները և «Կապույտը», «Ուկին», «Մանուշակագույնը» բաժանումով ստեղծում երազների գունային մի աշխարհ:

1917թ. մարտ ամիսն էր: Կարինեն գնաց կայարան՝ Զարենցին ճանապարհելու Ղարս: Վերջինս կարդաց «Հեռացումի խոսքեր» բանաստեղծությունը: Նա շատ հուզված էր և տխուր, ասում էր որ ոչ ոք չունի, Կարինեն նրա համար և՛ քույր է, և՛ մայր ու ամեն ինչ: (Այսինքն, այստեղ գործ ունենք մեծ սիրո, խստվածային սիրո հետ):

20-ամյա բանաստեղծը հեռացումի խոսքեր էր ասում կյանքի մեծ փորձից ծնված ցավով ու տառապանքով:

Զարենցին Կարինե Ջորանջյանը հանդիպում է նորից 1919 թ. ամռանը Ղարսում: Շատ վատ վիճակում էր: Կարինեն իր հուշերում նշել է, որ իրեն հաջողվեց այդ օրերին մի գույզ կոշիկ նվիրել Զարենցին:

Մեկ տարի անց բանաստեղծն իր ամբողջ գրականությունը պետք է հանձներ որբանոցում աշխատող իր հավատարիմ ընկերություն, որ պահի դրանք, իրեն հետևում են: Զգուշության համար Կարինեն ձեռագրերի կապոցը հանձնում է որբանոցի մայրապետներից մեկին, և այդպես փրկվում են Զարենցի այդ աննահ մասունքները:

Տարիներ հետո, երբ նորից հանդիպում է Զարենցին, վերջինս ասում է. «Պետք է արտագրեմ և ձեռագրով նվիրեմ քեզ «Ծիածանը»»:

Բայց այդպես էլ չհասցրեց նվիրել: «Ծիածանում» ամփոփված մնաց մի հիանալի ստեղծագործություն, որով նա սրբացրեց Կարինե Քորանջյանի անունը («Տաղ անձնական»):

Առաջին հարցը կարծես սպառված էր Կարինեի մասին, աշակերտական առաջին խումբը կատարել էր իր «առաքելությունը»:

Երկրորդ հարց. «**Էման սրոֆիլը Զեր**» բանաստեղծությունների

շարքն ու՞ն է նվիրված:

Ո՞վ գիտե, զուցե մի ջերմ ժայխ կամ քնքուշ հայացք թևավորել կամ ցնորական հույսերո՞վ էր լցրել բանաստեղծի հոգին: Այս անգամ արդեն Արմենուիհ Տիգրանյան՝ բանաստեղծուիհ, բարձրաշխարհիկ գեղեցկադեմ տիկին, որին նվիրել էր բանաստեղծը «Էմալե պրոֆիլը Զեր» շարքը, տրիուստներ, բալլադներ ...:

Մտահոգությանս պատճառը պարզ էր: Ինչպե՞ս կներկայացնի աշակերտական երկրորդ խումբը նմանօրինակ եռանկյունին:

1919թ. հոկտեմբերի 18-ին Հայաստանի նորաստեղծ գրական ընկերության երեկոն էր: Լուսավորության նախարար նշանակված Նիկոլ Աղբալյանը դասախոսում էր «Սի նոր բանաստեղծ՝ Զարենց» թեմայով: Ներկաներից շատերն առաջին անգամ էին լսում նրա անունը: Ոչ ոք կրահել չէր կարող, որ բանաստեղծն այդ օրերին ուսուցչություն էր անում Կարսի հեռավոր գյուղերից մեկում: Այդ օրը շատերի պես դահլիճում էր նաև Կարինե Քորթանցյանը: Նա Զարենցի տեղու հայտնեց Աղբալյանին, որը հանձնարարեց Արմենուիհ Տիգրանյանին՝ շուտափույթ Զարենցին կանչել Երևան:

Հետագայում Կարինեն իր հուշերում պիտի պատմեր, որ ինքն է Զարենցին ուղեկցել Արմենուիհ մոտ, որն այդ ժամանակ շրջապատում ճանաչված բանաստեղծուիհ էր: Գրավիչ տիկինը գերել էր Զարենցին և 22-ամյա երիտասարդի սրտում բորբոքել մի նոր, դեռևս անբացատրելի զգացում իրենից ինը տարով մեծ կնոջ հանդեպ: Իսկ հետագայում նրա խանդրու ամուսինը՝ դատախազ Վարդգես Ահարոնյանը, առիթը բաց չպիտի թողներ, որ քննադատեր Զարենցի գրածները: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո դաշնակցական այդ երևելի անձնավորությունը պետք է մեկներ արտասահման: Նրանից հետո մեծ դաշնություն էր սպասվում կնոջը, որին էլ շներեց ամուսինը, եթե Արմենուիհն զնացել էր նրա մոտ: 1962թ. Արմենուիհ մահից երկու տարի հետո Վ. Ահարոնյանը չորս տասնամյակ անց զայիս է Հայաստան՝ ճամպրուկում գունատ և հնարքույթ թղթեր: Դրանք Զարենցի ձեռագրերն էին՝ բանաստեղծություններ՝ ... նվիրված դարձյալ Արմենուիհու: Պարզվում է՝ անձնական խոր ցավն ու վիրավորանքը կարող են նահանջել մեծ պոեզիայի, մեծ տաղանդի ու սիրո առաջ, որ երգել էր բանաստեղծը. «Կուզեի երգեր կապել Եվ զովել երգով անձիր Էմալե պրոֆիլը Զեր, Զեր հակիմթ աշքերը բիլ»:

Սիրային եռանկյունին իր հանգուցալուծումը գտավ, իսկ Զարեն-

ցի ձեռագրերը հանձնվեցին Հայաստանի գրողների միությանը:

Արմենուի Տիգրանյանը դարձել էր Զարենցի ներշնչանքի աղբյուրը. հորդաբուխ պոեզիայի լավագույն դրսնորում, գուցե և սիրո ակնիայտ պոռթկում, որ կամաց-կամաց մարեց ու հանգավ ճակատագրական օրերի թոհութեամբ, քաղաքական կյանքի վայրիվերումների ընթացքում:

Սի պահ հայացք նորից հառել էի իմ աշակերտուիուն: Լուս էր նա, մտահոգ, բայց ասելիք ուներ. «**Որրանցներից մեկում ուսուցչորյուն անդ Զարենցը պիտի սպեղծեր իր գլուխզործոցը՝ «Ես իմ անուշ Հայաստանին», ու առաջինը կարդար իր սիրո նոր աշխարհ մուլք գործած Արփենիկ Ասպարագորյանի մուր: Իսկ ընդամենը յոր դարի անց Զարենցը «Էպիքական լուսաբաց» կնվիրի մահացած կնոցը՝ վախճանված 1927 բվականի հունվարի 1-2-ի գիշերը:**

**Պատմում են նաև, որ Արփիկի հենց դաշտում, ապակյա տարայի մեջ ամփոփված, Զարենցը բանասրեղծություններ է քաղել: Արփիկի գերեզմանի դեկը փոխվել է, և այդ մասունքները անվերադի հանգչում են հողի դակ:**

**1931թ. սեպտեմբերի 29-ին Զարենցը ամուսնանում է Իզարելա Կողարաշյանի հետ: Երկու դուստրեր՝ Արփենիկ և Անահիտ: Ի աշու ոգեռությամբ էր Զարենցը սպասել իր առաջնեկին, որին էլ նվիրել էր իր վերջին մարդյանը՝ «Գիրը ճանապարհին»:**

Իմ մտահոգությունը մի քիչ փոխանցվել էր աշակերտներին, որոնց հայացքների առջև վեր էին հառնում կանայք, որոնք ինչ-ոք չափով օգնել էին բանաստեղծին, նրա կարճատև կյանքի ընթացքում դարձել կյանքի ուղեկիցներ և անջնջելի հետք քողել բանաստեղծի գգայական, ստեղծագործական աշխարհում: Ժամանակի քաղաքական անցուղարձերից պղտորվել էին աշակերտների հոգիները: Բայց սպասում կար, ի՞նչ եղավ հետո ...

**Աշակերտական երրորդ խումբ: Զարենցի ժեռագրերը:** Ո՞վ փրկեց դրանք:

Երբ 1937թ. օգոստոսին բանտարկեցին Զարենցին, այդ դժվար տարիներին Ռեզինա Ղազարյանը՝ նրա մտերմուիհներից մեկը, փրկեց բանաստեղծի անմահ մասունքները (12 հազ. անգնահատելի տողեր): Նախկին մոսկովյան օդաչուական դպրոցն ավարտած հայրենիքի նվիրյալ դուստրը Հայրենական պատերազմի մասնակից էր, Հայաստանի վաստակավոր նկարիչ:

Սի օր Իզարելան եկավ բանտից. իր հետ քերել էր նաև Զարենցի

վերնաշապիկը՝ լվանալու համար: Խոշորացույցի միջոցով կարողացան կարդալ քիմիական մատիտով արված գրությունը. «Իզարելա՛, լա՛վ նայիր երեխաներին, փրկի՛ր ձեռագրերս, և այդ հարցով դիմի՛ր միայն ու միայն Ուզինային և վստահի՛ր նրան»:

Հենց նույն գիշերը Ուզինան ձեռագրերով տակառիկը բաղեց իր հարազատների տան նկուղում:

Հայրենական պատերազմի տարիներին նրան մտահոգում էր մի հարց. հանկարծ իր հետ մի բան չպատահի, չէ՞ որ ինքը միակ մարդն էր, որ զիտեր ձեռագրերի տեղը: (Զարենցից հետո Իզարելային բանտարկել էին): Եվ ահա, երբ 1954թ-ին, ի լոր ամենքի, ուսինյով հնչեց Զարենցի անունը, նա անմիջապես գնաց դեպի նկուղը: Բացառությամբ մի ոչ մեծ մասի, բարեբախտաբար, ձեռագրերը պահպանվել էին: Տասնուր տարի հետո բանաստեղծի անգին տողերից շատերը մտան նրա անտիպ ստեղծագործությունների առաջին հատորի մեջ: Նրա դրաստրերը նոր պիտի հասկանային, թե ովքեր են իրենք, և թե ինչ է կատարվել: Նրանց առջև պիտի բացվեին իրենց հոր ձեռագրերը: Եվ Արքենիկ Զարենցը գրիչ պիտի վերցներ ձեռքն ու գրեր. «**Ի սկզբանե էր Հայրս, և Ասպալած էր Հայրս:**

Եվ գրեց ... Տարիների ընթացքում իրար հաջորդեցին գրքեր, ձևափորվեց նրա ոճը՝ հախուռն, բռնկուն, զգացմոնքային...շարունակվեց այնքան, մինչև որ երկարատև հիվանդությունից հետո 2008թ. փետրվարի 12-ին Երևանում 76 տարեկան հասակում վախճանվեց նա:

Աշակերտական երեք խմբերն էլ ավարտել էին իրենց խոսքը:

Դասաժամն սպառված էր՝ մի ամբողջ տնային հանձնարարության ստուգմամբ ու քննարկմամբ, որ իր մեջ Զարենցի «սերերն» էր ամփոփում, բայց այնքան ասելիք կար դեռ ...., իսկ որպես հավելում ասվածների՝ լուս եմ խոսքը իմ ստեղծագործող աշակերտունու. **«Ես կգրեմ բանասպեկտուրյուն այն սիրո մասին, որ որոնում էր Մեծն Զարենցը»**

Նայում եմ դեմքին, առեղծվածային ժամանակարգությունը չկար, մտահոգ էր նա:

Եվ այդպես, ընդամենը մեկ հարց, որ դարձավ ուսուցչի մտահոգություն, մտահոգությունն էլ՝ Զարենցյան «սերերն» ամփոփող դաս, իսկ դասը՝ նոյն այդ աշակերտունու աշխարհընկալման, Զարենցին նոր դիրքորոշմամբ ու նոր մտահորիզումնում ընկալելու հնարավորություն:

**ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀԵՏԱՔՐՔԲԱԾԱՐԺ  
ԳԱՂՏՆԱՄՐԱՎՆՆԵՐՆ ԵՆ ՏԱՆՈՒՄ  
(ուսուցողական)**

Մեր առօրյա կյանքում քիչ չեն պատահում, որ կարևոր և դժվար բաներն արվում են, իսկ այն, ինչ հեշտ է, հետաձգվում է: Բայց կա ժողովրդական հիանալի ասույթ. «Ամենից դժվար հաջողվում են հեշտ բաները»:

Հայոց լեզվի հետաքրքրաշարժ **զաղուճարաններն** ուսումնասիրելով՝ իրոք, հասկանում ենք, որ կան նրբություններ, որոնք արտաքուստ թվում են դյուրընկալելի և անուշադրության են մատնվում: Բայց ահա այդ «հեշտ բաների» կողքին հիշողություններ են լինում, որ երբեք չեն մոռացվում, և այստեղ չափազանց կարևոր է այն խոսքը, որը տպավորվում, գամփում է յուրաքանչյուրիս հիշողության մեջ:

Տարիներ առաջ 5-րդ դասարանում գոյականի անձի և իրի մասին խոսելիս գրատախտակին գրված նախադասությունների միջոցով բացատրում էի, որ որոշ դեպքերում անձը կարող է ստանալ իրի հարց կամ հակառակը կարող է լինել:

**ա) Ուսուցիչը պատմում է դասը: (Ո՞վ)**

**բ) Որպես ուսուցիչ ես նրան լավ եմ ճանաչում: (Որպես ի՞նչ)**

Փորձում էի բացատրել, որ երկրորդ նախադասության մեջ անձ ցույց տվող գոյականն ստացել է իրի հարց, բայց աշակերտներից մեկը համարձակորեն ընդհատեց ինձ, թե երևի «լավ» ուսուցիչներն անձի հարց են ստանում, «վատերը» ի՞նչ հարցին են պատասխանում:

Իմ դժգոհ հայացքից ընդհատվեց աշակերտների լիաքոր ծիծառը, և շուտով գրատախտակին ավելացավ մի նոր նախադասություն:

**Մեզ դասավանդող «լավ» ուսուցիչներ ունենք, որոնց շափ ենք հարգում: (Ինչ ՞ո՞)**

Պարզվեց, որ «լավ» ուսուցիչներն էլ կարող են ստանալ իրի հարց, բայց առայսօր այն ինձ համար դարձել է մի ցավոտ հիշողություն՝ 5-րդ դասարանի աշակերտի գիտակցության մեջ ամրակայգած «լավ» ու «վատ» ուսուցիչների մասին:

Եվ ամեննին չզարմացա, եթե դասարաններից մեկում մայրենիից

կազմակերպված բաց դասից հետո տարածայնություններ առաջացան դասավանդող ուսուցչությունը արտահայտած «սխալի» շուրջ, թե ինչո՞ւ է նա կենդանուն «ո՞վ» հարցը տվել:

Հետաքրքիր է, եթե «Գայլը խոսում էր մարդկային լեզվով» նախադասության մեջ «գայլը» ստանար «ի՞նչ» հարցը՝ ի՞նչն էր խոսում, արդյո՞ք հարց կծագեր, որ «ինչը» ոռնում է:

Ուստի լավ հիշենք որոշ նրբությունները: Կենդանիներն անձի դերում հանդես են գալիս նաև այն դեպքում, եթե նրանց արտահայտած գործողությունները հասուն են միայն անձերին (գրկել, սիրել, փայփայել, ասել, խոսել...): Հետևաբար խոսքի մեջ գործածվելիս հաճախ անսովոր կառույցներ են ստեղծվում, եթե իրը հանդես է գալիս անձի դերում և լմանակառակը:

Դպրոցում Վարդենիսի մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղն էր գործում: Այդտեղ դասավանդող դասախոսներից մեկը մի օր հարցուեց ինձ. «Դուք հնգհողվակա՞ն եք, թե՞ յոթհողվական»:

Հանկարծակի եկա այդ բնորոշումներից, բայց փորձեցի բացատրել, որ ճիշտը գոյականի յոթ հոլովն է, եթե սեռականը չինի, շարահյուսության բաժինն անցնելիս ինչպե՞ս բացատրենք, որ հատկացուցիչը դրվում է սեռական հոլովով, կամ հայցականը չինի, ուղիղ խնդիր անցնելիս ի՞նչ ասենք աշակերտներին:

Բացատրվեց այսպես. «Շարահյուսության բաժինն անցնելիս կասեր, որ հատկացուցչի համար կա սեռական հոլով, ուղիղ խնդիր համար՝ հայցական հոլով, բայց գոյական խոսքի մաս ուսումնասիրելիս պետք չէ այդ հոլովների մասին խոսել»:

Տարիների իմ մանկավարժական գործունեության ընթացքում ոչ մի անգամ չեմ հաշտվել իինք հոլովի հետ, նույնիսկ, եթե որոշ դասագրքերում հինգ հոլովի մասին է եղել խոսքը, միշտ էլ յոթ հոլով եմ ներկայացրել:

Ուսուցման ընթացքում միշտ էլ նկատվում է, որ աշակերտները դժվար են տարբերում տրական և հայցական հոլովները: Բայց բացատրության արդյունքում նյութն ընկալվում է: Ուղրակի պետք է նաև կարողանալ տարբերակել, որ սեռականը (որոշիչ հող չի ստանում), տրականը և հայցականը (անորոշ) անձի դեպքում նմանվում են իրար և որոշակի նման պատասխանում «ո՞մ» հարցին:

**ա) Աղջկա չեռքը ցալում էր: (Ու՞ն – սեռական հոլով):**

**բ) Հանդիպեցի մի աղջկա: (Ու՞ն – պրական հոլով):**

**գ) Միրեցի մի աղջկա: (Ու՞ն – հայցական հոլով):**

Հիշենք, որ սեռական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որին պատկանում կամ վերաբերում է, որից սերում է որևէ բան: Այն գոյականական անդամի լրացում է (ու՞ն ձեռքը): Սեռական հոլովով հիմնականում դրվում է հատկացուցիչը:

Տրական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որին տրվում կամ մոտենում է մի բան, և կամ որին հանգում է ենթակայի գործողությունը: Որպես հանգման անուղղակի խնդիր՝ չեզոք սեռի բայի լրացում է (հանդիպեցի ու՞ն):

Իսկ հայցական հոլովը, գիտենք, որ ցույց է տալիս անձ կամ առարկա, որն իր վրա է կրում ենթակայի գործողությունը: Ներզորական սեռի բայի լրացում է (սիրեցի ու՞ն), հանդես է գալիս որպես ուղիղ խնդիր:

Սիշտ էլ երեք հոլովների համեմատական վերլուծության արդյունքում (անձի դեպքում) ընկալելի է լինում դասանյութը:

Բայց ահա «համեմատություն» բառն ինձ մոտ նոր հիշողություն է արթնացնում, և հուշերի թելն ինձ ինքնարերաբար տանում է դեպի ածականի ոճական հնարավորությունները:

Աշակերտների հարցին, թե «գերհզոր» բառը որակական ածականի համեմատության ո՞՞ն աստիճանն է, մի պահ վարանեցի և մտորումների մեջ ընկա. «գեր» նախածանցով համեմատության աստիճան չունենք, բայց ժամանակին «ուշքի եկա», հիշեցի և բացատրեցի, որ այն բարձր ոճի արտահայտություն է, ունի գերադրականի ինաստ, ինչպես գերազնիվ, գերապայծառ, գերադրական բառերը: Նույն իմաստն ունեն նաև մեծ(ա) բաղադրիչով կազմված բառերը՝ մեծահզոր, մեծապատիվ, մեծազոր...:

Ուղղակի այստեղ տեղին է ասել, որ ածականի այն ձևը, որը ցույց է տալիս հատկության բարձր չափը՝ առանց ընդգծված համեմատության, համարվում է բացարձակ գերադրական: Այն կարող է արտահայտվել նաև այլ բառերով՝ շատ գեղեցիկ, չափազանց սիրուն, ահազին մեծ...

Ընդհանրապես, գերադրական աստիճանը, գիտենք, որ ցույց է տալիս առարկայի տվյալ հատկանիշի գերազանցությունը ուրիշ

առարկաների նույն հատկանիշից՝ ամենաքաջ, ամենից ազնիվ, լավագույն և այլն:

Չմոռանանք, որ հարաբերական ածականներն էլ որոշ դեպքերում կարող են համեմատության աստիճան ստանալ՝ հատկապես գեղարվեստական գրականության մեջ այս կամ այն իմաստային նրբությունը շեշտելու նպատակով՝ ամենամարդկային, ավելի մարդասիրական, շատ բախտավոր...

Միշտ էլ ածական խոսքի մաս ուսումնասիրող աշակերտների մոտ այնպիսի հարցեր են ծագում, որոնց մասին դասագրքում չեն շոշափվում:

Հիշենք, որ թվականն էլ ունի որոշ նրբություններ:

Ուսուցիչների մի խորհրդակցության ժամանակ դպրոցի տնօրենի խոսքում շեշտված «ութ աշակերտներ» արտահայտությունը զարմանք առաջացրեց կողքին նստած ուսուցչուհու մոտ, թե հայոց լեզվի և գրականության ուսուցչուի է, բայց ամբիոնից թվականի հետ գոյականը հոգնակի թվով է գործածում:

Իհարկե, սա չափանիշ չէ մասնագետի մասին կարծիք կազմելու, բայց արդո՞ք այդ ուսուցչուին գիտեր, որ որոշ դեպքերում գոյականը թվականի հետ գործածվելիս հանդես է գալիս հոգնակի թվով:

ա) Եթե գործածվում է գոյականը որոշյալ առմամբ:

**Հինգ աշակերտներն էլ մասնակցել են մրցույթին:**

բ) Եթե գոյականը և թվականը հեռանում են իրարից այլ բառերով:

**Այդ կիսն ունի չորս հիմնալի գովակներ:**

Հիշենք, որ դերանուններն էլ ոճական լայն հնարավորություններ ունեն: «Նա» դերանունն էլ, թվում է, փորձությունների միջով է անցել:

Հարցը, թե «նա» բառը դերանո՞ւն է, թե՞ գոյական, ինձ չափազանց զարմացրեց, բայց փորձեցի բացատրել սկսնակ ուսուցչուն, որ դերանուն է, այն փոխարինում է գոյականին, կարելի է ասել նաև՝ գոյականական դերանուն, իսկ ի՞նքը՝ եղավ հաջորդ հարցը:

Ուշադրություն դարձնենք որոշ ոճական տարրերակումների, որոնցով, ինձ թվում է, օգնած կլինենք մի շարք սկսնակ ուսուցիչների:

Գիտենք, որ երրորդ դեմքի անձնական դերանուն է «նա»-ն, որը գործածվում է մի երրորդ անձի անվան փոխարեն և մատնացույց է

անում ոչ խոսող (ես – ինքս), ոչ էլ խոսակից (դու - ինքդ), այլ մի ուրիշ անձ կամ դեմք:

### **Մայր Ասիապեկ աղջկան, որ նա ճշմարգությունը չի ասել:**

«Նա» դերանունն այս նախադասության մեջ մատնացույց է անում «աղջկան» գոյականին, որը բայական անդամի կամ ստորագյալի լրացույց է:

Այդ դերանվանը զուգահեռ գործածվում է նաև «ինքը» դերանունը, որը ևս կարող է մատնացույց անել որևէ առարկա:

### **Տղան սասաց, որ ինքը(նա) միշտ էլ սպասել է հոր վերապարզին:**

Այս նախադասության մեջ «ինքը» անձնական դերանունը մատնացույց է անում «տղա» գոյականին, որը ենթակա է: Նկատելի է, որ «նա»-ի գործածության դեպքում այն կփոխարիմի մի երրորդ անձի:

Երկու դերանուններն ել երրորդ դեմքի արժեքով են հանդես գալիս, բայց ունեն իմաստային տարրերություն:

Դրանք, միասին գործածվելով, կարող են արտահայտել իմաստի սաստկացում:

### **Նա ինքն է այդ մասին ասել:**

«Նա»-ն նաև ցուցականություն է արտահայտում, սա, դա, դերանունների նման կարող է իրի անվան փոխարեն գործածվել:

Սիշտ չէ, որ ցուցական «նա» դերանվանը փոխարիմում է «այն»-ը:

Որքան սովորական ու գեղեցիկ է հնչում «նա»-ն ներքոհիշյալ բանաստեղծական տողերում, որը փոխարիմում է «լեզու» գոյականին:

*Մեր լեզուն ծովիսն է մեր տրան,  
Մեր կշիռն աշխարհի մեջ,  
Նա աղն է մեր ինքնության,  
Հուրյան խորհուրդը մեծ (Հ Սահյան):*

Թե՛ դերանունների և թե՛ մյուս խոսքի մասերի ոճական հնարավորությունները հայերենում շատ են, ուղղակի պետք է նպատակահարմար և տեղին օգտագործել՝ հաշվի առնելով դրանց իմաստային նրբությունները, որոնք մեծ մասամբ գեղարվեստական գրականության մեջ են նկատելի:

Իրոք, հետաքրքիր է հայոց լեզուն, նրա **գաղպճարանները** մտնելով՝ ավելի ու ավելի ենք համոզվում մեր լեզվի «ճոխության» և «ճկունության» մեջ:

Չխուսափենք «նա»-ի կիրառության լայն շրջանակներից: Թող հնչի այն որպես հայրենի օրբան, որպես սուրբ խաչքար, լեզու մայրենի, որ «Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին Պայծառ է **նա**, որպես մշտաբորբոք փարոս, Վառված հրով անշեղ դարերում հին» (Ե. Զարենց):

## ԼԵԶՎԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ՝ ՉԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔ (ուսուցողական)

Դպրոցականների հայոց լեզվի և գրականության թեստային բազմաթիվ առաջարանքներում պահանջվում է գտնել բառազոր-ծածության, բառաձևի համաձայնության, հոլովառության և խընդ-րառության, շաղկապի կամ դերանվան կիրառության սխալները:

Դիտարկման ոլորտից նայելով բազմաթիվ լեզվական աղավա-լումների, որոնք երեսն նկատելի են լինում թե՛ մամուլում և թե՛ եթե-րում, ինչո՞ւ չեն, նաև որոշ մանկավարժների գրավոր կամ բանավոր խոսքում, դրանք քննարկման նյութ են դառնում նաև ուսուցիչների և աշակերտների համար:

Սովորաբար բառազործածության սխալները բառիմաստը շհաս-կանալու կամ ստոյգ շիմանալու հետևանք են: Դա նկատելի է առա-վելապես բառազույգերի գործածության ժամանակ, եթե իմաստա-յին տարբերակման դժվարություն է ստեղծվում:

Մեկ տարվա հաշվետվության մասին սխալ է գործածված. «**Հա-մայնքի դեկազարի զեկույցից հետո հմանեցին պարարնույթ հար-ցեր**»:

«Զեկույց» բառը բացատրվում է այսպես՝ որևէ հարցի մասին գրավոր կամ բանավոր հակիրճ տեղեկատվություն: Զեկույցը նաև գիտական կամ այլ բնույթի հետազոտությունների արդյունքների համառոտ հաղորդումն է: Զեկույց (այս դեպքում օտար բառով՝ ռա-պորտ) կարելի է վերադասին ներկայացնել որևէ դեպքի, պատահա-րի, մեկի վարքի կամ իր իսկ հրաժարականի մասին և այլն:

Փաստորեն նախադասության մեջ պետք է գործածվեր «զեկու-ցում» բառը, որը նշանակում է բանախոսություն, բանավոր խոսք, որը կարող է հնչել նաև իբրև գրվածքի ընթերցում:

Մեկ ուրիշ նախադասություն. «**Դպրոցի պնօքինության կողմից գրություն ուղարկվեց**»:

Արդի գրական հայերենում տնօրինությունը շատ անգամ գրոծա-ծում են «դիրեկցիա» բառի դիմաց, ինչը, սակայն, պիտի համարել աննպատակահարմար, քանի որ կա «տնօրենություն» բառը, որը հենց տեսչություն, դեկազարություն է նշանակում: **Տնօրինությունը** սովորական կիրառություն ունի, նշանակում է տնօրինելու, վերահս-

կելու իրավունք, իրավասություն:

Սովորաբար հայերենում հոլովում են գոյականներն ու դերանունները: Մյուս խորի մասերը կարող են հոլովել գոյականաբար գործածվելու: Այսինքն, բառը փոխում է իր ձևը, փոփոխության է ենթարկվում, ենց դրանից է կախված տվյալ բառի պաշտոնը: Բայց հաճախակի ենք հանդիպում հոլովածնի գործածության սխալների:  
**ա) Հրաժեշտի գոռն օրվան իր ծնողների հետի հյուր էր եկել... (փոխանակ՝ գոռն օրը, ե՞րբ հացին է պատասխանում, արդահայպում է ժամանակի իմաստ):**

**բ) Նա ինչդեռ հուշամեղալը փոխանցել հասցեապերին (փոխանակ՝ հասցեապիրոջը):**

Հայերենում ընդամենը մի քանի անձ ցոյց տվող գոյականներ ունենք (քույր, տեր, ընկեր...) և դրանցով կազմված բարդ բառեր (հորաքույր, հասցեատեր, դասընկեր...), որոնք պատկանում են **ող** արտաքին հոլովման:

**Ուժ** ածանց ունեցող գոյականներ ունենք, որոնք կարող են գործածվել որպես բայեր՝ շարժում-շարժվել, լուծում-լուծվել և այլն: Այդ գոյականներն ան հոլովմամբ կարող են հոլովվել՝ շարժման, լուծման...

Ուշադրություն դարձնենք այս նախադասությանը. «**Հերոսի նախակման 20-րդ դարելիցն էր»:**

«Նախատակվել» բառի բայակիմքը «նախատակ»-ն է, որն **ի** հոլովմամբ միայն կարող է հոլովվել՝ նախատակի, այնինչ այդ բառը հոլովվել է **ան** հոլովմամբ, որը սխալ է, չ”որ **ուժ** ածանցով, որպես գոյական՝ «նախատակում» բառի գործածության ձև չունենք:

Մեկ ուրիշ նախադասություն. «**Դրանք վերաբերում են արձակուրդների գործան ու...»:**

Ինչպես կարելի է «տալ» բառը գործածել որպես առարկա՝ գոյական, որը նոյնիսկ **ան** հոլովմամբ էլ հոլովվել է, այնինչ անկանոն բայ է, գործածվում է հիմնականում տվել, տալիս ձևերով: Որպես անորոշ դերբայ, այսինքն՝ անդեմ բայ, գոյականաբար գործածվելիս **ու** հոլովմամբ կարող է հոլովվել՝ տալու, տալուն..., հետևաբար «տրման» բառի գործածություն չունենք:

Կամ՝ ոչ թե «**ուզում եմ խոսեմ**», այլ «**ուզում եմ խոսել**»: Սա անորոշ դերբայով ձևավորված բաղադրյալ ստորոգյալ է, որը հաճախա-

կի է սխալ գործածվում:

Ահա նմանատիպ նախադասություն. «**Սիրում եմ ժամերով փակվեմ իմ սենյակում, առանձնանամ զրբերի հետ, կարդալ, գրեմ»:**

Պետք է լիներ՝ **սիրում եմ փակվել, առանձնանալ, կարդալ, գրել:**

Քանի որ խոսքը բայերին է վերաբերում, սխալ է «դառնալ» բայի այսպիսի գործածությունը. **«Նրանք բոունցր դառնան»:**

Ունենք բայեր, որոնք խոնարհման սովորական կանոններից շեղվում են: Այդ անկանոնությունը հիմնականում դրսևորվում է (բացի տալ, լալ, գալ բայերից) սահմանական եղանակի անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերում և հրամայական եղանակում:

Վերոնշյալ նախադասության մեջ անկանոն բայը անցյալ կատարյալով պետք է գործածվեր՝ **դարձան:**

Հաճախակի ենք հանդիպում նաև համակատար դերբայի սխալ գործածության ձևերի: Այն արտահայտում է ժամանակի իմաստ:

«**Կարդալուց ի՞նչ հասկացար**» հարցական նախադասության մեջ «**կարդալիս**» անդեմ բայի գործածությունն է ճիշտ: Սովորաբար անորոշ դերբայները գոյականաբար գործածվելիս բացառական հոլովում կարող են հանդես գալ նաև «**հետոն**» կապի հետ («**կարդալուց հետոն**»):

Բազմաթիվ են այդպիսի սխալները.

**ա) Որի զնալուց ասաց (փոխանակ՝ զնալիս):**

**բ) Լավ մրածելուց կհասկանաս (փոխանակ՝ մրածելուց հետո):**

Սխալների ենք հանդիպում նաև կապային կառույցներում. **«Ի շնորհիվ համագյուղացի խոշոր բարերարի...»:**

Եթե ճիշտ լիներ «ի շնորհիվ» կապակցությունը, ապա «ի շնորհիվ բարերարի» ասելուն հավասար պիտի սովորական հնչեր «բարերարի ի շնորհիվ» արտահայտությունը, որը սխալ է: Ի տարբերություն նախադիր կապերի, որ գործ է ածվում կապվող բառից առաջ և ետադիրների, որ գործածվում է հետո, «շնորհիվ» կապը դրվում է կապվող բառից առաջ և հետո, այն գործածվում է առանց «ի» նախդիրի:

Կապերի հետ սովորաբար գործածվում են բոլոր հոլովները, բացի ուղղականից:

Յուրաքանչյուր կապ կարող է հանդես գալ որոշակի հոլովածնի

հետ, ունենալ իր հղովառությունը:

Վերաբերության անուղղակի խնդիրը գործածվում է «մասին» կամ «վերաբերյալ» կապերով, բայց, ցավոք, այն իր տեղը չի գտնել այս նախադասության մեջ. **«Նա իր խոսքում նշեց նաև երեխաների կարողությունները» (փոխանակ լինի կարողությունների մասին):**

Կամ ի՞նչ կարիք կա նպատակի իմաստ արտահայտող «համար» կապը գործածել երկու անգամ նույն նախադասության մեջ. **«Գյուղացիներն սպիալիզած են գործի պատվիրել գնումների համար, շրջկենպրոն մեկնելու համար»:**

Բազմիցս հանդիպում ենք նմանատիպ կցկոտոր նախադասությունների՝ իմաստային և ոճական սխալ նրբերանգներով, բառերի անհարկի կրկնություններով:

**ա) Այնպես զեկողված վերնագրերը զուր վերնագրեր չեն, այլ՝ հեռուսին ընդգծող վերնագրեր:**

**բ) Նրանք իրենց վասրակը վասրակել են:**

**գ) Ծրջանում կան 70 հա նոռան բերքագրու այգիներ, կան նաև նոռան երիտասարդ այգիներ և նախավեալում է աշնանն ու զարնանը նոր այգիներ սպեղծել:**

Նկատելի են նաև բազմաթիվ խնդրառության սխալներ:

**ա) Նա դավաճանեց հայրենիքը (փոխանակ՝ հայրենիքի):**

**բ) Պեսք է խրանել զրավոր և բանավոր խոսքի զարգացմանը (փոխանակ՝ զարգացումը):**

Ընդհանրապես, «դավաճանել» բայց պահանջում է ու՞ն, ինչի՞ն հարցերին պատասխանող խնդիր լրացումներ՝ դավաճանել գործին, ընկերներին, սիրուն և այլն: Դրան հակառակ՝ «խթանել» բայի լրացումը պատասխանում է ոչ քե ինչի՞ն, այլ՝ ի՞նչ հարցին: Խթանել նժոյգը, գործը, զարգացումը..., բայց սովորաբար նախադասություններում գործածվում է այդ բայը սխալ խնդրառությամբ:

Հանդիպուն ենք նաև բայային անհամաձայնության դեպքերի:

Ովքեր չեն մոռանում, որ եզակի ենթակայի հետ ոբվում է եզակի, իսկ հոգնակի հետ՝ հոգնակի ստորոգյալ, նրանք, անշուշտ, հեշտ կնկատեն եղած անհամաձայնությունը, որը տարածվում է նաև լրացումների վրա:

**ա) Այս գործը առարկայական օլիմպիադայի շրջանային և համ-**

**բասիկական փոլում.. (փոխանակ՝ փոլերում):**

**թ) Երեխանները բոլորը միաքերան շնորհակալուրյուն հայդնեցին պնօքննին:**

Երկրորդ նախադասության մեջ առկա է շարադասական սխալ, պետք է լինի «**բոլոր երեխանները»:** Նույնիսկ ավելորդ է «բոլոր» բանի հետ «ը» հոդի գործածությունը:

Նկատելի են նաև հոդերի գործածության սխալներ:

**«Երկրի իշխանությունները բմբռնումով են մուրենում հարցին»** նախադասության մեջ պետք է գործածվեր «**իշխանություններն**»:

Դժվար չէ իմանալ, որ ձայնավորով վերջացող բառերն ստանում են «ն» հոդ, իսկ բաղաձայնով վերջացողները՝ «ը»: Այս կանոնը կարող է չայնավորով սկսվող բառ (այդ թվում նաև սպ, սկ, շտ և այլ հնչյունակապակցություններ, որոնց սկզբում լսվում է գաղտնավանկի ը): Այս փոփոխությունը չի կատարվում, եթե հարեւան բառերի միջև գրավոր խոսքում նշանակվում է ստորակետ կամ բութ:

Միա այդպիսի նախադասություն. **«Երբեք բոլ ոչ ոքա այն ցավն ու դառնությունն, ինչ յիր է զգացել»** (**փոխանակ՝ դառնությունը**):

Արդյո՞ք կարիք կա խոսելու այն բոլոր վրիպումների ու կետադրական սխալների մասին, որ բազմիցս նկատում ենք:

**«Չորս անչափահաս երեխանների հայր՝ Սասուն Կարապետյանն, իր ելույրում նշեց...**» նախադասության մեջ երկու կետադրական տրոհության նշան է դրվել, երկուսն էլ՝ ավելորդ, կա նաև հոդի սխալ գործածություն:

Մենք գիտենք, որ մարդ նշանակող բոլոր գոյականներն անձեր են, այդ թվում՝ հասարակ և հասուկ անունները:

Անձերից բացի մնացած բոլոր գոյականները, այդ թվում և կենդանիները, հայերենում իրեր են՝ քար, գրիչ, շուն, կատու...

Սովորաբար կենդանի նշանակող իր ցույց տվող գոյականը հայցական հոլովում ուղղականի փոխարեն նմանվում է տրականին, ստանում անձի առում: **(Նա գրկեց իր շանը: Ու՞ն)**

Կամ անձ ցույց տվող գոյականը հայցական հոլովում, որպես ուղիղ խնդիր գործածվելիս, տրականի փոխարեն նմանվում է ուղղականին, ստանում իրի առում: **(Ես ունեմ մենի աղջիկ: Ի՞նչ)**

Առաջադրանքում տրված «ո՞վ ինչ ասաց» հարցը պետք չէ կասկածի տակ առնել, եթե խոսքը վերաբերում է նապաստակին կամ սունկին, որոնք ընկերներ են, հետևաբար կարող են ստանալ անձի հարց: «**Նապաստակն ասաց...**» նախադասության մեջ «նապաստակը» պատասխանում է «ո՞վ» հարցին:

Չեն բացառվում նաև շաղկապի և դերանվան գործածության սխալները:

Ահա այդպիսի նախադասություն. **«Ոչ միայն գնօրեններն են քննադատաբար մովեցել այդ հարցին, այլ՝ բոլոր ուսուցիչները»**:

Չուզադրական ոչ միայն... այն, ոչ թե... այլ համադասական շաղկապների գործածությանը պետք է լուրջ ուշադրություն դարձնել: Սրանք տարբեր իմաստներ են արտահայտում, առաջինը՝ հավելման, երկրորդը՝ հակադրության:

Հաճախակի ենք հանդիպում «ով», «որ» հարաբերական դերանունների սխալ գործածության դեպքերի:

**ա) Այդ գիրքը յուրահապուկ հուշարձան է հերոսի հիշապակին, ով միշտ ապրում է մեր կողքին:**

**բ) Հորեւյանական մեղայով պարզեապրմել է նրա մայրը, որի հանձնումը կապարեց զրքի հեղինակը:**

Դերանունների սխալ գործածության արդյունքում վերոնշյալ նախադասություններում նկատվում է նաև իմաստի աղճատում:

Մենք գիտենք, որ մտերիմ մարդուն «դուք»-ով դիմելը պաշտոնականության և սառը վերաբերմունքի նշան է: Բայց հարգանքի հոգնակի է գործածվում՝ որպես խոսակցի նկատմամբ հարգանքի դրսնորման ձև, եթե նրան դիմում են հոգնակի «դուք» դերանունով եղակի «դու»-ի փոխարեն: Այդ դեպքում «դուք»-ը և նրա հոլվածները (ձեր, ձեզ...) գրվում են մեծատառով:

Ահա դերանվան մեծատառի գրության սխալ գործածություն. **«Ճնորհակալուրյուն Ձեզ, սիրելի կրտսեր բարեկամներ, դուք մեծ ուրախուրյուն պարմառեցիր մեր փոքրիկներին: Թող կյանքում Ձեզ միշտ ուղեկցեն ուրախուրյունն ու եղջանկուրյունը»**:

Այս փոքրիկ տերստում երկու անգամ մեծատառով գործածված «Ձեզ»-ը պետք է փոքրատառով լիներ, քանի որ խոսքն ուղղված է «կրտսեր բարեկամներին»:

Ընդհանրացնելով միտքս՝ ասեմ, որ կան ակնհայտ աղավաղումներ,

որ բավարար գրագիտություն ունեցող դպրոցականն էլ է գիտակցում:

Կան և «անմեղ թվացող» կամ «խոր ընդհատակ» անցած այնպիսի խոտորումներ, որ միայն նուրբ և ուշադիր աչքը կարող է դրանք նկատել: Բոլոր դեպքերում այդ շեղումները բառակազմության կանոնների չհմացության, բառի առանձին բաղադրիչների թյուրըմբռնման, քերականական տարրեր օրինաչափությունների չհմացության արդյունք են:

Բառաձևի սխալները տարաբնույթ են: Լեզվական ամեն մի շեղում, ի վերջո, սկսվում է առանձին մարդկանց կողմից և հետո միայն, խոսողների ավելի ու ավելի լայն շրջանակներ ընդարձակելով, դառնում ընդհանրական: Դրա դեմ պայքարելու հիմնական եղանակը նույն անհատական ջանքերի գնով ճիշտ, անխարար ձևերին վերադարձու ուղին է:

Բառերի իմաստային խառնաշփոթից խուսափելու համար յուրաքանչյուր ոք, ով հիմնականում գրավոր խոսքի հետ գործ ունի, պետք է ընդարձակի իր իմացության շրջանակը, կարողանա տիրապետի հայոց լեզվի քերականական օրինաչափություններին, որպեսզի ըննարկման նյութ չդառնան նրա գործածած լեզվական աղավաղումները:

Ուղղակի ցավալի է, որ այդ շեղումները նկատում է նաև այսօրվա դպրոցականը, բայց ուրախալի է, որ ունենք աշակերտներ, որոնց հետ կարելի է խոսել և գրել «գրագետ» լեզվով, առանց լեզվական «վթարների»:

Չեմ ուզում, որ թղթին հանձնված մտահոգություններս դառնան հպանցիկ տպագրություններ, քանի որ մաքուր լեզուն մեր մաքուր ինքնությունն է, մեր շիտակ ու անեղծ մտածողությունը:

**«Լուսարար» 2012, թիվ 36**

Անձի դաստիարակությունն ավարկվում, իր նպագրակին է հասնում  
այն ժամանակ, երբ անձն այնքան է հասունանում, որ ունենում է  
հեղագա կյանքի ընթացքում ինքն իրեն կրթելու ուժ և կամք,  
իմանում է միջոցներ և հնարներ, թե ինչպես դա կարող է  
իրականացնել որպես արդարին աշխարհի  
վրա փոխազդող անհապ:

Ա. Դիստերվեգ

## ԵՐԵ ԻՆՔՆԱԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱՌՆՈՒՄ Ե ՆԵՐՔԻՆ ՊԱՀԱՆՁ

Այսօր հանրակրթական դպրոցի ուսուցչին և, առհասարակ, մանկավարժին ներկայացվող պահանջներից մեկը ինքնակրթությունն է, որը պետք է շարունակական բնույթ կրի: Տարեցտարի փոխազդում են կրթության ու դաստիարակության պահանջները: Հետևաբար ուսուցչի գործունեությունն էլ ստեծագործական զարգացում է ապրում: Նրա անձնային որակներով, մասնագիտական պատրաստվածությամբ, մանկավարժական հմտությամբ ու վարպետությամբ է պայմանավորված դպրոցում ուսումնադաստիարակչական նորարարական գործընթացի ձևավորումն ու հաջող իրականացումը: Հիանալի է ասկած. «**Ուսուցիչն ապրում է այնքան ժամանակ, քանի դեռ նա սովորում է, ինչ որ դադարում է սովորելուց, նրա մոր մեռնում է ուսուցիչը»: (Ուշինակի)**

Այսօր աշակերտների հետաքրքրություններն ու ընդունակությունները, համոզմունքներն ու կատարելաւատիվերը, ինչպես զիտենք, նշանակալի տեղաշարժերի են ենթարկվել: Եվ ուսուցիչը պետք է ոչ թե ընդդիմանա աշակերտների կողմից արդեն հաճախ դրսնորվող ժամանակակից մտքերին ու մտահղացումներին, այլ միշտ ուսենա ժամանակին իրնքաց քայլող մանկավարժական մտածողություն ու դիրքորոշում, ստեղծագործական որոնումներ կատարի, զուգակցի ուսուցման ավանդական ու նոր եղանակները և նորովի կազմակերպի ուսուցման գործընթացը:

Յավով պետք է նշենք, որ մանկավարժական գործունեության ընթացքում հաճախ առնչվում ենք ուսուցման ավանդական ձևերին կառչած ուսուցիչների ակնհայտ դրսնորվող դժգոհություններին ու

տրտնջանքներին: “Դժվարությամբ են կոտրվում նորի ընկալման ու մարսման կարծրատիպերը: «Արդյո՞ք այդ հարցում աշակերտները մի քայլ առաջ չեն ուսուցիչներից», - հաճախ ենք ստիպված լինում մտածել:

Աշակերտներին հետազոտական աշխատանքի մղելու նկատառությունվ առաջարկեցի հայ նշանավոր վիպասան Ռաֆֆու մասին տեղեկություններ հավաքել համացանցից, միաժամանակ փորձում էի համոզվել, որ տնային հանձնարարությունների միջոցով աշակերտների և ուսուցիչների միջև ստեղծված համագործակցության արդյունքում զարգանում է նաև ուսուցչի ինքնակրթությունը, բայց այն դեպքում, եթե ուսուցիչն ինքը հնարավորություն չունի օգտվելու համակարգչից: Հետաքրքիրն այն էր, որ թույլ տվյալող աշակերտներն ավելի մեծ ակտիվություն ցուցաբերեցին, և շուտով իմ ձեռքի տակ կար բավականաշափ տեղեկություն գրողի ժառանգների մասին:

Ուսուցիչը պետք է աշակերտների մեջ հետազոտական աշխատանքի կարողություններ մշակի, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության, ինչու չե, նաև կրեատիվության (անսովոր զաղափարներ ծնելու կարողություն, մտածողության ավանդական սխեմաներից շեղվելու, խնդրահարույց իրավիճակներում արագ լուծումներ գտնելու ընդունակություն) ձևավորմանն ու զարգացմանը: Չմոռանանք, որ ժամանակակից ուսուցումը ենթադրում է ստեղծագործականություն, հետազոտական ու որոնողական մտածողություն՝ լինի դա հումանիտար, թե ճշգրիտ գիտության ոլորտներում: Աշակերտների համար միշտ էլ անհասկանալի հարցեր են լինում: Այսօր այդ հարցերի ներկայանակն ավելի գունեղ է, ավելի ընդգրկուն, և ուսուցիչը կրկնակի պետք է պատրաստ լինի ցանկացած պահի պատասխանելու նրանց հարցերին: Եվ այդ պատասխանները պետք է լինեն ոչ միայն համակողմանի ու սպառիչ, այլև հնարավորինս ուսուցանող ու դաստիարակող:

Ուսուցիչն ինքնակրթության ճանապարհին ձեռք է բերում սեփական մեթոդների, հնարների ու մոտեցումների կիրառման իր շտեմանը, որը գործողության մեջ դնելով՝ կարողանում է լուծել մի շարք խնդիրներ: Ի վերջո, ուրիշներին սովորեցնելու համար հարկ է իմանալ ավելին, քան նրանք, և որքան բազմազան են կիրառվող ու ներդրվող մեթոդները, այնքան հետաքրքրաշարժ ու հագեցած է դասագործընթացը:

Ինքնակրթություն մենք ձեռք ենք թերում՝ օգտվելով տարրեր աղբյուրներից: Ոմանք հակված են ինքնակրթության աղբյուր համարել սուկ մասնագիտական ու մեթոդական գրականության ու ամսագրերի ուսումնասիրումը: Մինչդեռ ինքնակրթությունը չի կարող լիարժեք համարվել առանց համացանցի, վերապատրաստման դասընթացների ու համաժողովների, փորձի փոխանակման միջոցառումների, տեսաֆիլմերի դիտման և այլն: Թերևս ինձ համար մանկավարժական ինքնակրթության դրսուրում է դառնում դասավանդվող առարկայի հետ կապված արտադասարանական գործունեության ծավալումը: Դա կարող է լինել գրական երկի կամ կերպարի վերլուծություն, արտադասարանական միջոցառում, թեմատիկ պատի թերթի հրապարակում և այլն:

Առանց ինքնակրթության չի կարող տեղի ունենալ ուսուցչի անձնային աճ, իսկ ուսուցչի անձնային հատկությունները չափազանց կարևոր են հատկապես աշակերտների հետ ունեցած մանկավարժական առողջ հաղորդակցման ժամանակ: Զնոռաններ, որ մարդասիրությունն ու հանդուժողականությունը համամարդկային առաջնային արժեքներ են դիտվում:

Սեպտեմբերի սկիզբն էր: Մտա 9-րդ դասարան: Դասղեկը հայտնեց, որ իր որդին (այդ դասարանում է սովորում) ամսուային հանձնարարությունները չի կատարել: Միաժամանակ ժայռագույն ավելացրեց, որ նա ճամբարում է եղել և հասցրել է այնտեղ սիրահարվել... Օգտվելով առիթից, որ նոր ուսումնական տարվա իմ առաջին դասաժամն էր, ասացի, որ այդ դեպքում այսօր կխոսենք սիրո մասին: Դասղեկը, որ մտադիր էր դրւս գալ դասարանից, իմ խոսքերից ետ շրջվեց, գուցե չհավատաց, բայց դասարանում մնալու ցանկություն հայտնեց: Պատաճեկան սիրո երազային ապրումները գուգակցեցի հայ դասականների անձնական կյանքին ու նրանց սիրո երգերին: Կլանված լսում էին աշակերտները, ավելի շատ զարմացած, որ խոսվում էր մի թեմայի շուրջ, որ երբևէ սեպտեմբերի 4-ին ոչ մի ուսուցիչ չէր աղծարձել: «Սիրո լեզվով» էի խոսում նրանց հետ՝ մոռացած, որ ամառային հանձնարարություն պիտի ստուգեի: Իսկ դասղեկը դեռ երկար ժամանակ պիտի իր հիացմունքն արտահայտեր այդ դասաժամի մասին: Անհերքելի փաստ է, որ արդյունավետ ուսուցում կարող է կազմակերպել այն ուսուցիչը, ով գրադարձ է ինք-

նակրբությամբ, ծանոթ է մանկավարժական մամուլի նորություններին, հանդես է գալիս համապատասխան ընթերցումներով, կազմակերպում է ընդօրինակման դասեր, տարրեր միջոցառումներ: Ուսուցման արդյունավետ կազմակերպմանը նպաստում է նաև դպրոցի տնօրենի, ուսումնական աշխատանքների գծով տեղակալների կողմից կատարվող պարտադիր դասալսումները, դրանց վերլուծությունները, առարկայական մեթոդմիավորումների կանոնակարգված աշխատանքը: Դասալսումը, իրոք, դառնում է մանկավարժական ինքնահաստատման ու ինքնաւրսանորման հիմնայի առիթ:

Ավագներիս գործն է նաև սկսնակ ուսուցիչներին օգնելը: Ավագ սերնդի և սկսնակ ուսուցիչների մանկավարժական համագործակցությունը պետք է սերտ լինի, իսկ հաղորդակցումը՝ ներդաշնակ ու առողջ: Համոզված եմ, որ աջակցության արդյունքում կվերանանուածից ունանեց մոտ նկատվող շփորձածությունը, որ երևան է գալիս դասալսումների ժամանակ: Վերջերս նման իրավիճակում հայտնված երիտասարդ ուսուցչուհուն փորձում էի հանգստացնել, որ իր «փրկության» ճանապարհ ինքնակրթությունն է, կատարելագործված և իր առարկայի մեջ հմտացած ուսուցիչը երբեք չի շփորձում: Որոշ դեպքերում ձևական բնույթ են կրում մանկավարժական տարրեր թենաներով կատարված նշակումները, նույնիսկ ցանկալի չի լինում լսել այստեղից - այնտեղից «ծաղկաբաղ» արված նյութերը:

Տարիներ առաջ ականատես դարձան մի դեպքի, որ այսօր էլ զարմանքով եմ հիշում: Երիտասարդ ուսուցչուհուն իր առջև դրված ամսագրից հապճեպորեն արտագրում էր տողեր՝ համոզված, որ իր ինքնակրթության զարգացմանն էր նպատակառողված այդ աշխատանքը: Հայացքս թերևակի անցկացրի տողերով, և ո՞վ զարմանք անօգնական ծերերի ու հաշմանդամների մասին էր նյութը:

Ինքնակրթությունը պետք է ունենա հստակ ուղղվածություն, որը գործունեություն ծավալելու հսկական շարժառիթ կլինի: Ինքնակրթությունը պետք է կրի հստակ բնույթ և ունենա շոշափելի արդյունքներ: Իսկ երբ ինքնակատարելագործումը դառնում է ներքին պահանջ, ուրեմն ուսուցիչը կանգնած է առաջավոր գծում, իր կոչման բարձրության վրա: Ինքնակրթությամբ զբաղվող ուսուցիչը կերտում է առողջ սերնդի ապագան և ուրվագծում հայրենի եզերքի խաղաղ ու հաղթական հեռուները:

**ՈՒՍՈՒՑԻՉ - ԾԱՌԱԿԱՎՈՐ ԴՊՐՈՑԵԿԱՆ  
ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔ  
(դաստիարակչական)**

Ուսուցիչ ամենամերձավոր օգնականը ծնողն է, որովհետև ընտանիքում է դրվում երեխաների վարքի ու բնավորության, այդ թվում նաև կարգապահական հմտությունների ձևավորման հիմքը, որից մեծ շափով կախված է նաև այն, թե ինչպիսին է լինելու ապագա քաղաքացին: Ծնողի և ուսուցիչի համագործակցության արդյունքում միայն կարելի է հասնել հաջողության: Մենք՝ ուսուցիչներս, առջև գտում ենք ծնողական հասարակայնության հետ, և նրանք բոլորն էլ տարբեր են: Զգարմանաք, բայց այստեղ ևս պահանջվում է ցուցաբերել անհատական ու տարբերակված մոտեցում: Լինում են ծնողներ, որ սիրում են իրենց երեխաների մասին միայն գովասանք լսել, բայց մյուսները, ընդհակառակը, ուզում են իմանալ ճշմարտությունը, լսել նրանց թերությունների մասին՝ դրանք վերացնելու համար: Հասկանալի է, որ այդպիսի ծնողների հետ ուսուցիչը կարողանում է ասել նրանց երեխայի թերությունները, իսկ առաջինների հետ պետք է լինել զգույշ: Հոգեբանամանկավարժական որոշակի գիտելիքներին տիրապետելը, կրկին ինքնակրթության արդյունքում, օգնության է գալիս, և հաջողությունը հեռվում չի մնում: Խորապես սխալ-գումար են այն ուսուցիչները, ովքեր ընդդիմություն են դառնում ուսուցիչ-ծնող կամ դպրոց-ընտանիք փոխհարաբերություններում: Ուսուցիչը երբևէ չպետք է ենթարկվի փոխհարաբերությունների տարբերայնությանը: Հավակնությունը՝ ուսուցչի, թե ծնողի, միշտ էլ խարարել է ուսումնադասատիարակչական գործընթացը, որտեղ գլխավոր տուժողը եղել է աշակերտը: Վախ ներշնչելն ու «սկզբունքներ խաղալը» սույն կեղծ հեղինակություն վաստակելու խարուսիկ ձգտումներ են, որոնք դատապարտված են անպաղության: Մինչդեռ խորհուրդ ու տեղեկատվություն տալու, ինչու չեն խնդրելու ոճը ուսուցիչ-ծնող հարաբերություններին հաղորդում է ժողովրդավարացման տարբեր՝ նպաստելով ինքնակառավարման ու զարգացմանը:

Ծնողների հետ աշխատելիս ուսուցիչը պետք է կիրառի տարբեր մեթոդներ՝ փորձելով մեկին բացատրել, մյուսին համոզել... Աշ-

կերտի կարգապահության վրա էապես ազդում է ծնողի և ուսուցչի միջև միասնական համագործակցային կապը: Երբեմն ծնողն իր երեխային հեռու է պահում ընտանեկան գործերից, որի հետևանքով նա մեծանում է փափկասուն ու անբան: Ծնող-ուսուցիչ կապն այս առումով կարող է նպաստել նաև ծնողական մանկավարժության ձևավորմանը, և ուսուցիչը կամ դաստիքը դաշնան հեռահար դաստիարակության սուբյեկտներ:

Հիշում եմ, որ շաբաթօրյակի ժամանակ դպրոցի հարակից փողոցի մայթը մաքրելիս աշակերտներից մեկը խուսափեց աշխատանքից: Շուտով դրան հետևեց ծնողի դժգոհությունը, թե իր երեխան ինչո՞ւ՝ պիտի քահ վերցնի ձեռքը: Այնինչ աշխատանքի մեջ են ձևավորվում աշակերտների կարգապահական հմտությունները, և աշխատանքային պահանջնունքների ձևավորմամբ են կյանք ստանում մնացած հոգևոր պահանջնունքները:

Արդյո՞ք միշտ են ծնողները ակտիվություն ցուցաբերում և ժամանակին ներկայանում դպրոց: Քավ ինձ, քայց կան ծնողներ, որ ներկայանում են, երբ ցանկանում են, որոշները խուսափում են: Պատճառները տարբեր են՝ ոմանք ժամանակ չունենալու, ոմանք իրենց հասցեին քննադատական խոսք չլսելու պատճառով: Նույնիսկ կան ծնողներ, որ դպրոց են հաճախում միայն ուսուցչին մեղադրելու նպատակով: Լինում են դեպքեր, որ ուսուցիչը երբեմն արժանանում է նաև անհիմն մեղադրանքների: Սա չարյաց փորբազույնն է, քանի որ կան նաև դեպքեր, երբ ծնողը ուսուցչին վարկաբեկում է տանը՝ դպրոցական երեխաների կողքին: Բոլոր ծնողները չեն, որ ծանոթ են ուսումնական գործներացին, ունեն քավարար գրագիտություն, որի արդյունքում խարարվում է լիարժեք փոխըմբռնման ու փոխհամաձայնության ընթացքը:

Ծնողի դժգոհությունը, որ իր երեխայի գրավոր աշխատանքները միշտ էլ ցածր են գնահատվում, պարզաբանվեց: Արդյունքում. «Եթե ավելորդ դրվագ ստորակետներն ել սխալ համարեք, հասկանալի է, որ ցածր գնահատական կատանա, գոնե կետադրականները չհաշվեիք»: Այսպիսի «միջամտությունների» ժամանակ ուսուցչից մեծ ջանքեր ու վարկեցողության պատրաստի դեղատոններ են պետք մրցավազքի մեջ մտած ծնողին տարհամոզելու կամ ճշմարիտը ցուցանելու համար: Այստեղ էլ օգնության է գալիս մանկավարժության

մեջ ընդունված, այսպես կոչված, ժողովրդավարական ոճը:

Դպրոցականի կարգապահությանը, ինչպես լավ, այնպես էլ վատ կողմերով, կարող է անդրադառնալ ընտանեկան դաստիարակությունը: Հազիվ զսպեցի իր երեխային խփելու պատրաստ հորը: Ի զարման ինձ՝ զսպված կատաղությամբ ավելացրեց. «Տե՛ս՝ ի՞նչ տղա է դառնալու»: Վերջերս իմացա, որ նախկին շրջանավարտը՝ բուհում սովորող այդ «տղան», մի ծեծկոտութիւն պատճառով հայտնվել է բանտում:

Ընտանիքում շատ ժամանակ ավելի հեշտ է երեխաների մեջ կարգապահական հմտություններ դաստիարակելը, քան դպրոցում, որովհետև ընտանիքի կազմը կայուն է, կոլեկտիվը՝ փոքր: Բայց որոշ ծնողների կարծիքով աշակերտների կարգապահության հարցով պիտի զբաղվի դպրոցը, իսկ իրենց հիմնական գործը միայն նյութականի ապահովումն է: Այդ պատճառով հաճախ հեշտությամբ կորցում է դպրոցում ձեռք բերվածը: Դպրոցական կարգապահությունը տուժում է նաև այն բանից, եթե ուսուցչի և ծնողի կողմից երեխաներին ներկայացվող պահանջները չեն համապատասխանում կամ միասնական չեն:

Գնահատականի համար ուսուցիչների հետ հաճախակի էր վիճում աշակերտը, որի ծնողը բացատրեց, թե ինքն է պարտադրել իր երեխային, որ միշտ բարձր գնահատականով գա տուն, որի արդյունքում վերջինս բռնել էր կեղծ գնահատական կորզելու ճանապարհը և սկսել վիճել ուսուցիչների հետ: Եվ այստեղ է, որ ուսուցիչն ստիպված է լինում համբերությամբ ծնողին բացատրել աշակերտ երեխայի հնարավորությունների ու ծնողական անհիմն հավակնությունների անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում տուժում է աշակերտը:

Ծնողը հաճախակի էր բողոքում իր դստեր տարօրինակ պահվածքի համար, որ չի լսում, կոպիտ է դարձել, ամեն ինչից դժգոհ է, և խնդրեց ինձ՝ որպես դաստիկի, խոսել նրա հետ: Ժամանակի ընթացքում այդ աշակերտունու հետ իմ գրույցները զգացնել չուվին այն փոփոխությունը, որ այսօր նկատվում է նրա մոտ: Բայց ես զինվեցի մանկավարժական համբերությամբ և կիրառեցի ստեղծված կացությունից պատվով դուրս գալու իմ նախընտրած եղանակը: Դասարանի ավագ նշանակեցի: Այժմ ամբողջ դպրոցում խոսվում է

իմ կրտսեր օգնականի՝ 11-րդ հումանիտար դասարանի ավագ Անուշ Առաքելյանի մասին: Սիջակ կարողությունների տեր աշակերտուիկի է, բայց մեծ սիրով ու պատասխանատվությամբ է կատարում իր աշխատանքը, նաև աշկոմի անդամ է, բոլորի համակրելին:

Ծնողի մտահոգությունն ու անհանգիստ վիճակը մնացել են անցյալում, ուրախ եմ, որ գոհունակություն եմ նկատում նրա դեմքին:

Երեխայի լիարժեք դաստիարակության, հասարակության համար պիտանի քաղաքացի ձևավորելու խնդիրը պահանջում է համալիր մոտեցում դաստիարակության գործին: Հաճախ մեծերի պատճառով անցանկալի երևույթներ են երևան գալիս, որից տուժում է դպրոցական կարգապահությունը: Պատահում է, որ դաստիարակության գործընթացը աղավաղվում է, երեխայի ներքին հոգեկան ներդաշնակությունը՝ խարարվում, և նրա մոտ ձևավորվում են սուտն ու կեղծիքը:

Աշակերտը բացեիքաց հայտարարում է, թե ուսուցիչն իրեն ծեծել է միջանցրում վազելու պատճառով, այն էլ՝ ուսուցիչների և աշակերտների ներկայությամբ: Հակառակ պարզաբանումներին, թե պետ հերքվեց այդ սուտը, նա անդրդեմ էր. «Միևնույն է, ես ասելու եմ, որ ծեծվել եմ»:

Ամեն անգամ, երբ նկատում եմ գլխիկոր հայացրով խոնարհար ինձ բարեսող այդ աշակերտին, այդ վատ հիշողությունն է իմ մոտ արթնանում, ու ցավում եմ, թե ինչպես կարելի է աշակերտին «գործիք» դարձնել և որպես թիրախ՝ օգտագործել ուսուցչի դեմ:

Յավալի է, բայց արձանագրված իրական դեպք, որ ամեն անգամ հիշելով՝ ցավ ու կարենցանք եմ զգում այդ աշակերտի հանդեպ և ցույց տալով, որ մոռացել եմ, արտաքուստ իմ ժայխով փորձում եմ խրախուսել նրան, բայց հիշում եմ միշտ՝ որպես իմ հոգում անթեղված ոչնորացված ցավոս մի սալի:

Ծնողի և ուսուցչի հոգևոր աշխարհում առաջացած անջրպետը վնասում է դաստիարակության ընդհանուր գործին: Երեխան միշտ բարին ու գեղեցիկը պետք է տեսնի իր ծնողների և ուսուցիչների կերպարներում, նրանք պետք է դառնան նրա կյանքի ուղեկիցը և բարի խորհրդատուն:

Իմ աշխատանքային գործունեության ընթացքում բախտ է վիճակվել մեծամասամբ գործ ունենալ գիտակից, խելամիտ ծնողների

հետ, որոնց հետ համագործակցության արդյունքում ձևավորվել են այնպիսի աշակերտական կոլեկտիվներ, որոնք ինձ հպարտանալու առիթ են տվել, որովհետև նրանց մոտ կար նպատակ, խմբային համագործակցություն, խմբային մշակույթ ու ամրագրված սկզբունքներ:

Ուսուցիչ-ծնող կապը դպրոցական կարգապահության առանցքն է, որի համար այսօր անելիքներ ունենք թե՛ ուսուցիչներս և թե՛ ծնողները: Համբերությամբ զինվենք դաստիարակող այդ կարևոր ինստիտուտի և դպրոցի հետ կապը պահանջվող մակարդակի վրա պահելու կարևոր գործիմ:

**ԹԵՍԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՂՄԱԳՐԻ ՆՄՈՒԾՆԵՐ  
ԲԱԺՅԱՌԻ ԿՅԱՆՔԸ**

**Առարկան՝** հայ գրականություն

**Դասարան՝** 10-րդ

**Թեման՝** Ըափփի: Կյանքը:

**Նպատակը՝** Բաֆֆու կյանքի մասին անհրաժեշտ տեղեկությունների հաղորդում:

**1.Աշակերտները կիմանան՝**

- ա) որտե՞ղ, ե՞րբ, ի՞նչ ընտանիքում է ծնվել Բաֆփին.
- բ) ի՞նչ կրթություն է ստացել.
- զ) ինչո՞վ է զբաղվել.
- դ) որտե՞ղ է աշխատել.
- ե) ե՞րբ է վախճանվել և որտե՞ղ է քաղված:

**2.Աշակերտները կկարողանան՝**

- ա) հետազոտական աշխատանքի միջոցով փնտրել և գտնել տեղեկություններ Բաֆֆու անձնական կյանքի մասին.
- բ) բանավոր և գրավոր խոսք ստեղծել.
- զ) կազմել գրողի կյանքի ժամանակագրությունը:

**Պատմական նյութեր՝** Բաֆֆու և իր հարազատների նկարներից, ռեժիսորներ, գրքեր, նյութեր՝ գրական ամսագրերից ու թերթերից:  
**Կիրառվող տեխնոլոգիաներ՝**

- 1.Տեղեկատվական-հետազոտական
- 2.Զարգացնող ուսուցման
- 3.Կոլեկտիվ համագործակցության

**Նախապատրաստական աշխատանք:**

Նախօրոք համձնարարվում է 4-5 աշակերտի՝ տեղեկություններ հավաքել գրողի կյանքի մասին համացանցից կամ տեղեկատվական այլ աղբյուրներից:

**Խրանման փուլ**

Այդ աշակերտները ներկայացնում են իրենց ռեժիսորատները՝ գրողի կյանքի որոշ մանրամասնություններով: Առաջարկվում է բոլոր աշակերտներին՝ մտքում կարդալ դասագրքի նյութը գրողի կյանքի մասին:

### **Իմաստավորման փուլ**

Մաֆֆու մասին տեղեկություններ հավաքած աշակերտներին առաջարկվում է ներկայացնել մանրամասնություններ, որ դասագրքում չկան: Գրողի և նրա հարազատների մասին առանձին աշակերտներ ներկայացնում են իրենց ուսումնասիրած նյութերից:

### **Կշռադատման փուլ**

Հարցազրույցի միջոցով նորից ամփոփվում է դասանյութը և աշակերտներին առաջարկվում է գրականության տեսրերում նոր էջ բացել ու գրել Բաֆֆու կյանքի ժամանակագրությունը՝ օգտվելով նաև դասագրքում տրված թվական տվյալներից:

### **Ժամանակագրություն**

**1835թ.** - ծնվել է Պարսկաստանի Սալմաստ գավառի Փայաջուկ գյուղում՝ հարուստ ազնվականի ընտանիքում: Նախնական կրթություն է ստացել տեղի ծխական ուսումնարանում:

**1847թ.** - մեկնել է Թիֆլիս, ուսանել Կարսավետ Քելախյանցի դպրոցում:

**1852թ.** - ընդունվել է ոռոսական պետական գիմնազիայի 4-րդ դասրանի:

**1855թ.** - սկսել է գրել եռահատոր «Սալբի» վեպը:

**1856թ.** - գիմնազիայի դասընթացը չավարտած՝ վերադարձել է Փայաջուկ՝ տնօրինելու գերդաստանի կառավարման գործը:

**1857-58թթ.** - ճանապարհորդել է Պարսկաստանի և Թուրքիայի հայկական գավառներում, գրառել ժողովրդի նիստուկացի, բնաշխարհագրական տեղայնության, պատմական հիշատակումների վերաբերյալ իր հարուստ տպագրությունները:

**1872թ.** - հաճախակի եղել է Թիֆլիսում: Ընդունել է Գրիգոր Արձրունու իրավերը, սկզբից դարձել «Մշակի» գլխավոր աշխատակիցը և թերթի հջերում տպագրել իր գեղարվեստական ստեղծագործությունները:

**1875-77թթ.** - աշխատել է Թավրիզի Արամյան դպրոցում՝ որպես հայոց լեզվի և պատմության ուսուցիչ:

**1877-79թթ.** - դասավանդել է Ագուլիսի հայկական դպրոցում:

**1879թ.** - վերադարձել է Թիֆլիս, որտեղ մնացել է մինչև կյանքի վերջը՝ զբաղվելով միայն գրական գործունեությամբ:

**1881թ.** - ճանապարհորդել է հայոց Աղվանից և Սյունյաց գավառներում, որից հետո գրել է «Խամսայի մելիքություններ» պատմական ուսումնասիրությունը:

**1884թ.** - խզում է գրողի հարաբերությունները «Մշակի» խմբագրի հետ և սկսում է տպագրվել «Արձագանք» շարաթաթերում:

**1888թ.** - առանձին գրքով տպագրվել է «Սամվել» պատմավեպը:

**1888թ.** - վախճանվել է (ապրիլի 25) Թիֆլիսում և քաղվել Խոջիվանքի գերեզմանոցում:

### **Տնային աշխատանք**

Հանձնարարվում է Բաֆֆու կենսագրությունը սովորել՝ համաձայն լրացուցիչ տեղեկությունների և ըստ ժամանակագրության:

**Հետազոտական աշխատանքի արդյունքում աշակերտների  
հավաքած լրացուցիչ նյութերը Բաֆֆու  
և նրա հարազատների մասին**

#### **ա) Բաֆֆու մասին**

Բաֆֆու «Սառա» պոեմն ունի ինքնակենսագրական բնույթ: Բաֆֆու քրոջ որդին պատմել է, որ պոեմի բովանդակությունն իրականություն է: Այն ներկայացնում է գրողի առաջին պատանեկան սիրո ողբերգության պատմությունը: Պոեմը մեծ ազդեցություն է գործել Հովհ. Թումանյանի վրա, որն էլ դրա ազդեցությամբ հետազոտում գրել է «Սարո», «Անուշ» պոեմները:

Պոեմի հերոսուհին է Բաֆֆու՝ պատանի Հակոբի առաջին սերը: Աշխույժ ու գեղեցիկ Սառան պարզ, անկեղծ, անմիջական ու խոր սիրով է սիրում Մելիքի որդի Հակոբին: Պատանի Հակոբը յուրօրինակ ձևով է իր սերը հայտնում թուլիչ աղջկան: Նա իրենց այգում աճող խնձորենու մի մեծ խնձորի վրա թղթից կտրտած տառեր է փակցնում, որոնց կապակցումը կազմում էր սիրած աղջկա անունը՝ Սառա: Խնձորը հասունանալով՝ կարմրում է, իսկ տառերի փակցրած տեղերը մնում են սպիտակ:

Հերթական հանդիպման ժամանակ Հակոբը պոկում է այդ խնձորը և նվիրում սիրած աղջկան: Վերջինս քնքշանքով ընդունում է սիրո առհավատչյա այդ խնձորը: Նրանց զգացմունքները խորանում են:

Երբ Բաֆֆու հայրը որդուն տանում է Թիֆլիս՝ ուսման տալու, աղ-

շիկը խոստանում է սպասել սիրած տղայի վերադարձին:

Անցնում են տարիներ, Սառայի ծնողները, այլևս կորցնելով համբերությունը, բռնությամբ նշանում են նրան: Սառան անշափ ծանը է տանում այդ իրողությունը: Հարսանելան արարողության երեկոյի ընթացքում իր հետ վերցրած սրբակից քոյն է ընդունում և հարսանքավորների աչքի առաջ հենց եկեղեցում էլ մահանում՝ հավատարիմ մնալով սիրած տղային տված սիրո երդմանը:

Ականատեսների և հարազատների վկայությամբ Ռաֆֆին Փայացուկ վերադառնախս միշտ այցելել է իր սիրած աղջկա՝ վաղամենիկ Սառայի գերեզմանին և ծաղիկներ դրել նրա շիրիմին:

Հետագայում Ռաֆֆին ամուսնացել է ազգությամբ ասորի Աննայի հետ:

Ասում են՝ առասպելական է եղել Ռաֆֆու աշխատափրությունը: Տողավարձ ստացել է 2-4 կոպեկ: Կնոջ, զավակների, նոր, եղբայրների և ինք քրոջ հոգար իր վառ է եղել, մանավանդ վերջին տարիներին աշխատել է օրը 16 ժամ: Լուռ, մտազքաղ, անկյուն քաշված, միշտ համեստ է եղել: Կնոջ պատմելով՝ մտնում էր իր սենյակը, գրում և թույլ չէր տալիս, որ որևէ մեկն իրեն ընդմիջեր: Նույնիսկ կինն էլ աշխատասենյակի դուռը քացելիս շատ զգուշություն էր ցուցաբերում, որպեսզի ոտնաձայն անգամ չլսվեր: Անընդիատ ծխում էր, թեյ էր խմում իիմնականում, նորից գրում: Աշխատելիս կինը թույլ չէր տալիս, որ հյուրեր այցելեն:

Նստած նա խոշոր մարմնով էր երևում, երբ ոտքի էր կանգնում, տպավորությունը փոխվում էր:

Նոյն կարծիքն է հայտնել նրա մասին նաև Շիրվանզադեն. «Տեսնելով Ռաֆֆիին նստած՝ ինձ քվաց, որ նա բարձրահասակ էր և հաղթանդամ: Բայց երբ նա ոտքի կանգնեց՝ մեզ ընդունելու, երևաց միջին հասակից էլ քիչ ցածր, կարելի է ասել՝ մի փոքրահասակ մարդ»:

Ռաֆֆին հանդես է եկել Սելիքզադե, Անանուն, Սել և այլ կեղծանուններով: «Ռաֆֆի» անունը, որ մեծ գրողն ընկրունել է իր համար, ասորական բառ է, նոյնն է, ինչ երրայերենի մեջ «րաբբի» կամ «րաբբունի» բառը, այսինքն՝ վարդապետ, տե՛ր իմ:

### բ) Ռաֆֆու կնոյ՝ Աննայի մասին

Ազգությամբ ասորի է եղել, ամուսնացել է Ռաֆֆու հետ, ունեցել

են երեք երեխա՝ մեկ աղջիկ, երկու տղա՝ Արամ և Արշակ: Աղջիկը՝ Եսթերը, վաղաժամ մահացել է, տղաները հետագայում իրենց մոր հետ տեղափոխվել և ապրել են Լոնդոնում: Ռաֆֆին ունեցել է հին դրամների հավաքածու: Նրա մահից հետո ընտանիքը հայտնվել էր տնտեսական դժվարությունների մեջ, և կինը որոշել է վաճառել այդ հավաքածուն: Արամի հետ Թիֆլիսից մեկնել է Պետերբուրգ, քայց դրամները վաճառել չեն կարողացել: Մեկնել են Լոնդոն, որտեղ հանրակառքի մեջ գրպանահատները նրա գրպանից գողացել են այդ հավաքածուն:

Նա շատ սահուն խոսում էր հայերեն և ասորերեն, զիտեր նաև թուրքերեն, ռուսերեն և վրացերեն: Խոսում, կարդում և գրում էր նաև անգլերեն: Աննան իր ամուսնու աշխատությունների հրատարակության գործը վստահել էր Վենետիկի Սխիթարյան միաբանությանը: Յանկանում էր շարադրել իր ամուսնու լիակատար կենսագրությունը: Նա գտնում էր, որ Ռաֆֆու կենսագիրները կոպիտ սիսամեր են գործել: Այդ սիսամերից մեկը Ռաֆֆու ծննդյան թվականն էր, որը համարում էր 1837 թվականը:

#### **գ) Ռաֆֆու որդիների մասին**

Արամը սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, հետո՝ Լոնդոնում: Արշակը՝ կրտսեր որդին, սովորելիս է եղել Մոսկվայում, հետո է միացել նրանց: Արամը շատ նման է եղել հորը՝ լայն ճակատ, նուրբ հոնքեր, փոքր և խացական սև աչքեր, երկար դեմք, ամուր ծնոտ և ուղիղ, մի քիչ երկար քիթ:

Որդիները լավ զիտեին ոուսերեն և արևելյան շատ լեզուներ (մասնավորապես պարսկերեն) և դասավանդում էին Լոնդոնի տարբեր ուսումնական հաստատություններում: Նրանք ոուսերեն են դասախոսել նաև անգլիական սպաների վերապատրաստման մի ուսումնարանում. պահպանվել է մի խուճք սպաների հետ Արշակի լուսանկարը: Արշակ Ռաֆֆին 1919թ. նշանակվել է Հայաստանի դեսպան Անգլիայում: Արշակի կինը՝ Ալեքսանդրիան, լավ իմացել է հայերեն: Նրանք երեխաներ չեն ունեցել: Ռաֆֆու տոհմը նրանցով ավարտվել է: Արշակը մահացել է 1946թ.:

#### **դ) Արշակի կնոջ՝ Ալեքսանդրիայի մասին:**

Մայրը հայ էր, հայրը՝ անգլիացի: Ըստ Ալեքսանդրիայի պատմածների՝ նա ամուսնու մահից հետո Արշակի դիակը զմուել է տվել

և դագաղի մեջ՝ դրել Աննայի և Արամի դիակների մոտ՝ հույս ունենալով, որ մի օր կհաջողվի դրանք տեղափոխել ու թաղել Հայաստանում:

Նա Ռաֆֆու ձեռագրերով և փաստաթղթերով լեցուն մի արկդիակնելու է Լոնդոնի դեսպանատուն՝ Հայաստան տեղափոխելու համար: Արկդիակնելը են եղել նաև Ռաֆֆու «Սալբի» վեպի երկրորդ և երրորդ հատորները, որոնք ձեռագիր վիճակում են եղել և մինչ այդ չէին հրատարակվել: Նա չգիտեր, թե ինչ է եղել այդ արկդիակնելը՝ Ալեքսանդրիայի պատմելով՝ «Հարեմ»-ի համար պարսիկները ուզեցել են Ռաֆֆուն զիսատել, սակայն մի պարսիկ ընկեր նրան փախցրել է:

**ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ  
ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ**

**Առարկան՝** հայ գրականություն

**Դասարանը՝** 11-րդ

**Թեման՝** Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ»  
պատմվածքը

**Նպատակը՝**

**1. Աշակերդները կիմանամ՝**

- ա) նույր ու քնարական գլուխօղործոցային երկի մասին, որ Արփենիկ Չարենցի հիշատակին է նվիրված.
- բ) զանգեզուրյան բնաշխարհի գեղեցկության մասին.
- շ) բնությանը ծովածած Կաքավարերդի մասին, որտեղ մարդու, հողի, բույսերի ու կենդանիների հազարամյա դաշինքն է առկա.
- դ) կյանքի բանաստեղծական ընկալման մասին (նկարիչ).
- ե) բանաստեղծական անզգայությամբ, պատմական հնությունների որոնմամբ տարված հնագետի մասին.
- զ) կյանքի հոգսերի մեջ կորած և շրջապատի կողմից անտեսված գեղեցկության մասին (հնձվորի կինը).
- է) մքնաձորյան իրականության մեջ ծանր կյանքով ապրող հընձվորի մասին:

**2. Աշակերդները կկարողանամ՝**

- ա) ըմբռնել կյանքի և արվեստի գեղեցկությունը.
- բ) վերլուծել բակունցյան կերպարները, որոնք կարծեն հիասքանչ քանդակներ լինեն.
- շ) բացահայտել երազային գեղեցկությանը հակադրված կոպիտ իրականությունը.
- դ) բառը ոչ թե կարդալ, այլ լսել, տեսնել և զգալ.
- ե) պարզաբանել ներքին բազմաշերտ հակադրությունների միասնությունը.
- զ) ուսումնասիրել պատմվածքի պատկերային համակարգը:

**Ուսումնական նյութեր՝** Բակունցի դիմանկարը, գրքեր, քարտեր, տեսանյութեր, պատի թերթ...

- Կիրառվող դեխնոլոգիաներ՝**
1. Զարգացնող ուսուցման
  2. Պրոբլեմային ուսուցման
  3. Կողեկտիվ համագործակցության

**Դասի ընթացքը.** Կիրառվում է ԽԻԿ համակարգը:

**Խորանակ փուլ:** Առաջարկվում է աշակերտներին ընթերցել «Գեղեցկությունը կյանքում և արվեստում» վերնագրով շարադրությունները, որ հանձնարարված էր որպես տնային աշխատանք՝ նոր դասանյութին նախապատրաստվելու համար:

**Իմաստավորման փուլ:** Կիրառվում է ընտրովի ընթերցանության ու մեկնաբանության մեթոդական հնարք՝ հաշվի առնելով, որ աշակերտները նախօրոք ընթերցել են բնագիրը:

1. Հանձնարարվում է պատմվածքի խոսում վերնագրի հետ կապված՝ զոնել, կարդալ և մեկնաբանել

ա) մանուշակի բանաստեղծականությունն ի հայտ բերող հատվածը: («Կարավաքերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կարավի ոտքի պես՝ կարմիր, ծաղիկը՝ ծիրանի գույն»):

բ) Կյանքի երազային գեղեցկությունը պատկերող տողերը: («Ծաղկափոշու մեջ բաթախսված գունավոր բգեղին մանուշակը ճոճք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան»):

գ) Կորուսյալ գեղեցկության, առանձնապես կորուսյալ պատմության կրող հնագետին բնութագրող հատվածը:

(«Հնագետը չէր տեսնում ո՛չ մանուշակ, ո՛չ խոտ: Նրա կոշիկները կրնկակոխ էին անում խոտ ու ծաղիկ: Աշխարհը նրա համար ընդարձակ բանգարան էր, ուր չկար ոչինչ, կենդանի և ոչ մի բգեղ...»):

դ) Արվեստի գեղեցկությունն ընկալող նկարչին բնութագրող տողեր: Հիշենք, որ նկարիչը նաև Բակունցի աշխարհայացը կրողն է:

(«Ֆետրե գլխարկով մարդը, երբ նկարեց այն ամենը, ինչ հարկավոր էր հնագետին, տեսրի նոր էջի վրա նկարեց և պարսպի մի մասը, ատամնաձև քարերի արամբում, քարե արծվի բույնը, պարսպի ոտքերի տակ՝ ալպիական մանուշակներ»):

ե) Կարավաքերդի իրականությունը ներկայացնող հնագորին նկարգրող հատվածներ:

(«Վրաններից մի մարդ, մանգաղը գոտու մեջ խրած, գլուխը

փարաբած կեղտու քաշկինակով, մահակին հենվելով բարձրացավ թերդի քարափով և մոտեցավ ձիերի մոտ նստած պահակին... Բեզարած էր մարդը, ամբողջ օրը հնձել էր կարճ ցողունով կորեկ, և մեջքը ցավում էր... Մարդը մռայլ էր, որպես իրիկնային անտառում որսի դուրս եկող սոված արջը...»):

գ) Անպաշտպան գեղեցկություն և դաժան իրականություն ներկայացնող հնձվորի կնոջը պատկերող հատված:

(«Կինը մոտեցավ օջախին, տղայի տունկերը դեն դրեց, կռացավ ու փչեց ծխացող աքարմերին: Նրա զլսի շորը ետ ընկավ, ֆետրե զլսարկով մարդը տեսավ կնոջ սպիտակ ճակատը, սև մազերը և նույնքան սև աչքերը...

Հանկարծ նա ծոցից հանեց տեսրը, թերթեց քարերի ու քանդակների նկարներ, թերթեց և քարե արծվի բույնը պարսպի զլսին ու սպիտակ թղթի վրա մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը՝ օջախի մոտ նստած, աչքերը օջախի քարին... միայն տղան տեսավ մատներն սպիտակ թղթի վրա»):

է) Երազային գեղեցկությանը հակադրված կոպիտ իրականության պատկերը:

(«Խանդը կայծակի պես փայլատակեց մռայլ հնձվորի սրտում: Աչքերը լայնացան, նա գունատվեց: Մայրը նայեց տղային, հըրդեհվեց դեմքը, հայրը տեսավ կնոջ դեմքի կարմիրը: Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազագած արջի նման ոստյուն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակն անասելի թափով իջավ կնոջ թիկունքին... Կինը աղաղակ շիանեց, այլ ցավից գալարվեց: Նա ձեռքը թիկունքին տարավ, ապա դուրս եկավ վրանի դռանը անձայն հեկեկալու... Ցող կաթեց ալպիական մանուշակի ծաղկաթերթերի վրա»):

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել մանուշակի թերթի մեջ քնած բգեղին, որի համար աշխարհը ծիրանագույն բուրաստան էր: Մանուշակի բույրով հագեցած՝ քմել էր՝ անտարբեր աշխարհի անցուղարձին, նրան անգամ չէր կարող արթնացնել մանուշակի թերթերին կաթած ցող-արցունքը:

## 2. Առանձնացնել պակամվածքի

ա) գունային տարրերը (սպիտակ ամպեր, սև բուրգեր, կապույտ որ-

ձաքար, սպիտակ փրփուր, կապույտ երիզ, մուգ մանիշակագույն աչքեր, ծխից սևացած թեյաման...)

**բ) հնչյունային տարրերը (ձայները):**

(Աղմկում է Բասուտա գետը, ոռնում են հազար գամփոներ, ոսնաձայն, կանչում է աքլորը, շների հաշոց...):

**Կղողատման փուլ:** Առաջարկվում է պարզաբանել ներքին բազմաշերտ հակադրությունների միասնությունը պատմվածքում: (Հնագետ և նկարիչ, հնձվոր և կին, հնձվորի կին և ծովափի կին, բգեկ և մանուշակ...)

«Վեճի դիագրամ» մեթոդով իրար են հակադրվում արվեստի և կյանքի գեղեցկությունը՝ իրականության ծանր պատկերով: Ցույց են տրվում առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Անհրաժեշտ է հիշեցնել աշակերտներին, որ լեզվական առաջավոր մերոդ է հակադրությունը, որի վարպետն էր միջնադարի բանաստեղծ Գ.ր. Նարեկացին:

**Տնային առաջադրանք:** Առաջարկվում է վերլուծել պատմվածքի պատկերային համակարգը:

**ա) Համեմատություններ՝** (ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը՝ ծիրանի գույն, ծուխը ձգվում է կապույտ երիզի նման, ամպը վարագույրի պես էր քաշվում...):

**բ) Փոխարերություններ՝** (ծուխը հալվում է ամպերի մեջ, քարափների վրա թառել են մի քանի տներ, ժամանակը սահում է շատ դանդաղ...):

Հանձնարարվում է պատմվածքը պատմել՝ ներկայացնելով գեղիքի և դաժան իրականության բախումը:

## ՇԱՂԿԱՊ

Առարկան՝ հայոց լեզու  
Գ-ասարամ՝ 8-րդ  
Թեման՝ Ծաղկապը՝ որպես խոսքի մաս  
Նպատակը՝

### 1. Աշակերտները կիմանան՝

- ա) արտահայտած ընդիհանուր իմաստը.
- բ) ձևաբանական առանձնահատկությունը.
- գ) տեսակները.
- դ) շարահյուսական դերը:

### 2. Աշակերտները կկարողանան՝

- ա) տարբերակել համադասական և ստորադասական շաղկապները.
- բ) տեքստի մեջ առանձնացնել շաղկապները.
- գ) շաղկապները գործածել նախադասությունների մեջ.
- դ) տարբերակել **որ** ստորադասական շաղկապը **որ** հարաբերական դերանունից.
- ե) տարբերակել շաղկապները վերաբերականներից, ինչպես նաև՝ կապերից:

**Ուսուցման նյութեր՝** թեմայի վերաբերյալ գծապատկերներ, քարտեր:  
**Կիրառվող տեխնոլոգիաներ՝**  
1. Զարգացնող ուսուցման

- 2. Պրոբլեմային ուսուցման 3. Կոլեկտիվ համագործակցության  
**Գ-ասի ընթացքը.** կիրառվում է ԽԻԿ համակարգը:

**Խրամնան փուլ:** Աշակերտներին առաջարկվում է՝ վերհիշել գեղարվեստական գրականությունից տողեր և պարզել, թե նախադասությունները կամ նախադասության անդամներն ինչ բառերով են միմյանց կապակցվում:

- ա) **Թե աչքերս քեզ որոնեն,**  
Ես կիսակեմ մուր կոպերով,  
**Որ աշխարհում քեզ չուսնեմ:** (Վ.Տերյան)

- բ) **Բայց խոլ ու խավար օդում էս զիշեր**  
Մենակ է Սաքոն ու չումահ ըմկեր: (Հովհ. Թումանյան)

Տրված բանաստեղծական հատվածներում նկատելի է, որ **թե, որ,**  
**բայց, ու** բառերը գործածվել են որպես կապակցման միջոց, որոնք  
բառային նյութական իմաստ չունեն:

**Խմաստավորման փուլ:** Աշակերտները թվարկում են նմանատիպ  
բառեր, որոնք կատարում են սոսկ կապակցական դեր՝ ցույց տալով  
նախադասությունների ու նախադասության անդամների հարաբե-  
րություն ու կապ, արտահայտելով միայն քերականական իմաստ:  
Պարզ է դառնում, որ նախադասությունները կամ նախադասության  
անդամները իրար կապող բառերը կոչվում են շաղկապներ: Աշա-  
կերտները կիմանան, որ ըստ ձևաբանական առանձնահատկու-  
թյան՝ չթերփող խոսքի մաս է շաղկապը, ըստ շարահյուսական դերի՝  
նախադասության անդամ չի դառնում: Աշակերտական խմբերը  
քարտային աշխատանքի արդյունքում կառանձնացնեն

**ա) համադասական շաղկապներ,** որոնք կապում են նախադասու-  
թյան համազոր անդամներ կամ համազոր, համադաս նախադա-  
սություններ (**և, ու, բայց, իսկ, սակայն, այլ կամ, սպա, այսինքն,**  
**ուրեմն, բայց և այնպես, ուստի և, մինչև իսկ, կամ թե, սպա թե**  
**ոչ, և՛... և՛... թե՛...թե՛...**)

**բ) ստորադասական շաղկապներ,** որոնք բարդ նախադասության  
մեջ ստորադաս (երկրորդական) նախադասությունը կապում են  
գերադաս (գլխավոր) նախադասությանը (**որ, թե, եթե, որպեսզի,**  
**որովհենիքն, քանի որ, թեկուզ, թեպես, մինչև, մինչդեռ, քան, թե**  
**որ, հենց որ, չնայած որ...):**

**զ) Բառեր,** որոնք կարող են գործածվել թե՛ իբրև համադասական և  
թե՛ իբրև ստորադասական շաղկապներ:

ա) Նրան թվաց, թե արծիվն է թևերը թափահարում: (Թե - ստո-  
րադասական շաղկապ):

բ) Աղջիկ թե տղա պարում են ուրախ այդ հարսանիքում: (Թե -  
համադասական շաղկապ):

**դ) հարաբերական դերանուններ՝ ով, որ, ինչ երբ, ուր, որպես...,**  
որոնք դառնում են նախադասության անդամ, ստորադաս նա-  
խադասությունը կապակցում են գերադասին, կոչվում են նաև  
**շաղկապսական բառեր:**

ա) Դա միակ աղբյուրն էր, որ հետաքրքրեց բոլորին: (Որ- հար-  
բերական դերանուն է, գործածվել է որպես ենթակա):

բ) Թոռնիկը գիտեր, որ պապը լավ չի լսում: (Որ- ստորադասական շաղկապ է, նախադասության անդամ չէ):

**ե) Վերաբերականներ,** որ կարող են գործածվել որպես շաղկապ:

ա) Աղջիկը, սակայն, ներքին ցավ ուներ հոգում: (Սակայն - վերաբերական):

բ) Նա վատառողջ էր, սակայն թաքցնում էր բոլորից իր հիվանդությունը: (Սակայն - համադասական շաղկապ):

**զ) Կապեր,** որ կարող են գործածվել որպես շաղկապ:

ա) Մինչև գյուղ դեռ շատ ճանապարհ ունեին գնալու: (Մինչև - կապ):

բ) Անհամբեր կսպասեմ քեզ, մինչև վերադառնաս դպրոցից: (Մինչև - ստորադասական շաղկապ):

**Կշռադատման փուլ:** Աշակերտները կբացատրեն համադասական և ստորադասական շաղկապների առանձնահատկություններն ու ընդհանրությունները:

Որպես **տնային աշխատանք՝** առաջարկվում է կատարել քեմային համապատասխան վարժություններից, նաև անգիր սովորել համադասական և ստորադասական շաղկապները:

**ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ, ՈՐ ՆՊԱՍՏՈՒՄ Է ԱՇՎԿԵՐՏՆԵՐԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆԸ  
(ուսումնադաստիարակչական)**

Ազգային ոգին բարձր պահելու վեհ նպատակին է նվիրված Մայրենի օրվան նվիրված միջոցառումների շարքը: Այն նշում է ամեն տարի՝ որպես վսեմաշուր մի արարողություն, որ գալիս է լրացնելու ազգային ինքնորոշման համար մղված արցախահայոթյան մաքառումների, ընդվզումների ու հայրենյաց պաշտպանի փառապանձ ամիսը:

Ավելի քան մեկուկես հազարամյակ անց մենք նորից ու նորից ապավիճում ենք մեարոպյան հանճարեղ ճշմարտությանը՝ համոզված, որ գիրն ու գրականությունն է մեր հաղթանակների գրավականը: Հազվագյուտ երևույթ ժողովուրդների պատմության մեջ, որի մասին բազմաթիվ խորինաստ մտքեր են արտահայտել օտարազգի շատ հայագետներ:

Փետրվարի 21-ը ճանաչվել է որպես Մայրենի միջազգային օր: Ամեն տարի աշակերտների շուրբերին այդ օրը կենդանուում է մայրենի լեզուն՝ որպես սուրբ նշխար, սրբազն խորհուրդ, որ մեարոպյան գրով մաքրագործված և մարտերում թրծված հայորդիների ազատաբանդ կոչ է, մայրական գորովալի մրմունջ՝ արժանի ծնրադիր հարգանքի, սիրո և գուրգուրանքի:

**Իզուր չի մեծանուն բանասպեղծը գրել աննման գողեր .«Իբրև մոր նայել և իբրև մոր են պահել իրենց մայրենի լեզուն հայ ժողովրդի մայրասեր և մայրախնամ զավակները՝ սկսած Մաշտոցից ու մեր առաջին բարգմանիներից մինչև...Վարուժան ու Չարենց»:**  
**(Պ. Սևակ)**

Ամեն անգամ, Մայրենի օրվան նախապատրաստվելիս փորձում եմ նորություն մտցնել միջոցառումների շարքում: Գիտեմ, որ մայրենի մասին թեման անսպաս է, բայց որպեսզի կրկնություն չինի, հայտարեցի մրցույթ՝ լավագույն պատի թերթերի, ձեռագրերի և մայրենին նվիրված ստեղծագործական շարադրությունների, որը դպրոցում հետազայում դարձավ ավանդական:

Տեսնել էր պետք, թե ինչ աշխուժություն էր տիրում դասարաններում, իսկ աշակերտական նորաստեղծ փոքրիկ երգչախումբը սուրբ Սեպովի տառերն էր ձայնի նուրբ եկեղումներով սրբազնություն:

*Պալմե՛ք, վանքի մաշվա՛ծ քարեր,  
Հայր Մաշտոցի կյանքի մասին,  
Ինչպես հայոց զիրն արարեց,  
Լոյս պարզեցից հայոց ազգին:*

Իսկ պատի թերթե՞րը... Ինչքա՞ն գեղեցիկ և լավ էին ձևավորված: Մաշտոցի դիմանկարը՝ բանաստեղծական տողերով, ստեղծագործական մտքերով, վառվող մոմերով, սրբատաշ խաչքարերով, բացված գրքերով... Յուրաքանչյուրը յուրովի, ամեն մեկը մի պատմություն, կարծես ուկենենիկ հայերենը խոսում էր բարության ու վեհ զգացումների երանգներով: Իրոք, զգում ես, որ հայոց լեզուն տուն է, սուրբ օջախ, հայրենիք, մեր պատմությունն է այն, որ արտացոլված էր գոյմերի համեստ բազմազանությամբ, մերուպյան տառերի հմայիչ նրբերանգներով:

Անսահման հպարտություն ես զգում և համոզվում, որ, իրոք, հայր արվեստով էլ կռվել գիտի, և մեր սերունդն այսօր իսկապես այդ ոգով է դաստիարակվում և պատրաստ է իր շուրջերով բորբոք պահել մայրենի լեզուն, որ «Ժամանակի ակունքներից» է եկել «դարերի լեռնապարերի վրայով»:

Ինչպիսի՞ ոգևորություն կար աշակերտների հայացքներում, եթք իրենց ստեղծագործական մտքերին շաղախված՝ հինգում էին տողերը մեծ բանաստեղծութու, որ մի սուրբ արարողություն էր երդման. «Երդվում եմ շուրջերովս բորբոք պահել Զո վահագնարոց կրակը, ...Երդվում եմ...»:

Այսօրվա դպրոցականը գիտի, որ մեր ժողովուրդը պատմության քառույթներով է անցել, դարավոր մաքառումների ճանապարհներին մատնվել է սրի, ավերի, գաղթի, բայց իր պատմական ճակատագրով, իր հին անունով ու պատմության դասերով միշտ էլ դրվել է «բարության նժարին», և հայոց լեզվի փառքով ու հայոց լեզվի հարատևության պատգամով իմաստավորվել է հայ ժողովրդի անվախճանության խորհուրդը:

**«Դու, որ հաղթեցիր Ավարայրի դաշտում և Խորենացու լեզով մեզ պատմություն քերեցիր, մնացիր անկողոպելի՝ որպես հազարաման մասունք: Խլեցին զանձերդ, հոգեոր արժեքներդ, քանդեցին եկեղեցիներդ, այրեցին մազաղարներդ, բայց քեզ չկարողան կոպերել, քանզի անկողորում էիր դու, իմ ուկեղենիկ լեզու մայրենի...»:** (Ստեփանյան Իննեսա)

Ընթերցում ես աշակերտների շարադրությունները և տեսնում, որ հայկական ոգին է թևածում այստեղ, համոզվում ես, որ այս հոդ ու ջրին կառչած առողջ սերունդ է դաստիարակվում, որը գիտի իր նախնիների անցած հերոսական ճանապարհը:

**«Դու բարախված ես նաիրյան դաշտերի վաղորդյան ցողով, հայոց վանքերի իմաստուն խորհրդով, հայ շինականի բռնրահացի մոխրաբախ բուրմունքով: Շատ հին ես քո անցած գալու կողով ճանապարհով, բայց և նոր քո անզուգական բովանդակությամբ: Դու աղոռք ես հայի շուրբերին, որ սրբարուի մրմնաշում է զօրուգիշեր: Մեր պապերի, մեր հայրերի քրդիմքն ես, որ շաղախվել է մեր արյամբ ներծծված, մի կերպ վիզված սուրբ հողին: Դու մեր մայրերի ծոցում պահված մաքրամաքուր ու անաղարդ, անուշարույր ու անարար կաքն ես կենարար, որ ուժ է գալիս հայ զորավարի բազկին ու մզրին, իմ մայրենի լեզու, իմ բաղցրահան բարբառ»:** (Հարությունյան Մարիամ)

Մարգարեանում էր մայրենի լեզուն աշակերտների շուրբերին, դառնում էր աղոռք, շարական, մատյան, սրբության սրբոց, որ վայրագ հողմերից ու փոթորիկներից փրկվել, դարձել է խաչքար, վանք ու տաճար, երգ ու նվազ:

**«Քո մեջ բարևած է հայոց ոգու ուժն ու հալապը, ուստի զրոյի զրիշն ես միշտ եղել, արվեստագետի՝ վրձինն ու բամանչան, շինարարի՝ մուրճն ու ավազը, իսկ մարդի դաշտում՝ զինվորը՝ քաջ ու անպարս: Դու մեր անցյալն ես՝ պայքարով լեցուն, արյունով հեղված, բայց հաղթանակած: Դու մեր ներկան ես՝ աշխարհին հպարտ կեցվածքով նայող, իր վեղը հասպատած երկու հանրապետությամբ»:** (Հարությունյան Շուշան)

Մայրենի լեզուն խոսում էր աշակերտների մոտ, բուրում, գունա-

վորվում՝ որպես սուրբ աղոքք, որ արևի պես վառ է, աշնան տերևների նման գունավոր, գարնան ծաղիկների նման բուրավետ ու եկեղեցում հնչող աղոքքի նման խորհրդավոր...

**«Դու իմ շուրթերին քաղցրացած մայրենին՝ լեզու, սիրում եմ քեզ իմ հոգու ելեջումներով ու ամենագեղեցիկ գոյաներով, իմ սրբի ամենավառ սիրով ու ամենանվիրական զգացումով...»:** (Հակոբյան Լուսինե)

Այսօրվա սերունդն Արցախյան ազատամարտում հաղթանակած ժողովրդի սերունդն է և քաջ գիտակցում է, որ մեր լեզուն մեր պատմությունն է, հացը հանապազօրյա և հոգևոր սնունդը, ուստի հպարտ է, որ հայ է ծնվել ու խոսում է մայրենի լեզվով:

**«Հպարտ եմ, մայր Արցախ, որ քեզ երգում եմ հայերեն»:** (Գրիգորյան Աննա)

Ուղղակի հրաշք է, որ մեր՝ ուսուցիչներիս աշխատանքը իզուր չի անցնում: Ստեղծագործական որոնումների ճանապարհին աշակերտների շարադրություններում ազգի ոգին վեր էր բարձրանում և մեզ հպարտանալու իրավունք էր տալիս:

**«Արցախյան պատերազմի տարիներին զինվորը քեզնով էր շնչում, քնում ու արքնանում, կովում ու հաղբում էր քեզնով, իմ լեզու հաղբական... Չլինեիր դու, մեր փրկված հողի սուրբ պատրիկին դեր կամգնող չէր լինի, չէր ծաղկի մեր փորբիկ համրապելուրյունը արյունով հեղված սուրբ հողի վրա»:** (Ստեփանյան Իննեսա)

Լեզուն հույսի, լույսի, հեռավոր անցյալի կախարդական բանալին էր դառնում, որ արժանի էր գովեստի ու փառաբանման. **«Հայապանից մինչև Սվյուռք հայ ազգիս միարանուրյան կամուրջն ես դու, իմ ազգի՝ պարծանը, լեզու՝ մայրենի»:** (Սահյան Աննա)

Հայի շուրթերին քաղցրացած մայրենին հնչում էր որպես աղոքքմբունջ. **«Ուրախ եմ ես, որ հայ եկեղեցում աղոքք – պատրազը հնչում է միայն ոսկեղենիկ հայերենով, իսկ զանգերն էլ դողանցում են հայի մարրամարուր լեզվով...»:** (Սարգսյան Սամվել)

Ավանդական դարձած միջոցառումների շարքը Մայրենիի օրը եզրափակվում է լավագույն պատի թերթերի, ձեռագրերի և շարադրությունների մրցույթի արդյունքների ամփոփումով:

Երևան են հանվում աշակերտներ՝ տարբեր անվանակարգերով, ու հաղթող է ճանաչվում «Լավագույն ձեռագիր և լավագույն շարպրանք» անվանակարգում հայտնվողը և դասարանական այն կոլեկտիվը, որի ներկայացրած պատի թերթը լավագույնն է թե՛ ձևավորմանը և թե՛ ստեղծագործական մտահղացումով:

Իրոք, նման միջոցառումները ոգևորիչ են և նպաստում են աշակերտների ստեղծագործական երևակայության և մտածողության զարգացմանը: Հուսանք, որ տարեցտարի նոր թոփք կտանք մայրենիի ընթացքին, իսկ լեզուն հար դարեր կթևածի՝ որպես ազգի գոյատևման առհավատչյա:

## **ՈՒՍՈՒՅՉՔԻ ԻՄ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ ԿԱՄ ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ**

Որպես օրյեկտիվ գնահատական կամ ուսուցչի աշխատանքի որակի ցուցանիշ՝ կրթական նոր տեխնոլոգիաները ենթադրում են նրա թղթապանակի ստեղծումը, որն ուսուցչի աշխատանքին վերաբերող բոլոր նյութերի հավաքածուն է:

Վաղուց ձևափրել եմ ուսուցչի իմ թղթապանակը: Թղթապանակն այդ իմ մասնագիտական ու անձնային ուղենիշն է, մերողական ձեռնարկն ու ուղեցույցը: Այստեղ միայն հանրակրթական դպրոցներում լեզվի և գրականության դասավանդման մերողական ծրագրերը, պլանները կամ սեղմագրերը չեն: Որպես կանոն՝ այդ թղթապանակի մեջ են պահպում առարկայի դասավանդման համար ամրագրված կրթական չափորոշիչները՝ հայոց լեզվի և գրականության դասավանդման բոլոր դասարանների համար: Այստեղ են նաև գնահատման չափանիշները և գնահատմանը վերաբերող տեսական ու գործնական կիրառության արդիական համարվող բոլոր հանրահայտ դրույթներն ու սկզբունքները: Չե՞ որ գնահատման գործընթացն ունի ինչպես իրավաբանական, այնպես էլ բարոյական ուժ: Եվ այս առումով էապես կարևոր է գնահատման հոգեբանական տարրալուծումը:

Թղթապանակի մեջ իրենց ուրույն տեղն ունեն մշակված դասանմուշներն ու դաս-միջոցառումների սեղմագրերը, որոնք պլանավորվում են անցկացվել տվյալ ուսումնական տարում: Անշուշտ, դրանց կցվում են դասալսումների բոլոր կարծիքներն ու վերլուծությունները:

Թղթապանակում շատ կարևոր տեղ եմ հատկացնում դասարանի՝ հայոց լեզու և գրականություն առարկաների առաջադիմության ցուցանիշներին: Այս թվերն են, որ փոխում են մանկավարժական իմ գործունեության հունը, հուսափառում կամ մտորումների տեղիք տալիս:

Ուսուցչի իմ թղթապանակը կարող է հարստանալ ողջ տարվա ընթացքում հավաքված նյութերից: Կարևորում եմ աշխատանքի պտուղները. քանի՞ աշակերտ է հաղթել առարկայական օլիմպիադայում, քանի՞ սն են բարձր միավորներ ստացել միասնական և ավարտական քննություններին, քանի՞ սն են հաղթել ստեղծագործական շարադրությունների մրցույթներում և այլն:

Մրանք բոլոր այն նյութերն են, որոնք պայմանականորեն որակում եմ որպես պարտադիր: Իրականում այս նյութերն են, որ

հարստացնում են թղթապանակի տարողությունը՝ դարձնելով այն բովանդակալից: Նյութերի մնացած մասն ընտրվում ու պահվում է իմ հայեցողությամբ: Դրանք մանուկում և ամսագրերում տպագրված լավագույն ուսումնամեթոդական հրապարակումներն են, որոնք նպաստում են իմ ստեղծագործական ազատությանն ու կանոնակարգված գործունեությանը: Իմ թղթապանակը հարստացնում է աշակերտների ինքնատիպ աշխատանքներով ու ստեղծագործություններով, հետաքրքիր ու թևավոր մտքերով, որոնք ես խնամքով դուրս եմ գրում և հպարտությամբ իդումներ անում բոլոր անհրաժեշտ ու հարմար պարագաներում, մասնավորապես եկող սերնդի հետ տարվող աշխատանքներում:

Թղթապանակը, իրավամբ, ընդհանրական պատկերացում է տալիս ուսուցչի կատարած աշխատանքի որակի մասին, իսկ նրա վարկանիշը ամբողջանում է թղթապանակի յուրաքանչյուր բաղադրիչի շնորհիվ, որին համապատասխան գործակից տպալով՝ ստանում եմ ոչ միայն թվային համարժեքը, այլև՝ իմ վարկանիշը:

Ուսուցչի իմ թղթապանակում նաև իմ խոհերն են, մտորումներն ու ապրումները: Ահավասիկ, հանրակրթությունը շարունակում է ինձ համար մնալ ազգային անվտանգության խնդիր: Մի առիթով Գ-արեգին Նժդեհն ասել ե, որ հայոց պատմության դասագիրքը ոչ թե պետք է փաստեր արձանագրի, այլ՝ ցույց տա ոգի: Շատ ու շատ ուսուցիչներ հակված են աղմկոտ քննարկման նյութ դարձնել դասագրքերն ու նրանցում առկա թերությունները, մինչդեռ նոյն այդ դասագրքի թերությունները կարող ե և պետք է շտկի ուսուցիչը՝ ազգային ոգի և շունչ հաղորդելով աշակերտներին: Նժդեհի գաղափարներն իմ տագնապներն են, որ աքցանի պես սեղմում են գլուխս: Ուսուցչի իմ թղթապանակի յուրաքանչյուր էջում նաև նժդեհյան դասերն են, իսկ ես՝ նրա խոնարի աշակերտը, չնայած նա «ուսուցչին իր ազգի հոգևոր ընտրանին է համարում»:

«Պետության քաղաքացուն և ազգային հերոսին կերտում են դպրոցում, ազգային դիմագծի և ազգային արժեքների պահպանումը սկսվում է դպրոցից»: Հաճախակի եմ կրկնում այս խոսքերը՝ ներքին խոսքով, մենախոսությամբ, երկխոսության մեջ, իրապարակային խոսքում...

Զինվորագրվենք սերունդներ կրքող նվիրյալների բանակին և նախանձախնդրորեն ծառայենք նրան...

## ԴԻՄԱԿԱՐԻ ՓՈՐՅ

Լրագրողի աշխատանքի առավելությունը, բայց իս, նոր ու անակնկալ ծանոթությունների հնարավորությունն է: Երբեմն մրածում եմ՝ ինչքան միապաղադ կլիներ կյանքը, եթե աշխատանքի քերումով շիանդիպեկ ու չճանաչել նրանց, թող թույլ տրվի այսպես ասել, իմ հերոսների հետ: Նրանցից յուրաքանչյուրը մի ուրույն աշխարհ է՝ իր էությամբ ու կենսափիլտոփայությամբ, նախամիրություններով ու ճակատագրով: Դու քեզ համար նորովի ես հայրնագործում այդ աշխարհը, պեղումներ անում այնպես և հաճախ ոչ միայն ճանաչողական, այլև ուսանելի շատ բան ես վեր հանում քեզ համար: Վերջերս առիթ ունեցած ժանոթանալու մի մանկավարժի հետ, ում հոդվածները «Լուսարարում» վաղուց էին գրավել ուշադրություն:

Սարդակերտի Վլ. Բալայանի անվ. միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցուիչ Նալբաշ Պողոսյանի հետ հանդիպումը գերազանցեց բոլոր սպասելիքներս: Զնանաշելով նրան՝ արդարին դրսքից անզամ կարելի է գուշակել, որ դիմացը մանկավարժ է՝ կողիկ արդարին, գեղեցիկ խոսք, խորաքափանց հայացք ու առինքնող ժամփ: Իր գործի նվիրյալ արեղծագործ, պրավուն միտք ունեցող ուսուցուիչ, ով, իրավի, կարող է հապրամանալ իր սաներով: Գաղտնիք չէ, որ մանկավարժի հայելին իր սաներն են, և նրանց հաջողությունները մեծապես պայմանավորված են ուսուցչի ձեռքբերումներով: Նրա աշակերտները դարձրել են արձանագրել ինչն ամենօրյա ջանադիր ու հերկողական աշխատանքի արդյունք է:

Ծովագր 34 դարձաւ աշխատանքային կենսագրությունը դարբեր հասցեներ է ներառում՝ Սարդակերտի շրջանային պիոներական գուուն, շրջկենտրոնի գիշերօթիկ միջնակարգ դպրոց, լուսաշխատողների գուան վճարեն, հեռուստա գիշերային միջնակարգ դպրոց, բայց դրանց մեջ առանցքային է համարում վերջին 17 դարին, երբ վերջապես հնարավորություն ունեցավ աշխատելու սիրած մասնագիտությամբ: 92-ին բռնագաղթի ալիքը ներկել է նրան Ռուսական, ինչի մասին հիշելիս կորցրած լավագույն դարիների համար ախտ-

սանքի զգացումը մի պահ սրբերում է դեմքը և աչքերը ծրարում թախիծով: 1996-ից առաջաօր նա արժանապատվությամբ է կրում հայոց լեզվի և գրականության ուսուցչությունը կոչումը, որի մասին մանկուց է երազել այն օրը, երբ առաջին անգամ լսեց Գիքորի պատմությունը և լաց եղավ: Փոքրիկ Գիքորի պատմությունն իր հետ լրացավ գունի, իրենց այգու մենավորիկ լուսունը ճաք գովեց նրա հեծեծանքից. «Այս ինչո՞ւ Համբոն Գիքորին լրացավ քաղաք»... Եվ հենց այդ օրն էլ վճռեց, որ անպայման ինքն էլ ուսուցչությունն արդակենդեք այդ պատմությամբ մանուկ սրբերը հուզելու, կարեկցանքի, ուրիշի ցավը կիսելու, բարության հունդերը մարտադրան պահ լրացնուի:

«Մանկուց սիրել եմ, որ ուսուցչության մավրյանը ծեռքին մկնում էր դասարան: Սի պահ ինձ էի պատկերացնում՝ մավրյանը ծեռքին դաս եմ պատմում Գիքորի և ուրիշ շամ-շարերի մասին», - մեզ հետք գրուցում անկենդանում է ուսուցչությունը:

Հպարտ է իր աշխապանքով ու մասնագիրությամբ, որը, մեծ առումով, մարդարանություն է, քանի որ միզված է մարդու ծևավորմանը: Վյու բարդ ու պատասխանակրու աշխապանքի պարզեւորությունը աշակերտների հետ ամենօրյա հոգևոր շփման բերկրանքն է, սրեղծարար աշխապանքի բերկրանքը: Մեր դժվարին ժամանակներում նա չի փորձում կյանքը ներկայացնել միայն գեղեցիկ կողմերով կամ ինչպես ասում են՝ վարդագույն ակնոցներով: Շրջապատի խորելի երևոյթների հանդեպ ոչ քե ջայլամի միամիկ կեցվածքն է նախընտրում, այլ՝ աշակերտների հետ բաց քննարկումների, բանավեճների միջոցով փորձում բափանցել իրերի, երևոյթների խորը: Իր գիտակը մարդունող, չնահանջող գիտակն է, և գոհ է, որ արդարության, ազնվության ու բարության համար հանապազ պայքարի դիրքերում ինքը մննակ չէ, այլ՝ սամերի հետ. «Արդարության ջապագով են, փորձում եմ աշակերտներին ևս սովորեցնել որ ազնիվ ապրեն, մարդասեր լինեն և կյանքի դառնություններին կարողանան դիմակայել»:

Մանկավարժի աշխապանքի բարդությունները, նրա խոսքովանությամբ, հապուցկում են այն հարգանքով ու հեղինակությամբ, որ վայելում է կողեկիրիկում, սամերի ու նրանց ծնողների կողմից: Նրա կարծիքով, մանկավարժի կարարելապիհը ենքաղը ու ոչ միայն

առարկայական և մերողական խոր ու կայուն գիտելիքներ, այլև դասապրոցեսը ձիշը և նպատակային կազմակերպելու ունակություններ: Դպրոցն ու դպրոցական անջրակալված չեն հասարակական կյանքից, որպես կարարվող ամեն ինչ իր արժագանքն է գրնում երեխաների ներաշխարհում: Հաճախ է պարահում, որ մանկավարժի քարոզած արժեհամակարգը ի չիք է դառնում մեր կյանքում դեղ գուած ինչ-ինչ երևույթների կողքին, և ուսուցիչը կարկամում է աշակերտի «ինչուներից»: Բայց նաև «երից վայ այն ուսուցին, ով մասնագիրական հարցերից է խեղճանում, նմաններն ուղղակի կուլ են գնում աշակերտների հարցերին»:

Երկարամյա մանկավարժին մրահոգում է նաև ծրագրերի ու դասագրքերի բեռնարափակման հարցը, ինչի մասին գործիքներ շարունակ իւսուվում, բայց էական քայլեր չեն արվում. «Օրինակ՝ Մաֆֆու «Խննիքը» ընդգրկված է և՛ 8-րդի, և՛ 9-րդի գրականուրյան դասագրքերում: Հայոց լեզվից «Ածական անուն» թեման անցնելիս հարաբերական ածականին երեխաները բռուցիկ են առնչվում: Բեռնարափել՝ չի նշանակում թեմաները կրծագել հարկապին, որ թեսարային առաջադրանքներում դրանք ընդգրկված են: Նույնը կարելի է ասել նաև գոյականի հոլովումների մասին»: Տարիների փորձով ուսուցչուհին համոզվել է, որ գիտելիքների սղուզման թեսարային ձևը արդյունավետ չէ, քանի որ պարահական նշումներ անող գիտելիքների սակալ պաշար ունեցողը երբեմն ավելի բարձր միավորներ է հավաքում, քան լավ ստվրող, մրածող ու դրամարանող աշակերդը: Օրինակներ՝ որքան ուզեք: «Պարահել է, որ հազիվ «4» գնահատված աշակերդը քննուրյան ժամանակ 15 միավոր է հավաքել այսինքն՝ դասարանի ամենալավ ստվրողն ու մի կերպ հասցնող քույլը հայդրավիլ են նույն հարբուրյան վրա: Վաղը նույն կերպ նա կիայրմակի ուսանողական նախարարանին՝ դուրս մղելով արժանավորին»:

Նախաչա Պողոսյանն այն երջանիկ մանկավարժներից է, ով բազմիցս առիթներ է ունեցել վայելելու իր համառ ու հեղևողական աշխարհանքի պարուղները: Վերջին գուար գարում նրա աշակերդներից յորք հաջողությամբ մասնակցել են ՀՀ առարկայական օլիմպիադաներին: Բայց դափնիների վրա ննջելը նրա համար չէ, եղբեք չի գոհանում ձեռքբերածով, միշտ ծգլում է ավելիին, ինչը ներար-

կում է նաև սաներին. «Անցած տարի 10-րդ դասարանի իմ երեք աշակերդուհին գրականության օլիմպիադայի շրջանային փուլը հաջողությամբ անցան և մասնակցեցին նաև հանրապետական փուլին: (Ի դեպ, շրջանից ուրիշ աշակերդ չկար): Ինարկե, ուրախացա, միաժամանակ ցավով ու ախտոսանքով նրանց ասացի. «Եթե շրջանի լավագույնները դուք եք, որ պիտի մասնակցեք հանրապետական օլիմպիադային, ողբերգություն է»:

Սինը հելքաքրքրվեցինք, թե ինչպես է նրան հաջողվում զարգացնել աշակերդների սրբեղագործական ունակությունները: Փորձառու մանկավարժը կարողանում է ի հայր բերել սրբեղագործական հակումներ ունեցող աշակերդին և, ինչպես ինքն է ասում, մի փոքր ավելի աշխատել նրանց հետ. «Գրական երկերի ուսուցման ընթացքում ես անպայման աշակերդների ուշադրությունը սկսում եմ գեղարվեստական խորքի պատրիարքության միջոցների վրա: Հավատացե՛ք, որ նրանք փորձում են գրավոր խորքու սրբեղծել գեղեցիկ պատրիարքներ: Սրբեղագործական երևակայության զարգացման համար դիմում եմ զանազան մեթոդների ու հնարների. օրինակ՝ Դուրյան անցնելիս աղջիկներին ասում եմ՝ պատրիարքեր՝ դուք եք Դուրյանի երևակայական գեղեցկուիհն, և ձեր սրբառուց խորքը կյանքի կեռչի մահամերձ բանասրեղծին: Սկզբում դժվարությամբ, բայց հեղողիութեավագան անկեղծացն, և ծնվեցին միքեր, ուշագրավ պատրիարքներ, նուրբ ու հուզիչ խոսքովանություններ: Եթե քանի աշակերդից 3-4-ի մեջ կարողանում ես զարգացնել սրբեղագործական երևակայությունը, արդեն հաջողություն է»:

Իր հաջողության գրավականը Նալբաշա Պողոսյանը համարում է ուսուցման ավանդական ու նոր մեթոդների զուգորդումը: Դրանց հմուտը օգտագործումը խթանում է աշակերդների հելքաքրքրությունը, ոգևորում նրանց: Գովելի է, որ ուսուցուիհն չի զանում և աշակերդակենարդոն ուսուցման իր փորձն ու մեթոդական հնարները «Լուսաբարի» էջերում կիսում է գործընկերների հետ, թեանի համոզված է, որ յուրաքանչյուր ուսուցիչ ինքն է գրնում իր ձևն ու մեթոդը: Նրա համոզմամբ՝ ինքնակարելագործման չգրումը պիտի ուսուցչի մշտական ուղեկիցը լինի: Իր բազմագրադրությամբ հանդերձ՝ հասցնում է կազմակերպել գրական-գեղարվեստական

ցերեկույթներ, գրական-երաժշտական երեկոներ, գրողների հորել-յաններին նվիրված զանազան միջոցառումներ:

Այսպիսին ճանաչեցի նրան՝ նախանձելի եռանդով ու լավագե-սուբյեկտ զինված Նարաշա Պողոսյանին և հասկացա, որ մասնա-զիրական հաջողությունների հիմքը բարոյականացին այն որակ-ներն են, որոնք գալիս են լրացնելու մանկավարժի դիմանկարը՝ լի-արյուն դարձնելով այն: Շիրակ, ուղղամիտ, ըմբռար, ճշմարտա-խոս, կեղծիք և բարոյական այլնայլ խաթարումներ չհանդուժող, արդարության համարձակ մարդիկ, ում համար վաղոց կննաս-կերպ է դարձել վաղամեռիկ Մուշեղ Գալշոյանի հավակամքը. «Մի օրվա կյանք էլ ունենաս, այդ մեկ օրն էլ հարկ է, որ կովես արդարու-թյան համար, ճշմարտության և գեղեցիկի համար»:

**Մելանյա ՄԻԼՈՆՅԱՆ**  
«Լուսաբար» 2013, թիվ 2-3

## **ԵՐԲ ԴԱՍԸ ԴԱՄՆՈՒՄ Է ԳՐԱԿԱՆ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԻՍԿ ՊՈԵԶԻԱՆ՝ ճՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՃԱՆԱՊԱՀ**

Գրականության ուսուցչուի Նատաշա Պողոսյանի կազմակերպած բաց դասերն արդեն ծանոթ են շրջանի շատ ու շատ ուսուցիչների: Նրա կառուցած բոլոր դասերն էլ յուրահատուկ ձևաչափ ունեն և երբևէ չեն կրկնվում: Այս անգամ թեման Միսաք Սեծարենցն էր, որի կերպարի մատուցումն ամբողջական լիարժեք դարձավ, եթք ուսուցչուին նրան ներկայացրեց համաշխարհային դասական գրականության համատեքստում: Ուսուցչուի մուտքի խոսքը, որը համագործակցային մեքոդների լեզվով անվանում են ուղերձ՝ թվաց ազնվության կոչ: Պատահական չէ, որ դասը կրում էր «Միսաք Սեծարենց. մեծ մարդասերն ու գիշերերգակը» խորագիրը:

Ուշագրավ էր թերևս այն, որ նախքան դասը, ուսուցչուին որոշակի նախապատրաստական աշխատանք էր տարել՝ մի քանի օր առաջ աշակերտներին հանձնարարելով երեկոյան պահերին զգալ բնության հրաշքը՝ խաղաղ և անդորր գիշերվա հանդարտությունը, լսել իրիկնային մեղմօրոր ձայները, տեսնել լուսնի և աստղալից երկնքի կախարդիչ գույները, որոնք ստեղծագործելու կմղեն նրանց կամ կիշեցնեն ինչ-որ դեպք, որ կապված է ուսումնասիրվող բանաստեղծության հետ:

Աշակերտները բավականին խորն էին ուսումնասիրել վաղամենիկ բանաստեղծ Միսաք Սեծարենցի ստեղծագործությունները:

Դասարանը կահավորված էր: Միսաք Սեծարենցի դիմանկարի մոտ վառվում էր 22 մոմ, որն ամփոփում էր նրա երիտասարդ տարիքի խորհուրդը: Երեք սեղանի շուրջ տեղավորված էին աշակերտները, իսկ սեղաններին դրված էին գրքեր, ծաղկամանների մեջ՝ հասած ցորենի հասկեր:

«Կարմիր ծաղիկ մը» բանաստեղծության երգի վերածված երաժշտության մեջմ ու դյուքիչ հնչյուններով սկսվեց դասը, որն արդեն ներկաներիս տեղափոխեց երազների ու ցնորքների մեծարենցյան աշխարհ, ուր մի պահ կտրվեցինք իրական կյանքից, զգացինք «աքասիաներու» բույրը, վայելեցինք լուսնկա գիշերների հմայքը,

երազեցինք, միաժամանակ հոգու ցավ ապրեցինք նրա վաղաժամ կորստի և անձնական անսփոփ վշտի համար:

Լսվում է ուսուցչուհու խաղաղ ու գերող ձայնը:

Քարձրիկ լեռներում, կապույտ երկնքի դեմ դիմաց ծվարած թինկյան գյուղը գուցե հիշատակվեր աշխարհագրական բառարաններում և երկրագիտական նյութերում միայն, եթե շատոնար «հիվանդ, հանճարեղ պատանու» ծննդավայր–ներշնչարանը: «Աշխարհից հեռու» այս գյուղն էր, որ պարզեց նրան բանաստեղծելու աստվածային ձիրը:

Չուզահեռներ անցկացնելով արևմտահայ երկու խոշորագույն քննարերգու բանաստեղծների՝ Մեծարենցի և Դուրյանի միջև, ուսուցչուհին համադրեց ստեղծագրծական հանճարի վաղ ծաղկման և անձնական դժբախտ ճակատագրի ընդհանրությունները: Մեծարենցի պոեզիայի հետ աղերսվեց Դուրյանի պոեզիան:

Կիրառվող մեթոդների շարքում առանձնացավ «Մանրապատում» մեթոդը: Կատարվեց խնբային հետազոտական աշխատանք:

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է «Ծիածան» ժողովածուից մեկ բանաստեղծություն՝ «Զմրան պարզ զիշեր», «Աքասիաներու շուրջին տակ», «Սիրերգ»:

Քանի որ Մեծարենցի ստեղծագրծություններում բնությունն ու սիրո զգացումը ներդաշնակված են, ուսուցիչը նպատակ էր հետապնդում՝ անհատի դրամայի, բնության ու սիրո երգերի միահյուսված ուսումնասիրությունը տեսնել զիշերգության մեջ:

Խմբերը, մեկը մյուսին լրացնելով, բանաստեղծություններին համահունչ երաժշտության տակ հրաշալի արտասանում էին, կատարում բանաստեղծությունների համառոտ վերլուծություն, տախու զաղափարը, ընտրում մեկ բառատող, որը բնութագրում է յուրաքանչյուր ստեղծագրծություն:

Դասագործնաթացում աշակերտների խոսքին միահյուսվում է ուսուցչի խոսքը:

«Ծիածանը» բացվում է «Զմրան պարզ զիշեր» բանաստեղծությամբ, որը զիշերերգության մի ճշմարիտ գլուխգործոց է: Նրա զիշերգերում, իր իսկ բառերով ասած, «սերն միշտ կը վերածաղկի»: «Ծի-

ածանի» բնութենապաշտական հյուսվածքում գիշերը երազ է, սեր և սպասում:

Ընտրված էին ամենանուրը երանգները, ամենաշքեղ, անսպասելի փոխարերական պատկերները: Գիշերվա խավարի մեջ բանաստեղծը միշտ էլ տեսնում է լույսը, որոնում «լրաւեղեն ճամբան»:

*Համբույրիդ գիշե՞ր, պատրուհանս է քաց,  
Թո՞ղ որ լիառակ ծծեմ՝ հեշտագին  
Կարը մեղմահոս լույսիդ գուրսիանքին՝  
Ու զով շաղերուդ կախարդանքը քաց:*

«Աքասիաներու շուրին տակ» բանաստեղծության տողերում ընդգրկված և պատկերված են բնության ամենանուրը շարժումները, ամենամեղմ շշուկներն ու ձայները, ամենազեղեցիկ գույներն ու բույրերը:

*Զուրը ցայլրքին ծաղիկ-ծաղիկ կը կարե,  
Վրձիկը, ինչպիս լուսն արցունքը մանկան,  
Նրվագն անոր կրիեծնծե հեշտական:  
Ծաղիկներեն հովը թերքեր կը քավե:*

Մեծարենցը գերվեց «անույշ», «հեշտագին», «հաշիշով ու բալասանվ» օծուն գիշերներով: Հովից ու ծովից գիշերը եկող համբույրները նրա համար դառնում են Տոն ու Կիրակի («Սիրեգ»):

Դասարանի երեք պատուհանի վրա նկարած էսքիզներով աշակերտները ներկայացրին, թե յուրաքանչյուր բանաստեղծություն ինչ է խորհրդանշում: Ահա և լուսնկա գիշերը՝ ակացիայի շնչավորված պատկերներով:

Քանի որ ուսուցչուին նախապես աշակերտներին հանձնարարել էր դիտել լուսնկա գիշերները, զգալ ու ապրել բնության այդ պահը, տեսնել ձմեռային գիշերվա ճերմակ երազի ցայտքերը, զգալ շաղերի քաց կախարդանքը, արդյունքում՝ երեխաները զգացել են մեծարենցյան բնության գեղեցկությունը, նրա գույները, լույսն ու ստվերը և նրանց փիսրուն հոգին արձագանքել է այդ սրանչելի գեղեցկությանը և ստեղծագործելու ցանկություն առաջացրել: Հնարավոր չեր առանց հուզմունքի և ներքին ուրախության լսել դասարանի

աշակերտուի Մարինեի քանաստեղծությունը, որն ընթեցեց ներշնչված, հուզված և զսպված դրդով:

*Սահուն քայլերով կամաց մուրեց,  
Տեսս, վախեցա, ինքն էր իրական:  
Գիշերվա լրեսի լը... Օ՛, ո՛չ, մարմինն իրական,  
Նա էր՝ սրբնեղված Միսարք իւկական:*

.....

*Հայացքները մեր խոսեցին անձայն,  
Բոլ էր դողդոջուն ձեռքս մեկնեցի,  
Աչքերս բացի, Միսաք կանչեցի,  
Նա չկար արդեն...*

Եվ այսպես՝ յուրաքանչյուր խմբից մեկական աշակերտ ներկայացնում է իր չափածո կամ արձակ խոսքը, որտեղ զգացվում է Սեծարենցի պոեզիայի հանդեպ ունեցած մեծ սերը:

Կատարվում է նաև լեզվական աշխատանք: Առանձնացվում են երեք քանաստեղծություններում օգտագործված բառերն ու քառակապակցությունները, որոնք գործածվել են նույն իմաստով (գիշերմբնշաղ, հեշտագին-հեշտին, լուսեղեն-լուսե, հոգվոյս-հոգի, դյուրանք-դյուրական-հաշիշով օծուն):

Լուսում ես ուսուցչուն, աշակերտներին, դիտում պատուիանին նկարված էսքիզները և ակամայից հիշում Բելինսկու խոսքերը՝ ուղղված հանճարեղ քանաստեղծին.«Ի՞նչ է սա,- պոեզիա», նկարչություն՝, երաժշտություն՝: Թե մեկը, և՝ մյուսը, և՝ երրորդը՝ միացած իրար, որտեղ նկարը խոսում է հնչյուններով, հնչյունները կազմում են նկար, իսկ բառերը փայլում են գույներով, փողփողում պատկերներով, հնչում են ներդաշնակությամբ և արտահայտում են քանական խոսքը»:

Իսկ մանկավարժական հմտությամբ ստեղծված միջառարկայական կապը, որ ստեղծվեց հայոց լեզվի, նկարչության և երաժշտության հետ, մի պահ գրական-գեղարվեստական բնմադրություն հիշեցրեց:

Դասի վերջում աշակերտների ստեղծագործական կարողու-

թյունները զարգացնելու նպատակով հանձնարարվեց գրել շարադրություն՝ վերլուծված յուրաքանչյուր բանաստեղծությունը բնութագրող ցանկացած վերնագրով («Սպասում», «Երազանք», «Հուսահատություն»):

Աշակերտները կարողացան կատարել բանաստեղծությունների համեմատական վերլուծություն, բնության երգերի և սիրո երազային պատկերների համադրության մեջ ճանաչել գիշերերգակ Սեծարենցին, տեսնել հիվանդ, հանձարեղ պատանի Մ. Սեծարենցի զգայուն հոգու տառապանքը, որ արևի է կարոտ և սպասման հիվանդ է, ստեղծել կապակցված խոսք՝ զարգացնելով ստեղծագործական և երևակայական մտածողությունը:

Բոլորս հիացած ու գոհ էինք: Մնում է միայն ավելացնել՝ քանի դեռ մեր կրթօջախներում ունենք այսպիսի մայրենին նվիրյալ ուսուցիչներ, ապա մեր մեծերի պոեզիան երկար-երկար կապրի սերունդների գիտակցության մեջ:

Ուսուցուիու խոսքն ավարտվեց Վ. Թոքովենցի՝ սիրելի բանաստեղծին ուղղված խոսքերով. «Երբ մրսում եմ այս աշխարհում, մեծ պատանի, գրկում եմ քո երգերը, և ահա արևը, քո երգած արևը, սուզվում է իմ ցուրտ հոգու մեջ կաթիլ առ կաթիլ»:

**Արմինե ՄոՒՐԱԴՅԱՆ**  
**Մարդակերպի շրջարչակազմի**  
**աշխարհակազմի կրթության բաժնի**  
**առաջարկար մասնագետ**  
**«Լուսարար» 2013, թիվ 5-6**

**Մ. Սեծարենցի գիշերերգությունից ծնկած բանաստեղծություն**  
**(11-րդ հուն. դասարանի աշակերդուիի Հարությունյան Մարին)**

#### ԳԻՇԵՐ

Դարձ ու լուսարձակ գիշեր գեղեցիկ,  
Սուր ու մեղմանուշ գիշեր բափանցիկ,  
Գիշեր, որ հոգուն վառ լույս է լուսին,  
Սիրամերժ սրբին նոր սեր է լուսին:  
Նոր թիւ է լուսին, նոր հույս և ուղին,

Փարակրում վիշտը, ցալը դառնաղի:  
Մի կախարդական, լուսնիկ գիշեր,  
Պալուհանիս դեմք պեսա ես շողեր,  
Շողեր՝ գոյնզգոյն, շողեր՝ գրավիչ,  
Կարծես կանչում են, ժպրում ու ճշում,  
Կանչում են նորից ու ձեռքով անում,  
Անհեղանում են ու նորից կանչում:  
Սահուն քայլերով կամաց մորեցա,  
Տեսա, վախեցա, ինքն էր իրական,  
Գիշերվա պեսի լք... Օ՛, ոչ մարմինն իրական,  
Նա էր՝ սրբնեղված Միսաքն իսկական:  
Լուս ու գրգումագին իրար նայեցինք,  
Ես պեսա նրա թախծով աչքերը,  
Վշտով ու լցված ծանր կոպերը,  
Հայացրում բանջված մի կնիք պեսա,  
Ուժապատ, անսեր Միսաքին պեսա:  
Նա լուս էր, չէր խոսում ոչինչ  
Կանգնած նայում էր, մեկ-մեկ էլ՝ ժպրում,  
Նրա դեմքիցը լույս էր արձակվում,  
Մենակս լցվում, շուրջս գարածվում:  
Գիշերը կարծես դարձավ լուսավոր,  
Փոխվեց ամեն ինչ դարձավ թևավոր,  
Մոլիցա նրան, փորձեցի օգնել  
Սակայն նա լուս էր, չէր ուզում խոսել,  
Գիշերվա խաղաղ անդորրը իսակութել:  
Հայացրները մեր խոսեցին անձայն,  
Իսկ երբ դողդոջում ձեռքս մեկնեցի,  
Աչքերս բացի, Միսաք կանչեցի,  
Նա չկար արդեն...

Պալուհանիս մուր մի շող կար միայն,  
Լույսի գեղեցիկ մի քող կար միայն,  
Մրգի բրբիռներ, անմոռաց հուշեր,  
Լուսնիկ գիշեր և սեր կար միայն:

**ՆԱՏԱԾԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ «ՀԱՅՈՒՀԻ»  
ՌԱԴԻՈՀԱՎԴՈՐԴԱՇԱՐԻ ՀՅՈՒԹ**

**◀ ա ր ց ա զ ր ու յ ց**

Երերուս «Հայուհի» ռադիոհանդեսի հերթական բողարկումն է:  
Այսօրվա մեր հյուրը ճանաչված մանկավարժ Նարաշա Պողոսյանն է: Մեր խնդրանքով նա պատմեց իր մասին:

Աշխատում եմ Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Այդ աշխատանքին ինձ հաջողվել է ընդունվել հետպատերազմյան տարիներին, մինչ այդ՝ խորհրդային ժամանակներում, դժվարությամբ էր աշխատանք գտնվում: Բազմաթիվ աշխատանքներ եմ տարել ու այսօր հպարտ եմ, որ իմ մասնագիտությամբ դպրոցում դասավանդում եմ:

**Չե՞ր ակտուում այն կորցրած դարիների համար:**

Ակտուում եմ: Համարյա 34 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժ ունեմ, բայց առաջնայինը համարում եմ 1996թ-ից առայսօր դպրոցում աշխատած իմ 17 տարին: Վեց տարի աշխատել եմ շրջանային լուսաշխատողների տանը՝ որպես տնօրեն, բայց հպարտության զգացում չեմ ունեցել, ասեմ, որ, ընդհանրապես, պաշտոններ չեմ սիրում: Տարբեր աշխատանքներ եմ տարել, բայց ինձ «գտել» եմ դպրոցում՝ այս աշխատանքի մեջ:

**Ինչո՞ւ մանկավարժ, ինչո՞վ է Զեզ գրավել ուսուցի աշխատանքը, առանձնապես հենց հայոց լեզվի և գրականության ուսուցի աշխատանքը:**

Երեսի հեռվից սկսեմ: Դեռևս 5-րդ դասարանում թումանյանի «Գիքորը» ինձանից արտասուր է քամել: Թեպետ փոքր եմ եղել, այդ օրվանից որոշեցի, որ ուսուցչուի պիտի դառնամ և «Գիքոր» պատմեմ, սիրում էի և հիանում, որ ուսուցչուին մատյանը ձեռքին մտնում էր դասարան: Այսօր միայն «Գիքոր» չեմ պատմում, հպարտ եմ, որ ուսուցիչ եմ, առավել ևս՝ արդարության ջատագով:

Փորձում եմ իմ աշակերտներին ևս սովորեցնել, որ ազնիվ ապրեն, մարդասեր լինեն և կյանքի դառնություններին կարողանան դիմակայել:

**Իսկապես գրականությունը մարդ կերպելու արվեստ է և այս գործում մարդակերպության գործում, կարելի է ասել, ուսուցիչը շատ մեծ դեր ունի: Բացի «Գիրորից», որի նկատմամբ առանձնահապուկ վերաբերմունք ունեք, կա՞ն մեր գրականության մեջ գրողներ կամ նրանց որևէ սպեկտակորժություն, որին Գուր մի այլ չկոչ եք մոդեռնում, և որոնք շատ բանկ են Զեզ համար:**

Ամեն մի հերոսի հետ ապրում եմ: «Նարեկ» ուսուցանող ուսուցիչը, իմ կարծիքով, իմքը ախտի մարդասեր լինի, իր մարդասիրությունը հաղորդի աշակերտներին և իր շրջապատին: Քանի որ Նարեկացին՝ այդ մարդակերտ, մարդախույզ անհատականությունը, դեռևս միշտապում փորձում էր մարդուն տեսնել անքերի, կատարյալ և ազատ, ապա այդ ազատությունն ու կատարելությունը փորձում եմ փոխանցել իմ աշակերտներին: Ես յուրովի սիրում եմ տարբեր գրողների ստեղծագործություններ, չեմ կարողանում տարբերակել և առավելություն տալ որևէ մեկին: Բակունցի հետ «հալվում» եմ, Ծիրազի, Սևակի հետ հպարտություն եմ զգում, զանգեզության բնաշխարհ հմայում է Սահյանի ստեղծագործություններում, Արովյանի կերպարն ինձ գերում է, և կցանկանայի այսօրվա ուսուցիչը կանգներ Արովյանի՝ այդ հայրենասեր հեղինակի կերպարի կողքին, լիներ ազգին նվիրված անհատականությունն:

**Յուրաքանչյուր մասնագիրություն ունի իր դրական և բացասական կողմերը: Եթե խոսելու լինենք Զեր մասնագիրության առավելություններից ու քերություններից, ապա ի՞նչ կը նդգծեիր:**

Աշխատում եմ մի կոլեկտիվում, որտեղ մոտ հիսուն մանկավարժ է աշխատում: Կուռ կոլեկտիվ է՝ դպրոցի տնօրենի, ուսմավարի, կազմակերպչի համատեղ գործունեությամբ: Եթե ուսուցիչը կոլեկտիվում հարգանք է վայելում, ինձ թվում է՝ հաջող կընթանա նրա գործը: Ես սիրում եմ իմ կոլեկտիվի անդամներին, չնայած կան նաև բարդություններ:

Մանկավարժը եթե ձևական մտավ դասարան, նա հաջողություն չի ունենա: Այստեղ կարևորում եմ նաև ուսուցիչ – աշակերտ – ծնող հարաբերությունը: Բայց որքանո՞վ է տվյալ ուսուցիչն ինքը «տեղափորփած» այդ կոլեկտիվում կամ աշակերտները որքանո՞վ են նրան հարգում... Եթե բոլոր օղակներում խաղաղ է ընթանում այդ աշխատանքը, ոչ մի պրոբլեմ չի լինում:

### **Այսինքն՝ բացասական կողմից չկամ:**

Ես սիրում եմ իմ կոլեկտիվը, ուստի չեմ ուզում բացասական կողմերի մասին խոսել:

**Պատրիո՞ն է, որ անելանելի վիճակում եք հայրներել որևէ դժվար երեխայի հետ: Ի վերջո, այսօր և բոլոր ժամանակներում էլ եղել են դժվար երեխաներ, որոնք հաճույքով չեն սովորում: Այդքանը մի կողմէ, կարող է նաև խանգարել են դասերը:**

Ունենք այդպիսի աշակերտներ: 7-րդ դասարանում աշխատում եմ երկու երկտարեցու հետ: Ոստիկանության միջամտությամբ այդ աշակերտներից մեկին նոյնիսկ չեն կարողանում դալոց բերել, նաև միակողմանի ծնողազորկ է:

Հետաքրքիրն այն է, որ վերջերս, երբ կարդացի «Լուսարար» թերթում նախարար Ս. Ասրյանի առաջարկությունները՝ հատկապես «1», «2», «3» գնահատված աշակերտներին ևս փոխադրելու մասին, (դիտավորյալ արտահայտվեցի այդ դասարանում) թույլ կարողությունների տեր աշակերտներն ուրախացան, որ կփոխադրվեն, բայց այդ աշակերտը, որին շատ քիչ էինք տեսնում դալոցում, դժգոհեց. «Տիկին Պողոսյան, պարզվում է, որ ես պիտի փոխադրվեմ, 9-րդ դասարանի վկայական ստանամ, բայց ինստիտուտ չգնա՞մ...»:

**Ցավոր, համարյա համապարած դպրոցական նախարանից վեր են կենում և նախում ուսանողական նախարանին: Մասնավոր բուհերը հիանալի պայիս են այդ հնարավորություններ:**

Շատ դեմ եմ ես այդպիսի ընդունելությանը: Երբ հիշում եմ, թե ինչպիսի՞ դժվարությամբ եմ բուհ ընդունվել... ստիպված եմ եղել երկու տարի խաղողի դաշտում աշխատել, որպեսզի աշխատանքային ստած ունենամ, որ փաստաթղթերս հանձնեմ ընդունելության հա-

մար: Այսօրվա աշակերտը վաղը դառնալու է ուսանող՝ առանց դժվարության: Իմ նախկին շրջանավարտներից ոմանք ցանկություն են հայտնել, որ նորից ինձ մոտ պետք է մասնագիտական առարկաները պարապեն, հետո դպրոց մտնեն՝ դասավանդելու:

Այսօրվա թույլ սովորող բոլոր աշակերտներն ել համոզված են, որ իրենք ընդունվելու են: Այստեղ արդեն մի քիչ դրական կարելի է համարել մրցույթները, որ աշխատանքի ընդունելու համար նախատեսված են:

**Երե, իհարկե, դրանք չեական չեն, արդարության սկզբունքով են կազմակերպվում:**

Մրցույթից հետո եթե վիճաբանություն է լինում, հակասություններ են առաջանում, որեմն ճիշտ չեն անցկացվել:

**Երե փորձելու լինենք իսուել այն կամային հոգեմուսվոր ջանքերի մասին, որոնք պահանջվում են ուսուցչից, ի՞նչը կառանձնացնեիք, կամ ինչպիսի՞ն պիտի լինի ժամանակակից ուսուցիչը:**

Չգիտեմ, ինձ նմա՞ն... ես ըմբռստ եմ, ազատ...

Գուցե և համեստ ուսուցուիի՞ն է պետք իմաս: Ես գտնում եմ, որ այսօրվա ազատ կամքի տեր աշակերտների հետ երևի իմ նմաններն ավելի ձեռնտու են:

Ուսուցիչը կամք պիտի ունենա, նա պետք է և խորհրդատու լինի, և ուսուցանող, չեմ ընդունում, եթք ուսուցիչը թույլ է լինում. այդ թուլությունն անպայման օգտագործում է աշակերտը:

**Այսինքն՝ մըսավոր գիրելիքների առումով:**

Նախ՝ մտավոր և կազմակերպչական առումով:

Եթե ուսուցիչը գրագետ է, աշակերտն իսկույն գիտակցում է: Նա հարգում է այն ուսուցչին, ով իր մասնագիտությանը լավ է տիրապետում:

**Արդյո՞ք միայն գիրելիքները բավարար են:**

Ո՛չ, միայն գիտելիքները բավարար չեն, կարող է լավ մասնագետը չկարողանա կազմակերպված և նորմալ դաս վարել: Այսինքն՝ լավ մասնագետ լինելուն զուգահեռ՝ ուսուցչի վարպետություն է պետք: Հնարավոր է նաև ուսուցիչը վայելի աշակերտների «հար-

գանքը», եթե կարողանում է նրանց հետ իր 45 րոպեանոց «ժամանցը» հաճելի անցկացնել, այսինքն՝ դասից մի քիչ «հեռացված», բայց ես չեմ կարող ասել, որ լավ սովորող աշակերտների համար դա հաճելի կլինի: Իմ կարծիքով, ուսուցիչը պետք է մասնագիտական առունու գերազանց լինի, որպեսզի իր դասերը նպատակային վարի:

### **Զեր ամենամեծ նվաճումը ո՞րևէ եր համարում:**

Երևի ուսուցչի հեղինակությունը: Եթե ուսուցիչը ճանաչվում է, ուղղակի նրան ոչինչ պետք չէ, խոսքը հարգանք ձեռք բերելու մասին է միայն:

Հիշում եմ, որ մի անգամ գյուղական դպրոցի մի ուսուցչուի մոտեցավ ինձ և հարցրեց մի բառի տողադարձի մասին: Նա ինձ հետ շհամաձայնվեց. «Ասում են՝ Պողոսյան կա այս դպրոցում՝ հայոց լեզվի ուսուցչուի, ես նրանից կհարցնեմ»: Ասում եմ, որ գտնես նրան, կարծիքը ինձ էլ կհայտնես: Եվ բոված անց ներողություն խնդրեց նա. արդեն համաձայն եր տողադարձի իմ ասած հնարավոր ձևերին:

### **Հեղինակության հարց է:**

Հիշում եմ նաև, որ մի գյուղում, անցած տարի էր, մի արարողակարգի ժամանակ սեղան պիտի դեկավարեր հայոց լեզվի և գրականության՝ տարիների վաստակ ունեցող ուսուցիչներից մեկը: Տիրության սեղան էր: Ինձ ասացին, որ այդ ուսուցիչը հրաժարվել է, թե ինչ է, հեռվից տեսել է, որ հայոց լեզվի և գրականության ուսուցչուի Նատաշա Պողոսյանն է այդտեղ...

Իհարկե, չքողեցինք, որ հրաժարվեր, բայց ամենամեծ, հաճելի զգացումն ուսուցչի համար իր հեղինակությունն է, որ շրջապատում նա հարգված է լինում, անուն ունի...

**Այսօրվա դպրոցը, ուսումնական և կրթական գործի հետ կապված, ի՞նչ մկահոգություններ ունի:** Անշուշփ, այսօրվա դպրոցն այդքան էլ պարզունակ մի աշխարհ չէ և երբեք էլ չի եղել, առավել ևս հիմա՝ լրահոսի, համացանցի հետ կապված: Ինֆորմացիոն հեղեղը էկրանից ամենուր քափվում է, երեխան շաւ դրակի գիրի,

**Երբեմն ամսարկավոր քաներն ավելի շատ, քան հարկավոր:**

**Ի՞նչ մպահովություններ են Ձեզ պատում այսօր:**

Ներկա դրույթամբ, տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու առումով, ուսուցիչը մի քիչ հետ է մնում աշակերտներից: Թվում է՝ նրանք մի քայլ առաջ են մեզանից: Իհարկե, դա այն ուսուցիչներին է վերաբերում, ովքեր համակարգչից չեն օգտվում: Ուսուցիչ աշխատանքը, իրոք, դժվար է, եթե մեր դիմաց նստած է աշակերտ, որ լսում է աղքատանական հերյուրանքներ, տեսնում կացնով մարդասպանություն գործած Սաֆարովին ազատած և նրան հերոսարած... Եվ արդարության ջատագով ուսուցիչը պիտի արդեն հիշեցնի նույն արդարությունից խոսող աշակերտներին, որ ապրում ենք մի այնպիսի ժամանակաշրջանում, որ մեր կողքին իսկապես տեսնելու ենք այդպիսի անարդարություններ...

**Թումանյանով պիտի պազասիսանել, որ բերանն արևոր մարդկերր հազար դարում հազիկ դարձավ մարդասպան:**

Այո՛, միաժամանակ ես ուրախանում եմ, որ իմ աշակերտուին շարադրության մեջ ընթերցում եմ. «Հայատյաց գաղան, բոյլ չեմ տա քո նախնյաց ժանգոտած կացնով հարձակվես մեզ վրա, քո արնոտ լեշը կընկնի մեր հողի վրա, իսկ քո գարշահոտը մեզ պետք չէ»:

Այսօրվա աշակերտը շատ լավ է ամեն ինչ նկատում, տեսնում, ուսուցիչն էլ, եթե չի զբաղվում իր ինքնակրթությամբ, դժվարության առաջ է կանգնում: Աշակերտն իր հարցերով նրան «հաղթում է» դասարանում, ինքնաբերաբար պահ է լինում, ուսուցիչը «կուլ է գնում» աշակերտների հարցերին: Հետևաբար, մեր երիտասարդ ուսուցիչներին կցանկանայի՝ իրենց վրա աշխատեն այնքան, որ հարցերի «տարափին» էլ կարողանան դիմանալ:

**Ծրագրերի, դասագրքերի մասին ի՞նչ կասեիք:**

Հակասություններ կան բավականաշավ: Ուստարվա սկզբին 8-րդ դասարանցին Բաֆֆու «Խենք» է ուսումնասիրում զբականությունից նոր դասագրքով, այդ նույն դասանյութով է ավարտվում 9-րդ դասարանի գրականության հին դասագիրքը, որը դեռ գործածության մեջ է: Հայոց լեզվի դասագրքերում իբր դասանյութերի բեռնա-

թափում է եղել... Վերջերս որակական ածականի համեմատության աստիճանները բացատրելուց հետո հարաբերական ածականների մասին եմ խոսում, թերում ենք դասագիրքը, ածականների երկրորդ տեսակի մասին թոռություն է տրված միայն թեմայի սկզբում, այնինչ այն դժվար ընկալվող նյութ է:

Այսինքն՝ բեռնաթափման արդյունքում շպետք է թեմաներ կրատել: Կամ գոյականի հոլովումները նախկին դասագրքերում համարյա առանձին-առանձին ուսումնասիրվում եր, իսկ իմաստ սեռական հոլով ուսումնասիրելիս թեթևակի բացատրվում է նաև ութ հոլովումների մասին, որոնք չի հասցնում աշակերտն ընկալել: Եթե ուսուցիչը տեղյակ է նախորդ դասագրքերին, հմուտ է իր մասնագիտության մեջ, կարողանում է բացատրել, հասկացնել աշակերտներին տվյալ դասանյութը, բայց վաղը կամ մյուս օրը երիտասարդ ուսուցիչը, որ մտնի դասարան, նաև դասագրքի ասհմանում ինչքան որ տրված է, այնքանն է փոխանցելու աշակերտներին, այդ դեպքում ինչպես է ընկալվելու նյութը նրանց կողմից:

Ես ուղղակի զարմանում եմ, գտնում եմ, որ բեռնաթափումը ճիշտ չէ: Աշակերտների աշխատանքը թեթևացնելու նպատակով է, թե ինչ, միևնույն է, իմ բաժին նյութը որքան ես հարմար եմ գտնում, այնան էլ փոխանցում եմ...

### **Իսկ թեսպային առաջադրանքներին ինչպես և իրարեկում:**

Թեստային առաջադրանքները առավել ևս սխալ եմ համարում: Սի երկու տարի առաջ դպրոցի ամենաթույլ աշակերտներից մեկը, որ հազիվ «4» էր գնահատվել, որպեսզի ավարտեր 9-րդ դասարանը, նույն դասարանի լավ սովորող աշակերտուհու հետ հավասար, այս տեղից-այնտեղից օգտվելով, հայոց լեզվի քննությունը 15 միավոր ստացավ:

Թեստերի միջոցով գիտելիք ստուգելը, ընդհանրապես, սխալ եմ համարում, երանի եմ տալիս մեր ժամանակներին, որ բանավոր քննություն էինք հանձնում, ինչքան էինք չարչարվում: Կան սովորողներ դպրոցում, բայց թույլ կարողությունների տեր աշակերտներն եւ, նրանց հետ հավասար, համոզված են, որ ընդունվելու են բուհ:

**Յավոր, ճշմարդություն է:**

**Ձեր աշակերտմանը բարեկը բարիների առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշներ են արժանագրել, ինչու մն է Ձեր հաջողության զաղբնիքը: Երեկ ցանկացած ուսուցիչ կնախանձեր Ձեզ այդ հարցում:**

Գաղտնիքներ չեմ տեսնում, աշխատում եմ շատ սովորական: Իմ կարծիքով, եթե ուսուցիչը խիդճը հանգիստ աշխատի աշակերտների հետ, կհասնի հաջողության: Վերջին տասը տարվա ընթացքում իմ աշակերտներից յոթը մասնակցել են ՀՀ առարկայական օլիմպիադաներին և հաջողությամբ վերադարձել (գովասանագրերով): Ես գոհ էի նրանց ձեռքբերումներից, բայց այդքան էլ հիացած չէի նրանց ունեցած գիտելիքներով:

Անցյալ տարի օլիմպիադայի շրջանային փուլին գրականությունից մասնակցեցին 10-րդ դասարանի իմ երեք աշակերտուիններ, որոնք ել հետո շրջանը ներկայացրին հանրապետական փուլում: Ասում եմ. «Եթե մեր շրջանի լավագույնները դուք եք, ուրեմն ողբերգություն եք»:

Շատերն են ինձ հարցնում, առանձնապես՝ գյուղական դպրոցների ուսուցիչներից, թե ո՞րն է գաղտնիքը իմ աշակերտների ձեռք բերած հաջողությունների, ինչպես նրանց մատուցվում նյութը կամ ի՞նչ գրքերով եմ պարապում:

Իմ խորհուրդը նույնն է. «Ինչ որ գրված է գրքում, մատուցե՛ք, հաջողության կիասնեք»:

**Ուզում եմ սպեղծագործական շարադրությունների մասին խոսել: Հիմա համացանցը լեցուն է շարադրություններով, ոեփերապերով: Վերջին բարիներին իմ չեղոքն է ընկել զիրք՝ շարադրությունների ժողովածու: Ինչպես սկարելի է, մեր սովորելու բարիներին նման բան չկար, մեր մկրով էլ չեր անցնում դա: Սպեղծագործելը բոլորին չի պրված, և բոլորը չե, որ կարող են սպեղծագործական ունակություններ ունենալ և իրենց միածածք փոխանցել քերքի վրա այդքան գրագելու ու այդքան հետաքրքի:**

**Ինչպես և Ձեզ հաջողվում զարգացնել նրանց սպեղծագործա-**

**կան ունակությունները, որի արդյունքում Զեր աշակերտները միշտ շարադրությունների մրցույթների են մասնակցում և մրցանակային դեղին գրավում:**

Բոլոր աշակերտները չեն կարող ստեղծագործել, բայց ստեղծագործական հակում ունեցողների հետ կարելի է մի փոքր աշխատել: Նախ՝ աշակերտը պետք է գիտակցի, որ խոսքը պատկերավոր պիտի լինի, արտահայտիչ: Պատկերավորման արտահայտչական միջոցների մասին նախորդ տարիներին 9-րդ դասարանում ուսումնասիրվում էր: Ոճաբանություն էինք անցնում հայոց լեզվից: Ուսուցիչներ կային՝ դժգոհում էին, որ անհասկանալի է, դժվար է ընկալվում: Բայց այդ դասագրքում մանրանասնորեն բացատրվում էր պատկերավորման արտահայտչամիջոցների մասին՝ համեմատություն, փոխաբերություն, մակդիր...

Որևէ ստեղծագործություն ուսումնասիրելիս փորձում եմ աշակերտների ուշադրությունը սևեռել քաղաքի, գյուղի, բնության նկարգություններին:

Այսպես՝ «Եվ քարավանը Աբու- Լալայի՝ աղբյուրի նման մեղմ կարկաչելով...»: Խսահակյանը տեսնենք՝ ինչ պատկեր է ստեղծել քարավանի դանողադրությունը համեմատել է աղբյուրի կարկաչի հետ: Կամ Բակունից «Ալպիական մանուշակ» է ուսումնասիրվում, փորձում եմ աշակերտներին նկատել տալ, թե ինչպիսի պատկերներ է ստեղծել գրողը: Եվ ահա իմ աշակերտուհու գրավորում ընթերցում եմ. «Ես ել իմ երիտասարդ հանրապետության նման՝ 15-ամյա աղջնակս, ծաղկել, փթթել եմ ուզում...»:

Սիամանակ աշակերտների մոտ, ստեղծագործական երևակայությունը զարգացնելու նպատակով, փորձում եմ նյութին ժամանակակից բնույթ տալ:

Ասենք, Պետրոս Դուրյան եմ անցնում. «Աղջիկնե՛ր, պատկերացրեք բանաստեղծի երևակայական գեղեցկութին եք և ձեր հիանալի մի խոսքը նրան կենդանություն կպարզենի, ավելի լավ հոգեկան վիճակ կստեղծի հիվանդ բանաստեղծի համար»:

Եվ ահա այդ «դերին» դժվար համակերպվող աշակերտուիդների մոտ մտքեր եմ նկատում. «Երևակայությամբ ես Դուրյանի մոտ եի,

նույն սեմյակում...նայում էի հիվանդ բանաստեղծին, իսկ նա քընք-շանքով շոյում էր իմ մազերը և շշնջում. «Ես կ'փրկվիմ միայն քեզ-նով...»»:

Աշակերտուիհներից մեկը, ճերմակ ամպի վրա նստած, տեսության է գնում բանաստեղծին, մեկ ուրիշը քամու նվազակցությամբ սիրով պարում է բանաստեղծի հետ: Երևակայական պատկերների ստեղծման արդյունքում տեսնում ենք, որ կարելի է, այսպես ասած, «բանեցնել» աշակերտներին:

Համոզված եմ, որ եթե 20 աշակերտանոց դասարանում 3-4 աշակերտ ստեղծագործական կարողություն է ունենում, դա հաջողութուն է ուսուցչի համար:

**Ուրիշ ի՞նչ ձևերով եք փորձում հետաքրքիր դարձնել դասը:**

**Ես «Լուսարար» թերթի միջոցով ծանորացել եմ Ձեր մերողական, մասնավարժական քննույթի հոդվածներին և միշտ էլ հիսցել եմ Ձեր մկրի բոհշընկ: Ինչպես ու եք կարողանում Դուք աշխատել դասի վրա, ինչպես ու եք պրապումներ անում: Այսօր մեր դպրոցներում, իհարկե, շա պ ու շապ են պակասում պրապող, սկիզբանորդությունը ուսուցիչները:**

Այսօրվա դրությամբ ուսուցիչը, նախկին ավանդական ձևերին կառչած, դժվարությամբ է համակերպվում նոր մեթոդներին: Պատահում է, որ մեկ դասաժամը չի բավարարում ավանդականի ու նոր մեթոդի համատեղությամբ դասը վարել: Շատ հետաքրքիր է խմբային հետազոտության մեթոդը, առավել ևս, եթե տեղեկացնում ես, որ խմբի հինգ աշակերտից այդ առաջադրանքը պետք է ներկայացնի քույլ կարողությունների տեր աշակերտը: Ինչպիսի՝ ոգևորությամբ են մյուս աշակերտները նրան սովորեցնում, որ նա կարողանա լավ ներկայանա, չէ՞ որ խմբի գնահատականը նրանից է կախված: Այսինքն՝ աշակերտակենտրոն ուսուցմանը պետք է նախընտրությունը տալ, որին շատ ուսուցիչներ չեն համակերպվում:

**Եթե Ձեզ հնարավորություն պրվեր դպրոցում քարեփոխումներ կապարելու, ինչի՞ց կոկուիք:**

Երևակ ուսուցիչներից: Միշտ ասում ենք, որ լավ պայմաններ ենք

ուզում, վերանորոգված լինի դպրոցը, պայմանները նորմալ լինեն, բայց արդյո՞ք ուսուցիչն ինչ որ անհաժեշտ է, այն ել կարողանում է փոխանցել աշակերտներին:

Ուսուցիչների ատեստավորում է եղել, որի հանձնաժողովի անդամ եմ եղել: 30-35 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցչի մասին եքեւ տեսչավորման արդյունքում թերություններ են գրանցվում բավականաշափ, ուրեմն նա ուսուցիչ չէ: Ուսուցիչը պետք է ինքն իրեն կատարելագործի:

**Շնորհակալություն, դիկին Պողոսյան, հեղաքարքիր զրոյցի համար: Հուսանը՝ դեռ կհանդիպեար մեր «Հայուհու» հյուրասարահում:**

**Զրոյցը վարեց Մելամյա ՄԻԼՈՆՅԱՆԸ  
12.12.2012թ.**

## ԿՈՉՄԱՆՔ ՀԱՎԱՏԱՐԻՄ

### *Հարցագրույց*

Այսօրվա արցախցի մկրավորականի արժեհամակարգի և աճող սերնդի կրթության ու լաստիարակության մասին է մեր հարցագրույցը Մարդակերպի Վլադիմիր Բալայանի անվան հ. 1 դպրոցի վասրակաշար ուսուցչուհի Նալբաշա ՊՈՂՈՍՅԱՆԻ հետ:

**Տիկին Պողոսյան, Ձեր 34-ամյա մանկավարժական գործունեությունն ի՞նչ ճշմարգության է հանգեցրել և ի՞նչ կարևոր կյանքի դաս է դվել ուսուցչուհի Պողոսյանին:**

Կյանքում միշտ էլ կարևորել եմ աշխատասիրությունը: Ինչ հաջողություններ էլ ունեցել եմ, իմ տքնածան աշխատանքի արդյունքն է: Այդ տարիներին բախվել եմ անարդարության դեպքերի, որ, կարելի է ասել, ինձ փոքր-ինչ ըմբռստ է դարձրել, կրակոտ, բայց միշտ էլ մնացել եմ պետականամետ մի անձնավորություն, որ ապրում է իր երկրի հոգսերով, սիրում է իր հողը, իր ժողովրդին:

Ես պաշտում եմ արարող մարդուն՝ անկախ իր մասնագիտությունից: Մանրամասնել չեմ ուզում, բայց կյանքից շատ դասեր եմ քաղել և դժվարություններին դիմակայելու անհողդող կամքով միշտ էլ հավատարիմ եմ մնացել այն հայտնի համոզմունքին, որ «Աշխատասիրությունն է բոլոր առաքինությունների մայրը»:

**Ո՞ր գործիքներն եք համարում Ձեր և ընդհանրապես, մանկավարժի համար գործունեության ամենաբեղուն շրջանը:**

Իմ մանկավարժական գործունեությունը երկու շրջան է ունեցել: Մինչ Արցախյան պատերազմը մանկավարժի հմայքը չեմ զգացել: Աշխատել եմ պիտներտանը՝ որպես գեղմասպար, գիշերօթիկ միջնակարգ դպրոցում՝ դաստիարակչուհի, հեռակա երեկոյան դպրոցի ուսուցչուհի, շրջամային լուսաշխատողների տան տնօրեն և մեծ ցավ զգացել, որ գերազանց գնահատականներով բուհ եմ ավարտել, բայց զուտ իմ մասնագիտությամբ՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, չեմ կարողացել «տեղավորվել» դպրոցում: Դա իմ

երազանքն է եղել, և այն իրականացավ հետպատերազմյան շրջանում՝ 1996թ., երբ բռնագաղթից հետո, օտար ափերից վերադառնալով, աշխատանքի ընդունվեցի Մարտակերտի ՎԼ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուիհի, որի համար երախտապարտ եմ տնօրեն Լիդիա Պետրոսյանին: Համարյա տասնյոթ տարի է անցել. դա ես համարում եմ իմ մանկավարժական գործունեության ամենաբեղուն շրջանը:

### ***Մեր օրերում ի՞նչ արժեհամակարգ պես է ունենա մրազորականը:***

Սուածին հերթին նա պետք է բարոյական բարձր արժեքներ ունենա: Այստեղ գերիշխող պիտի լինեն ազնվությունը, հաստատակամությունը, ճշմարտացիությունը, հայրենափառությունը... Դրանց կողքին տեսնում եմ նաև մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած մտավորականի կերպար, որն ունի նաև պետական մտածելակերպ:

Լինել հայոց լեզվի և գրականության ուսուցչուիհ՝ կրկնակի պարտավորեցնող է, քանզի մատադ սերնդի արժեհամակարգի ձևավորման գործում հույժ կարևոր դեր է վերապահվում մայրենի ջատագովներին:

### ***Ո՞րն է աշակերդի համար հայոց լեզվի և գրականության անձայրածիր զանշարանի դռները բացելու Ձեր ուկե բանալին:***

Սուանձին զադունիքներ չկան, մեզանից յուրաքանչյուրն իր սաներին սովորեցնում է հայերեն մտածել, որպեսզի հավատարիմ մնան մայրենի յուրահատկություններին, իսկ գրականությունն էլ այն առարկան է, որով կարելի է ներազդել աշակերտի ներաշխարհի վրա:

Բազմաթիվ են իմ այն աշակերտները, ովքեր, հայոց լեզվի և գրականության անձայրածիր գանձարանն ուսումնասիրելով, արդարացրել են իմ սպասելիքները՝ տարիների ընթացքում բարձր միավորներ վաստակելով ԼՆՀ առարկայական օլիմպիադաներում: Վերջին տասը տարվա ընթացքում յոթ տարի շրջանից իմ աշակերտները մասնակցել են հայաստանյան առարկայական օլիմպի-

ադաների եզրափակիչ փուլերին և վերադարձել գովասանագրերով։ Ավելացնեմ, որ նրանք աչքի են ընկել նաև շարադրությունների մրցույթներում։

**Ազգային ինքնազիտակցության ու մարդադի արժեհամակարգի չեավորման գործում դարձյալ կենացրունական դեմքը ուսուցիչն է... Արդյո՞ք այսօր դասդիարակվում է արժեքներ զնահապող սերունդ:**

Ես դրանում ավելի քան համոզված եմ։ Դպրոցական նստարանից է սկսում ձևավորվել հայրենիքի պաշտպանության գաղափարը։ Այսօր դպրոցը հայրենիքի պաշտպանի ձևավորման բարդ ու պատասխանատու աշխատանքն է կատարում։ Այսօրվա սերունդն Արցախյան ազատամարտում հաղթանակած ժողովրդի սերունդն է, իսկ դա մեզ հպարտանալու առիթ է տալիս։

**Ո՞ր կհամարեիր մանկավարժի ծանր ու պայմարեր գործի զնահապականը։ Դուք Ձեզ զգո՞ւմ եք զնահապակած։**

Կրթության և գիտության նախարարությունը միշտ էլ զնահատել է իմ մանկավարժական եռանդն ու ներդրումը՝ արտահայտելով այն հանրակրթության ոլորտի տարբեր մրցութային ու ամփոփիչ արարողությունների ժամանակ (պատվոգրեր և դրամական պարզեցումներ)։

Դեռևս 2001 և 2002 թվականներին երկու տարի անընդմեջ մասնակցել եմ «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին և շրջանում ճանաչվել որպես հայոց լեզվի և գրականության լավագույն ուսուցչուհի։

2011 թ. պարզեւատրվել եմ ԼՂՀ վարչապետի հուշամեդալով։ Այս զնահատանքներին ես արժանացել եմ իմ սաների ձեռք բերած հաջողությունների շնորհիվ։ Մի ներքին հպարտության զգացում կա իմ մեջ, որն ինձ պարտավորեցնում է սիրել ու սիրված լինել, որով ինձ զգում եմ զնահատված։ Այն, որ ուսուցչուհի եմ, դա էլ ինձ հպարտանալու առիթ է տալիս։ Իսկ ինչ վերաբերում է կառավարական բարձր պարզեցումներին, որոնց արժանանում են շատ մանկավարժներ, առաջարկություն ունեմ, որի մասին ամփաներ առաջ դիմել եմ նաև կառավարությանը։ Ինչո՞ւ կրթության համակարգում չկան համապա-

տասխան չափորոշիչներ, որպեսզի դրանց համապատասխանող մանկավարժներն արժանանային կառավարական բարձր պարզեցների: Այդ դեպքում, համոզված եմ, լիովին կապահովվեր արդարության սկզբունքը:

**Զարինե ՍԱՌ-ԱԶՅԱՆ**  
**Ազար Արցախ, 10.01.2013 թիվ**

## ՆԱՏԱՃԱ ՄԻՔԱՅԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆ

### ՈՒՍՈՒՑՉԻ ԻՄ ԹՂԹՎՊԱՆՎԿԵ

Խմբագիր՝  
Սրբագրիչ՝  
Համակարգչային  
շարվածքը՝  
Էջաղբումը՝  
Լուսինե Ղարախանյան  
Զարինե Սառաջյան  
Թամարա Գրիգորյանի  
Լուսինե Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսիթ, լրպագրությունը՝ օֆսիթ, չափսը՝ 60x84/16:  
Ծավալը՝ 9 լրտ. մամուլ: Տպաքանակը՝ 300:

Տպագրվել է «Դիզալ պլոտ» հրատարակչության լրպարանում  
Հ. Հակոբյան 25  
Սրբության պալատ 2013